


ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՅՔ

N-34, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009թ.

«Համալսարանական կրթությանը կանայք» լրատուն թողարկվում է Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի կողմից «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» ծրագրի շրջանակներում եւ նպատակաուղղված է կանանց քաղաքական ակտիվության բարձրացմանը և քաղաքացիական նախաձեռնությունների զարգացմանը:



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ



Լույս թույլատրվում է 2

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

ՋԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՓՈՒԼԸ ԿԱՐՈՂ Է ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ

ՀԱՎԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՅ 4

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 6

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 9

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ՞ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 13

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՅ ՆԿԱՏԱՄԲ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՅԱԿԵՏԵՐԸ

ՄԱԿ-Ի ԿԱՆԱՆՅ ՆԿԱՏԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ 15

ԿԱ՞ ԱՐԴՅՈՒՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 19

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՋԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԿԱՆԱՆՅ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՅՄԱՆ ՆԱԽԱԳՐՅԱԼ 20

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՈՒՄ Է, ԻՆՔՆԱՄՐՏԱՀԱՅՄԱՆ ՉԳՏՈՒՄ

ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 24

ԿԱՆԱՆՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՅԱՅՄԱՆ ՊՈՒՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ 26

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՆ, ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՊԱՐՋ:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 27

ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԻԱՐԺԵՔ ԱՆԴԱՄՆԵՐ, ՀԱՂՈՒՎԱՐԵԼՈՎ ԱՆՎԱՍԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ, ՉԵՌՆԱՄՈՒԽ ԼԻՆԵՆՔ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾԵՐԻ 30

ՂԵԿԱՎԱՐ ԿԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՒՄ Է ՆԱԵՎ ԻՐ ՄԵՈՒԸ 30

ԿԱՆԱՆՅ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՄԱՆՈՒԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՈՐՊԵՍ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ՄԱՆԱՃՅՈՒԼԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՉՐԱՅՆՈՂ ԳՈՐԾՈՆ 32

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԲԱՐԴ ՈՒ ԴԺՎԱՐԻՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՅԱՅՄԱՆ ՊՈՒՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԷԱԿԱՆ ԴԵՐ Է ՎԵՐԱՊԱՀՎԱԾ 34

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԵԿՏՐ ԵՎ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ 36

ԿԱՆԱՅՔ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԼԻԿԵՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԿԱՆԱՆՅ ԼԻԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՒՄՆԵՐԸ 38

ԿԱՆԱՅՔ ՓՈՐՁԻ ՓՈՒՏԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ 39

ԱՐԱՐԱՏԻ ԼԻԿԵՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՄ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ 41

ԿԱՆԱՆՅ ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՋԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱԳՐՅԱԼ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԵՄՔՈՎ ՇՐՋՎԵԼ ԴԵՊԻ ՄԱՐՁԵՐ 43

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԵՆՈՒԹՅՈՒՆԸ 45

ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՄՏԱՅԱԾԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄ 46

ԿԱՆԱՆՅ ՇԱՐՔՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԿԱՆԱՆՅ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 47

ՀԱՅ ԿԱՆԱՆՅ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԸՈՐԺԸՆԹԱՅՐ XX ԴԱՐՈՒՄ 50



Լույս թունելի վերջում

Միանգամայն ակնհայտ է, որ մարդու իրավունքների պաշտպանությանը կոչված ոչ բոլոր կառույցների կողմից և ոչ միշտ է իրականացվում հետևողական աշխատանք՝ ուղղված մարդու իրավունքների խախտումների վերացմանը: Մարդու իրավունքների հիմնախնդիրը լայն սպեկտրով դիտելիս չենք կարող չնշել, որ փոխակերպումների պայմաններում ձևավորվող քաղաքացիական հասարակությունը դեռևս չի դարձել այն իրական ուժը, որը կատանձնի սեփական իրավունքների պաշտպանության հարցում քաղաքացիներին աջակցելու կոչված բոլոր ինստիտուտների և կառույցների վրա ազդող գործոն հանդես գալու ողջ պատասխանատվությունը: Չենք կարող չնկատել նաև, որ հասարակության ներսում չի ձևավորվել քաղաքացիների հավաքական պատասխանատվությունը սեփական իրավունքները պաշտպանելու համար:

Խոսելով կանանց՝ սեփական իրավունքները իրացնելու հնարավորությունների մասին, հեռու ենք այն մտքից, թե տղամարդիկ իրավունքների պաշտպանության խնդիրներ չունեն: Խոսքը մարդու իրավունքների ոտնահարման որոշակի փաստերի կամ մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման տարածված ձևերի մասին չէ, որոնց բախվում են ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Համենայն դեպս, մեր իրականության վերլուծությունը բացահայտում է մարդու իրավունքների բավական տարածված խախտումներ, որոնց բախվում են ամեն օր:

Հասարակական գիտակցության մեջ դեռ պահպանվում է այն տեսակետը, թե Հայաստանում սեռի վրա հիմնված խտրականություն չկա: Այնուամենայնիվ, իրավաբանորեն ամրագրված սահմանադրական իրավունքները փաստացի չեն բացառում կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները, որոնց հիմքն իրական կյանքում որոշումների կայացման մակարդակի քաղաքական պաշտոնների և պետական իշխանության մարմինների՝ կանանց համար ոչ հավասար հասանելիությունն է, տղամարդկանց և կանանց անհավասար դիրքերը տնտեսական ոլորտում և տնտեսական ու ֆինանսական ռեսուրսների ոչ հավասար մատչելիությունը:

Հայաստանում կանանց և տղամարդկանց քաղաքացիական, քաղաքական և տնտեսական իրավունքների իրացման հնարավորությունների գնահատմամբ բացահայտվում է, որ կանայք, կազմելով երկրի բնակչության 51,8%-ը, իրենց սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման առումով չունեն նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ:

Չնայած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վավերացրել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր չևերի վերացման մասին և Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիաները, որոնց համաչայն՝ պետությունը պարտավորվում է ընդլայնել կանանց իրավունքների իրացման հնարավորությունները, այսուհանդերձ, գործնականում բացառված չեն կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները:

Կանանց քաղաքական իրավունքների իրացումը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ պետության և իշխող քաղաքական կուսակցությունների քաղաքականությունից, ինչպես նաև, անկասկած, կանանց՝ սեփական քաղաքական իրավունքներն իրացնելու ձգտումից: Ներկայացուցչական ժողովրդավարության մարմնի՝ Ազգային ժողովի ընթացիկ գումարման կազմում կանանց բաժին է ընկնում պատգամավորների ընդհանուր թվի ընդամենը 8,6%-ը, ընդ որում՝ խորհրդարանի 12 մշտական հանձնաժողովներից 7-ում կին անդամ չկա:

Հանրահայտ ճշմարտություն է այն փաստը, որ գործադիր իշխանության բարձրագույն ատյաններում կանանց քաղաքական իրավունքների իրացումն ամբողջովին կախված է յուրաքանչյուր պետության ղեկավարության քաղաքական կամքից: Վերջին տարիների միտումները վկայում են կառավարման այդ մակարդակներում կանանց ներկայացվածության նվազման մասին. ընդամենը երկու կին է նշանակվել նախարար, իսկ 65 փոխնախարարներից միայն մեկն է կին: Վաղուց ի վեր կանայք ներկայացված չեն այնպիսի նախարարությունների ղեկավար կազմում, ինչպիսիք են կրթության և գիտության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, չնայած այդ համակարգերում աշխատողների ավելի քան 70%-ը կանայք են: Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնողների թվում կանանց մասնաբաժինն ընդամենը 11% է:

Գեներալային անհավասարակշիռ վիճակը պահպանվում է նաև մարզպետարանների, քաղաքապետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար պաշտոններում: Նույնիսկ այն փաստը, որ վերջապես Շիրակի մարզպետ կին է նշանակվել, չի թուլացնում այդ մարմիններում գեներալային թերներկայացվածության խնդրի հրատապությունը: 19 փոխմարզպետներից միայն մեկն է կին:

Ժողովրդավարական վերափոխման ողջ ժամանակաշրջանում 48 քաղաքապետների և 51 փոքր քաղաքապետների թվում գեթ մեկ կին չի եղել: Վերջին 10 տարիներին Երևանի քաղաքապետի տեղակալի պաշտոնում երբևիցե կին չի նշանակվել: Կանայք բացակայում են նաև մայրաքաղաքի 12 համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների շարքերում: Այսպիսով, չնայած հանրապետության օրենսդրությամբ ամրագրված բավական լայն իրավունքներին, իրականում խտրականություն գոյություն ունի կանանց նկատմամբ, որը հաճախ, որպես այդպիսին, չի ընկալվում՝ պայմանավորված հասարակությունում կանանց դերի մասին կարծրատիպային քարացած պատկերացումներով:

Չնայած կրթվածության բավական բարձր մակարդակին՝ կանանց քաղաքացիական ներուժը ներգրավված չէ երկրի վերափոխման և զարգացման գործընթացներում. կանանց դերը երկրի քաղաքական և հասարակական կյանքում խիստ սահմանափակ է: Ի հետևանս՝ շարունակում է նվազել կանանց ազդեցությունը պետական քաղաքականության, հասարակական և տնտեսական գործընթացների վրա:

Կառավարման համակարգի որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայությունը հակասում է ներկայացուցչական ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին՝ արգելակելով կառավարման ողջ համակարգի ժողովրդավարացման տեմպը և հանգեցնելով, ընդհանուր առմամբ, ժողովրդավարության պակասուրդի:

Կանանց քաղաքական իրավունքների իրացումը խոչընդոտող գործոններից և պատճառներից հարկ է հիշատակել ներկուսակցական ժողովրդավարության ցածր մակարդակը, որի հետևանքով կանայք հավասարակշիռ կերպով ներկայացված չեն համամասնական ընտրակարգով խորհրդարանի ընտրությունների կուսակցական ցուցակներում, ինչպես նաև կին կադրերի պատրաստման համակարգի բացակայությունը և քաղաքական կուսակցությունների ղեկավարության դժկամությունը՝ ապահովելու կանանց առաջխաղացումը թե՛ կուսակցական, թե՛ պետական կառավարման ղեկավար մարմիններում: Հետևանքն այն է, որ կառավարման համակարգի քաղաքական որոշումների կայացման մակարդակում կանանց մասնակցությունը սահմանափակելու միջոցով տեղի է ունենում խտրականություն կանանց նկատմամբ, և խախտվում են նրանց քաղաքական իրավունքները:

Մի երկրում, որտեղ բարձրագույն կրթություն ունեցողների թվում կանանց մասնաբաժինը գերազանցում է 60%-ը, որտեղ քաղաքական կուսակցությունների անդամների կեսը կանայք են, ընդ որում՝ այդ մասին իրենց ելույթներում հայտարարում են կուսակցությունների առաջնորդները, դժվար է համաձայնել այն պնդումներին, թե կին կադրեր չկան, կամ այն «առասպելին», թե կանայք իրենք չեն ցանկանում մասնակցել քաղաքական կյանքին: Հարկ է արձանագրել, որ կառավարման «տղամարդկային» ոճի պատճառով կանայք հնարավորություն չունեն իրացնելու իրենց քաղաքական իրավունքները. «...իշխանություն կրող տղամարդկանց համար դժվար է իշխանությունը զիջել կանանց»:

Երևո՞ւմ է լույս բունելի վերջում:

ՀՀ Ազգային ժողովի հաստատած ՀՀ կառավարության 2008-2012 թթ. Ծրագրում՝ առաջնահերթությունների թվում նշված է, որ «նպատակադրելով հանրային համերաշխության հաստատումը, սոցիալական պետության կերտումը և սոցիալական արդարության արմատավորումը՝ կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու ... գեներալային հավասարության՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը»:

Դա որոշակի վստահություն է ներշնչում, որ մոտ հեռանկարում երկրում հնարավոր են դրական փոփոխություններ:

Չեմմա Հասրաթյան
 Համալսարանական կրթությանը
 կանանց ասոցիացիայի նախագահ,
 մանկավարժական գիտությունների թեկնածու

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ



ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՓՈՒԼԸ ԿԱՐՈՂ Է ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ



Չեմնա Հարաթյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Գենդերի՝ որպես սոցիալ-մշակույթային նոր հարացույցի և գենդերային հավասարության՝ որպես էգալիտար ժողովրդավարական նոր հարաբերությունների մշակույթի ընկալման գործընթացը բավական բարդ ու հակասական էր Հայաստանում: Եզրույթն ինքնին՝ որպես խորթ, դրսից պարտադրվող մի երևույթ մերժում էր հարուցում:

Լայն տարածում էին գտել որոշ առասպելներ, թե.

- **գենդերը հակասում է հայ մշակութային** (նշենք, որ հայ ժողովրդի ողջ պատմությունը հաստատում է, որ կանայք էական դեր են ունեցել երկրի կյանքում, իսկ դեռ 1918-1920 թթ. Հայաստանի առաջին խորհրդարանի ընտրություններում կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք են ունեցել),
- **գենդերը խարխլում է հայ ավանդական ընտանիքի հիմքերը** (իսկ հայերի համար ընտանիքը սրբություն է),
- **գենդերը օտարամուտ, խորթ մշակույթ է**, մշակույթների համընդհանրացումը կհանգեցնի հայ ազգի ինքնության կորստյան:

Միանգամայն ակնհայտ է, որ այս և այլ փաստարկների հիմքում ցածր իրազեկությունն է ընկած, մեղմ ասած՝ իրավական և քաղաքական անգրագիտությունը: Գենդերի և գենդերային հավասարության՝ որպես զարգացման ժողովրդավարական ուղին ընտրած երկրի ժողովրդավարական մշակույթի քաղաքական բաղադրիչի մասին բնակչության իրազեկությունը բարձրացնելու խնդիրը ստանձնեցին մի շարք

հասարակական կազմակերպություններ:

1995-1996 թթ. գրեթե միաժամանակ ստեղծվեցին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի, Վանաձորի և Գյումրու մանկավարժական ինստիտուտների գենդերային հետազոտությունների կենտրոնները, որոնք բավական հետևողականորեն մեկօրյա և երկօրյա սեմինարների միջոցով գենդերային գիտելիքները տարածում էին բնակչության տարբեր շերտերի, մասնավորապես՝ կանանց և ուսանողների շրջանում:

Գենդերային կրթության ինստիտուցիոնալացմանը զուգընթաց կատարվում էր իշխանական կառույցների լոբբինգի գործընթաց՝ նրանց կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով: ՅՈՒՆԻՖԵՄ-ի հետ գործընկերությամբ կանանց 8 հասարակական կազմակերպություններ կատարեցին երեք հիմնարար փաստաթղթերի՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի զարգացման նպատակների, ինչպես նաև ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դիտողությունների իրականացման մոնիթորինգ: Այնուհետև անցկացվել է Հայաստանում գենդերային իրավիճակի մոնիթորինգ, և արդյունքներն ամփոփվել են ՀՀ նախարարություններում: Հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում խտրական գործելակերպի և գենդերային անհավասարության վերլուծությունը վեր հանեց երկրի իրական գենդերային իրավիճակը:

Իրականացվող աշխատանքը նպաստեց գենդերային հիմնախնդրի նկատմամբ իշխանական կառույցների վերաբերմունքի փոփոխմանը, հիմք ստեղծեց հիմնախնդիրը ճիշտ հասկանալու համար և առաջին պլան մղեց որոշակի միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը:

Կառավարության երկու ծրագրերը (1998-2003 թթ. և 2004-2010 թթ.) միտված էին կանանց վիճակի բարելավմանը, և հետաքրքիր է, որ երկրորդ ծրագրում կանանց հասարակական-քաղաքական մասնակցությունը դիտարկվում է սուսկ հասարակական կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու համատեքստում:

Հիմնախնդրի նման ըմբռնումը նոր խնդիր առաջ բերեց՝ բարձրացնել բոլոր մակարդակների իշխանական կառույցների աշխատողների իրազեկությունը: Կառավարման բուրգի հայրիշխանական մշակույթը գենդերայնորեն զգայուն որոշումների կայացման հիմնական խոչընդոտն էր: Հենց այստեղ էին մեր բոլոր հիմնախնդիրները և խոչընդոտները:

Կարևոր է, որ եզրույթի առնչությամբ իշխանության կառույցների հետ տարվող աշխատանքը չվերածվեր ձևականության, այլ բացահայտեր դրա էության առավել խորքային հիմնախնդիրները. գենդերային մոտեցման ներդրումը հասարակության կենսագործունեության և զարգացման բոլոր ոլորտներում նպատակ ունենալու փաստաթղթերի ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար հասարակական արտադրության և դրա կառավարման համակարգի հավասար մատչելիությունը, այդ թվում՝ որոշումների կայացման մակարդակում: Կարևոր էր ցույց տալ, որ Հայաստանի զարգացումը մեծապես կախված է զարգացման գործընթացում երկրի մտավոր ողջ ներուժի ներգրավումից, իսկ կանայք կազմում են բնակչության 51,8 տոկոսը և բարձրագույն կրթությամբ անձանց 60 տոկոսը:

Ասոցիացիան անհրաժեշտ ծավալով գիտելիքներ և երկրի ու առանձին տարածաշրջանների ծրագրերի, զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, ինչպես նաև բյուջեի գենդերային վերլուծության հմտություններ հաղորդելու նպատակով անցկացրել է երեք սեմինար Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների, անդամների ու փորձագետների համար, երկու սեմինար՝ նախարարությունների ղեկավար աշխատողների և երկու սեմինար՝ իշխանության տարածքային մարմինների համար: Մասնավորապես, մեծ աշխա-

տանք է անցկացվել Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի փաստաթղթերին ու երաշխավորություններին ծանոթացնելու ուղղությամբ:

Բեկումը տեղի ունեցավ միայն 2007 թ.՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման մասին երկրի հերթական գեկույցի պատրաստման գործընթացում: Մինչ այդ անհրաժեշտ էր երկրում ձեռնարկել մի շարք միջոցներ, որոնք ցույց կտային Հայաստանի՝ եվրոպական կանոնները պահպանելու պատրաստակամությունը:

2008 թ. ընդունված և Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագրում **առաջին անգամ նախատեսվել է ապահովել գենդերային հավասարություն սոցիալ-տնտեսական բոլոր ոլորտներում:**

Իսկ 2008 թ. ՀՀ կառավարության խնդրանքով ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի միջոցով կազմավորեց փորձագետների երկու անկախ խումբ, որոնք մշակեցին երկու կարևոր փաստաթղթերի՝ **«Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգը և իրականացման ռազմավարությունը» և «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի** նախագծերը:

Շատ կարևոր է, որ **«Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կախարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկը հաստատվելու մասին»** ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2009 թ. մայիսի 6-ին ստորագրած կարգադրությունում այդ երկու փաստաթղթերն ընդգրկվել են 2009 թվականի ընթացքում ընդունման ենթակա փաստաթղթերի ցանկում:

Սկսված աշխատանքները օժանդակելու և շարունակելու դեպքում զարգացման հետագա փուլը կարող է արդյունավետ լինել, քանի որ բոլոր նախադրյալները կան թե՛ բոլոր ոլորտներում, թե՛ կառավարման բոլոր մակարդակներում և թե՛ բնակչության շրջանում գենդերային հավասարակշռության հասնելու և էզալիտար մշակույթ ձևավորելու կարևորության ըմբռնման տեսանկյունից:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



Արտակ Հովհաննիսյան

Գյումրու պեդագոգիկ մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս

Ամեն մի հասարակական հարաբերություն լայն առումով քաղաքական համակարգի բաղկացուցիչ տարր է: Սակայն շատ դեպքերում քաղաքական համակարգ հասկացությունը շփոթվում է քաղաքական համակարգի տեսակներից կամ քաղաքական համակարգի գործառույթներից որևէ մեկի հետ: Ահա ինչու առաջին հայացքից ծեծված թվացող այս ճշմարտությունը խանգարում է տեսնել քաղաքական համակարգում գենդերային հարաբերությունների տեղն ու նշանակությունը: Ելնելով վերոհիշյալից՝ նախ տանք քաղաքական համակարգ հասկացության առավել ընդունված սահմանումը:

Հասարակության քաղաքական համակարգը իրավունքի և այլ սոցիալական նորմերի հիման վրա կարգավորված ինստիտուտների՝ պետության, քաղաքական կուսակցությունների, հասարակական կամ ոչ կառավարական կազմակերպությունների համակցություն է, որի շրջանակներում ընթանում է հասարակության քաղաքական կյանքը և իրականացվում քաղաքական իշխանությունը:

Գենդերային հարաբերությունների դերի ու նշանակության մասին կան բազմաթիվ ուսումնասիրություններ, ուստի փորձենք անդրադառնալ այն հարցին, թե քաղաքական համակարգն իր գործունեության ընթացքում ինչպես է ներառում գենդերային հարաբերությունները: Մեկ այլ խնդիր է ցույց տալ, թե ինչպես են քաղաքական համակարգի քաղադրատարրերն իրենց գործառույթներում կարգավորում գենդերային հարաբերությունները: Պատմական զարգացման ընթացքում մարդկությանը հայտնի են եղել բազմաբնույթ, նույնիսկ իրարամերժ քաղաքական համակարգեր, սակայն բոլորն էլ, առանց բացառության, ուրույն ձևով են կարգավորել գենդերային հարաբերությունները: Խնդիր չդնելով որակելի կարգավորման բնույթը՝ փորձենք պարզապես ցույց տալ գենդերային հա-

րաբերությունների տեղն ու նշանակությունը քաղաքական համակարգում: Այս ամենը ցույց տալու համար չափազանց կարևոր է ներկայացնել քաղաքական համակարգի կառուցվածքը, տեսակները և գործառույթները:

Կառուցվածքը և քաղադրատարրերը

- Հասարակական-քաղաքական կազմակերպություններ (պետություն, ՀԿ-ներ, կուսակցություններ): Մրանք քաղաքական համակարգի սուբյեկտներն են և, որպես այդպիսիք՝ կարգավորիչ և սահմանող գործառույթներ ունեն գենդերային հարաբերություններում:
- Քաղաքական գիտակցություն (իշխանության գաղափարական կողմը և մարդկանց հոգեբանությունը): Սա նաև այն սովորույթային հենքն է, որի վրա կառուցվում է գենդերային քաղաքականությունը:
- Սոցիալ-քաղաքական և իրավական նորմեր: Մրանք կարգավորում են հասարակական-քաղաքական կյանքը: Մեզ մոտ խզում կա սրանց միջև: Պետական գաղափարախոսությունը և իրավական նորմերը համապատասխանում են ժամանակակից չափանիշներին, իսկ սոցիալական նորմերը այլ հարթությունում են: Գենդերային հարաբերություններում սա ներկայանում է որպես ամենախնդրահարույց փաստ:
- Քաղաքական հարաբերություններ: Մրանք ձևավորվում են քաղաքական համակարգի սուբյեկտների միջև: Հատկապես դասական են իշխանություն-ընդդիմություն հարաբերությունները: Գենդերային հարաբերություններում այս քաղադրատարրը կատարում է հղկման և կատարելագործման գործառույթ:
- Քաղաքական գործելակերպ: Այս դեպքում նկատի է առնվում երկրի քաղաքական փորձն ու գործունեությունը: Այստեղ է գենդերային հարաբերությունների ամենօրյա իրականացումը:

Քաղաքական համակարգի տեսակները

Ըստ չևի՝ բոլորին բնորոշ է գենդերային հարաբերությունների առկայությունը, սակայն դրանց գործնական իրականացումը խիստ տարբեր է.

մոնիստրական, բազմակուսակցական, բաց, փակ.

ըստ ռեժիմի՝

տրոյալիստ, ավտորիտար, դեմոկրատական.

ըստ դասակարգերի՝

սարկազիստական, ֆեոդալական, կապիտալիստական, սոցիալիստական.

ըստ բովանդակության՝

ազատական, կոմունիստական (համայնավարական), պոպուլիստական (ամբոխահան), պահպանողական:

Քաղաքական համակարգի գործառույթները

1. Ադապտացիա (հարմարում). քաղաքական համակարգը պետք է հարմարվի հասարակության օբյեկտիվ պահանջներին:
2. Քաղաքական սոցիալականացում. հիմնական նպատակն է՝ գաղափարախոսական առումով սոցիալականացնել հասարակության յուրաքանչյուր անհատի:
3. Քաղաքական արձագանքում. արձագանքել դրսից եկող ազդանշաններին և համապատասխան լուծումներ տալ:
4. Կարգավորում. հասարակական կյանքի բոլոր ոլորտների ներդաշնակ կարգավորում:
5. Էքստրակցիա. դրսից վերցնել ռեսուրսներ և կիրառել հասարակական բոլոր հարաբերություններում:
6. Բաշխում. հասարակական հարստության բաշխումը սոցիալական խմբերի միջև:

Դժվար չէ նկատել, որ եթե քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտները գործեն ըստ դասական մոդելի, ապա կլինի քաղաքացիական հասարակություն, որն էլ ցանկացած հասարակական հարաբերության (այդ թվում՝ գենդերա-

յին) կարգավորման արդյունավետ ուղին է: Քաղաքական համակարգի կառուցվածքային բաղադրատարրերից ամենակարևորը՝ պետությունը, իր գենդերային քաղաքականությունն իրականացնելիս նախ և առաջ օրենսդրորեն ամրագրում է գենդերային հարաբերությունները: Չափազանց կարևոր է նաև միջազգային փաստաթղթերի վավերացումը: Կանանց իրավունքների ճանաչումը և օրենսդրորեն ամրագրումը հենց այս գործընթացի արդյունքն է: Այս հարցում ՄԱԿ-ի վարած համաշխարհային նշանակության քաղաքականությունը հավասարապես վերաբերում է բոլոր պետություններին, միջպետական և ոչ կառավարական կազմակերպություններին ու հաստատություններին և համընդհանուր արժեք ունեցող հարաբերությունների կարգավորման և հիմնահարցերի լուծման նպատակ է հետապնդում:

Քաղաքական համակարգի մյուս կարևոր բաղադրատարրը՝ հասարակությունը, այդ թվում նաև՝ հասարակական, քաղաքական, կրոնական կազմակերպությունները գենդերային հարաբերությունների կարգավորման առումով, կարելի է ասել, լակմուսի դեր է կատարում:



Հասարակական գիտակցությունից կարծրատիպերն արմատախիլ անելու և կանանց իրավունքների գաղափարը լիարժեք ընդունելու հարցում քաղաքական համակարգի այս տարրի դերն անգնահատելի է: Եվ հենց այստեղ, կարելի է ասել, գենդերային հարաբերությունների կարգավորմանն իրենց նպաստն են բերում իրավական և սոցիալական նորմերը: Առաջինը բխում է պետությունից, երկրորդը՝ հասարակությունից: Սրանց խզումը կամ անհամաչափ զարգացումը առաջացնում է գենդերային հարաբերությունների անհավասարակշռություն և

անկանոնություն: Այս հարցում խզումը իրավական և սոցիալական նորմերի միջև համագործակցության սոցիալական դիրքի, դերի և մշակութային դիրքի միջև խզման: Այստեղ օգնության կարող են հասնել քաղաքական համակարգի մյուս բաղադրատարրերը՝ քաղաքական հարաբերությունները և քաղաքական գործելակերպը:

Ունենալով սոցիալական տարբեր ուղղվածություն՝ քաղաքական հարաբերությունները կարող են ուղղված լինել գենդերային հարաբերությունների ամրապնդմանը: Քաղաքական փորձի արդյունքում կարելի է հասնել իրավական և սոցիալական նորմերի միաժամանակյա օրինաչափ զարգացման, որն էլ իր հերթին գենդերային հարաբերությունների ճիշտ կարգավորման լավագույն ուղին է: Քաղաքական փորձը կարող է նաև հաղթահարել սոցիալական, այդ թվում՝ գենդերային բախումները, որոնք կարող են առաջանալ հասարակությունում գործող տիրապետության և ենթակայության հարաբերությունների արդյունքում:

Իրականացնելով իր գործառնությունները՝ քաղաքական համակարգը մշակում է նաև երկրի գենդերային քաղաքականությունը: Ունենալով հարմարման գործառնությամբ՝ քաղաքական համակարգը պետք է կարողանա ճկունություն ցուցաբերել և հարմարվել հասարակական այն պահանջներին, որոնք ազդեցություն կարող են ունենալ գենդերային հարաբերությունների վերանայման վրա: Այստեղ քաղաքական համակարգը պետք է կատարի անհատի այնպիսի սոցիալականացում, որ յուրաքանչյուր ոք ոչ միայն իմանա իր իրավունքները, ինչը կնշանակի սոսկ պասիվ սոցիալականացում, այլև գործնականում կիրառի այդ իրավունքները: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ հասարակության մեջ չձևավորվի սոցիալականացման կախումնային տեսակը, որի հետևանքով միջխմբային պայքարը և փոխադարձ դիմակայությունը կարող են ոչ թե կարգավորել, այլ բևեռացնել գենդերային հարաբերությունները: Ի վերջո, սոցիալականացման նպատակը մշակույթի յուրացման, արժեքային կողմնորոշման, հասարակական կյանքում անհատի լիարժեք ընդգրկման ճանապարհով քաղաքակրթելու գործընթաց է: Սոցիալականացման և գենդերային հարաբերությունների ուղղակի կապն ավելի կամքողջանա և ակնառու կդառնա, եթե չմոռանանք, որ սոցիալականացման ամենակարևոր ինստիտուտներից մեկը ընտանիքն է, որը նաև յուրաքանչյուր

անհատի մեջ գենդերային մտածողության և պատկերացումների ձևավորման առաջին գործոնն է, քանի որ մեկ սերնդից մյուսին է փոխանցում որոշակի արժեքներ:

Գլոբալացման դարաշրջանում գործող քաղաքական համակարգերի համար չափազանց կարևոր է այս խնդրում ճիշտ արձագանքել դրսից եկող ազդակներին և ազգային մտածողության ու կենսակերպի համադրմամբ նպաստավոր լուծումներ գտնել՝ ըստ այդմ էլ կարգավորելով հասարակական կյանքը:

Գենդերային հարաբերությունները կարգավորելիս կամ գենդերային քաղաքականություն մշակելիս յուրաքանչյուր քաղաքական համակարգ ստիպված է ոչ միայն հաշվի առնել, այլև հաշվի նստել միջազգային ընդունված չափանիշների հետ: Դրա համար իրականացնելով իր էքստրակցիոն գործառնությամբ՝ քաղաքական համակարգն այս հարցում նույնպես դրսից ռեսուրսներ վերցնում է: Դրանք գենդերային ոլորտում միջազգային փաստաթղթերն են՝ հռչակագրեր, համաձայնագրեր, կանանց համաշխարհային կոնֆերանսներում ընդունված սկզբունքներ, որոնք փորձում են կիրառել ներպետական օրենսդրությունները մշակելիս և գենդերային բնույթի օրենքներ ընդունելիս: Հատկապես կարևոր է 1995 թ. Պեկինյան հռչակագրի և գործողությունների ծրագրի իրականացումը: Գենդերային հայեցակետի վերանայումը բոլոր պետական ինստիտուտներում, ռազմավարություններում, և՛ տղամարդկանց, և՛ կանանց պահանջումների հավասարապես վերլուծումը կարող են էքստրակցիոն գործառնությի լավագույն դրսևորում լինել:

Միայն այս ամենից հետո քաղաքական համակարգը կարող է իրականացնել իր բաշխիչ գործառնությամբ: Գենդերային հարաբերությունների առումով այստեղ նկատի է առնվում իրական իրավահավասարությունը, կանանց և տղամարդկանց միջև դերերի հավասար բաշխումը, իրավունքների իրականացման հարցում հավասար բաշխումը: Այս ամենը նույնպես կարելի է համարել հասարակական հարստություն:

Այսպիսով, գենդերային հարաբերությունների ճիշտ կարգավորումը քաղաքական համակարգի կողմից յուրաքանչյուր հասարակության համար խիստ դրամատիկ պահ է, որը, մի կողմից, կարող է ապակայունացնել, մյուս կողմից՝ կարող է հասարակության, պետության զարգացման նոր փուլի սկիզբ լինել:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ



Ելենա Վարդանյան

Ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի ղեկավար, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

Արդի Հայաստանում անդրադարձը գենդերային հիմնախնդրին հնարավորություն է տալիս նկատելու էական փոփոխություններ գենդերային դիսկուրսում: Ջգալիորեն ընդլայնվել է այն մարդկանց շրջանակը, ովքեր իրազեկ են և քննարկում են գենդերային հիմնախնդիրներն ու գենդերային հարաբերությունները հասարակության մեջ: Հանրապետությունում ձևավորվել է «գենդերային ընկերակցություն», որը զբաղվում է գենդերային հետազոտություններով, կրթությամբ, փորձաքննությամբ և կյանքի տարբեր ոլորտներում գենդերի ինստիտուցիոնալացմամբ: Այսօր արդեն ոչ ոքի չի զարմացնում օտար եզրույթը, ավելին՝ գենդերը ներթափանցում է պետական քաղաքականություն: Հայտնի է, որ Հայաստանի կառավարությունը ստորագրել է մի շարք միջազգային փաստաթղթեր՝ սկսած Պեկինյան գործողությունների ծրագրից, ստանձնել է պարտավորություններ եվրոպական համագործակցության ուղղությամբ, Ազգային ժողովը վավերացրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և դրա կամրատիր արձանագրությունը և այլն: Սակայն այդ ձեռնարկումները, ինչպես նաև ժողովրդավարական շատ նորամուծություններ հաճախ ձևական բնույթ են կրում և չեն հասնում նպատակին ինչպես համապատասխան կոնվենցիաների պահանջների իրականացման մեխանիզմների, այնպես էլ նման մեխանիզմներ ստեղծելու քաղաքական կամքի բացակայության պատճառով: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի Հայաստանի պետական գենդերային քաղաքականության հայեցակարգի հարցադրումը:

Պետական գենդերային քաղաքականություն-

նը՝ որպես իր հիմքում հասարակության մեջ գենդերային հարաբերությունների ձևավորման վրա անմիջականորեն ներազդող ծրագրեր ու ռազմավարություն ունեցող քաղաքականության իրական բաղադրիչ մաս, հետաքրքրություն է ներկայացնում: Ընդ որում՝ յուրաքանչյուր հասարակություն ունի իր որոշակի գենդերային դիսփլեյը, որն արտացոլում է նրա սոցիալ-մշակութային և քաղաքական ավանդույթները: Եվ դրանք, անշուշտ, ազդում են քաղաքականության վրա՝ ներմուծելով գենդերային անհամաչափություն կամ գենդերային հավասարություն, գենդերային բախում կամ հանդուրժողականություն:

Ավանդական պատմական և քաղաքական հետազոտություններում գենդերային հարաբերություններն ու գենդերային քաղաքականությունը չեն դիտարկվում, բայց երբեմն դրանք առկա են կանանց նկատմամբ քաղաքականության ուսումնասիրման տեսանկյունից: Իր հերթին, կանանց նկատմամբ քաղաքականությունը գենդերային հետազոտություններում ներկայանում է որպես կանանց և հասարակության փոխհարաբերությունների գաղափարախոսական հայեցակարգ, որը գոյություն ունեցող սոցիալական կարգի արդարացման ինտելեկտուալ գենը է: Նման քաղաքականությունը հանգեցրել է տղամարդկանց և կանանց միջև հանրային և մասնավոր ոլորտների բաժանման օրինաչափության ընդունմանը և հասարակության մեջ ամրագրել է գենդերային հարաբերությունների հայրիշխանական բնույթը: Եվ նույնիսկ կանանց իրավաբանական իրավահավասարության և հասարակական արտադրությանը մասնակցելու իրավունքի ճանաչման վրա հիմնված հովանավորչական քաղաքականությունը, հասարակության մեջ կանանց կարգավիճակների ձևավորման գործում առաջնությունը տալով պետությանը, նույնպես հայրիշխանական բնույթ ունի: Ինչպես վկայում է արդյունաբերական և հետարդյունաբե-

րական հասարակությունների մեծ մասի փորձը, հանրային և մասնավոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքները և հնարավորությունները կանանց նկատմամբ քաղաքականության միջոցով հավասարեցնելու ցանկացած փորձ չի կարող բացառել կանանց նկատմամբ խտրականությունը զբաղվածության և քաղաքականության ոլորտում: Ժամանակակից հասարակություններում կազմավորված գենդերային իրողությունները հաստատում են նոր տիպի պետական քաղաքականության մշակման անհրաժեշտությունը, որը պետք է դուրս գա կանանց նկատմամբ քաղաքականության շրջանակներից և ներառի գենդերային հավասարության հասնելու ռազմավարությունը:

Քաղաքական համակարգի փոփոխման և ժողովրդավարական սոցիալական ու քաղաքական նոր հարաբերությունների ձևավորման պայմաններում պետական քաղաքականության առաջնություններն են դառնում ոչ այնքան հավասարությանը, որքան հասարակության մեջ սեռերի փոխհարաբերությունների նոր սկզբունքների ձևավորմանն ուղղված միջոցները: Ուստի պահանջվում է հիմնավոր, գենդերայնորեն կողմնորոշված պետական քաղաքականություն: Գենդերային մոտեցման հիմնավորումը և գործողությունների որոշակի ծրագրի մշակումը ռազմավարական բնույթ ունեն: Այդ մասին խոսվել է դեռևս Պեկինի խորհրդաժողովում, որի փաստաթղթերում առաջարկվում է ինստիտուցիոնալացնել գենդերը քաղաքական հարաբերություններում և համակարգերում: Պետական քաղաքականության մեջ գենդերի ինստիտուցիոնալացում նշանակում է, առաջին հերթին, պետության կողմից այնպիսի քաղաքականության իրականացում, որն ուղղված է գենդերային հավասարության ապահովմանը: Պեկինյան գործողությունների ծրագիրը, ըստ էության, սեռերի իրավահավասարության նկատմամբ համալիր մոտեցման ռազմավարություն է: «Ովքե՞ր են հնարավոր գործող անձինք համալիր (գենդերային) մոտեցման կիրառման դեպքում» հարցին Ն. Շվեդովան միջազգային ինստիտուտների, ՉԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների հետ մեկտեղ հատուկ առանձնացնում է գենդերային մոտեցման իրականացման այնպիսի սուբյեկտների, ինչպիսիք են գործնականում գենդերային մոտեցում կիրառող պետական կառույցները և տղամարդկանց ու կանանց միջև հավասարության խրախուսման և ամրապնդման համար ստեղծված ազգային մեխանիզմը:

Սուբյեկտների և նրանց գործառնությունների սահմանումը հնարավորություն է տալիս հիմնախնդիրը տեղափոխելու ինստիտուցիոնալացման մակարդակ: Ինստիտուցիոնալացումը հնարավոր է ինստիտուտների և մեխանիզմների միջոցով կանանց շահերի ինտեգրման ճանապարհով: Այն դառնում է ավանդական հայրիշխանական քաղաքականությունը փոփոխելու և կանանց շահերի ինտեգրման օգտագործմամբ և տղամարդկանց ու կանանց վրա քաղաքական կուրսերի և ծրագրերի հնարավոր տարբեր ներազդեցությունների հաշվառմամբ նախորդ փորձը զարգացնող քաղաքականության սկզբունքները մշակելու և իրացնելու իրական մեթոդ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս որոշելու «կանանց շահերի ինտեգրման» ազգային մեխանիզմի մոդելը, որը կոչված է հաշվի առնելու «կանանց շահերը» պետական քաղաքականության մշակման և իրականացման բոլոր փուլերում»:

Բայց քանի որ գենդերային մոտեցումը գոյություն ունեցող կառավարություններին հաճախ մատչելի չէ թե՛ աշխարհայացքային և թե՛ գործնական առումով փորձի ու քաղաքական կամքի բացակայության պատճառով, ուստի գլխավոր ռազմավարական խնդիր է դառնում ինչպես հասարակության մեջ, այնպես էլ իշխանության մակարդակում գենդերային մոտեցման պահանջվածության ձևավորումը՝ դրա հայեցակարգային հիմնավորմամբ:

Պետական գենդերային քաղաքականության հայեցակարգը, բացի բերված փաստարկներից, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից հասարակությունը չի կարող վերացարկվել սոցիալապես նշանակալի, մտավոր և քաղաքականապես իրեն դրսևորած կնոջից՝ որպես հասարակության իրավահավասար անդամից: Շատ երկրներում կանանց կողմից նշանակալի կարգավիճակների նվաճումը տեղի է ունեցել ինստիտուցիոնալացման միջոցով: Բայց գենդերի ինստիտուցիոնալացման փորձերը նույնչափ բազմազան են, որքան բազմազան են այդ երկրների քաղաքական համակարգերը, մշակույթները և ավանդույթները:

Գենդերային հավասարության առաջամարտիկ են համարվում սկանդինավյան երկրները, որտեղ հիմնախնդիրը լուծվում է պետական ֆեմինիզմի տեսանկյունից: Այստեղ «գենդերային հավասարության հաստատումը կապված է ոչ այնքան ֆեմինիստական տեսության, որքան սոցիալական հավասարության արժեքների հակվածությունն առանձնահատուկ ընդգծող հյուսիսային ժողովրդավարությունների սոցիալական դոկտրինի և քաղաքական կառուցվածքի հետ: Ընդ որում, Նորվեգիայում շեշտը դրվում է կանանց ուրույն փորձառության, արժեքների ու գիտելիքների վրա, որոնք, կարծես, լրացնում են տղամարդկանց արժեքներն ու հայացքները: Շվեդիայում գենդերային հավասարության քաղաքականությունը ենթադրում է «դրական գործողությունների» քաղաքականության իրականացում: Այս երկրներում ձևավորվել են ազգային մեխանիզմներ, նշանակվել են գենդերային հավասարության հարցերով նախարարներ: Գենդերային հավասարության առաջնդման գործում հիմնախնդիրների լուծման մոտեցումների ընդհանրության մեջ առանձնանում է կառավարության առաջատար դերը:

Կանանց դրության դրական տեղաշարժերը ԱՄՆ-ում և Կանադայում նույնպես ստեղծված ազգային մեխանիզմների գործունեության և դրանց վրա կանանց շարժման ներազդեցության արդյունք են: Կանանց շարժումը Օլգա Վորոնինան համարում է «նկատելի քաղաքական ուժ է, որը ստիպում է քաղաքական, կուսակցական և պետական գործիչներին հաշվի նստել իր հետ»:

Գենդերային քաղաքականության արդյունավետ զարգացմանը նպաստում են այնպիսի կառույցներ և մեխանիզմներ, ինչպիսիք են վարչապետին կից պետական խորհրդականը, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների դիտորդը Լիտվայում, կանանց իրավունքների կոմիտեները Լեհաստանում, Լատվիայում և Էստոնիայում: Նման կառույցների ընդհանրությունն այն է, որ դրանք հանդես են գալիս որպես գործիքներ, որոնց միջոցով կառավարությունները կարող են լուծել գենդերային հիմնախնդիրները և իրականացնել գենդերային քաղաքականությունը:

Շատ երկրներում կանայք դեռևս դիտվում

են որպես հասարակության խոցելի խումբ, որը պաշտպանության կարիք ունի, և այստեղ գործը պարզապես չի հասնում հավասար իրավունքների և հնարավորությունների հիմնախնդիրներին: Այդպիսի երկրների շարքը կարելի է դասել նաև Հայաստանը: Հայաստանում, չնայած գենդերային հավասարության գաղափարի որոշակի առաջնդման, չի հաջողվում ազգային մեխանիզմ ստեղծել և հիմնախնդիրը բարձրացնել պետական քաղաքականության մակարդակի:

Հայաստանում ազգային մեխանիզմի ստեղծման փորձ կարելի է համարել 1997 թ. գենդերային քաղաքականության հանձնաժողովի՝ որպես աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից խորհրդատվական մարմնի և 2000 թ. վարչապետին կից կանանց հարցերի հանձնաժողովի ստեղծումը, որոնք գործնականում որևէ ազդեցություն չեն ունեցել և չէին կարող ունենալ քաղաքականության վրա: Սկսած 1998 թվականից՝ կառավարությունն ընդունել է մի շարք որոշումներ՝ ուղղված կանանց վիճակի բարելավմանը, ընդհուպ մինչև 2004 թ. ստեղծված Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը: Այսօր տվյալ ծրագրի կատարման ժամկետը մոտ է ավարտին, բայց կանանց վիճակը քիչ է փոխվել, առավել ևս՝ քաղաքական հարաբերություններում գենդերի ինստիտուցիոնալացման տեսանկյունից: Վիճակը չի փոխվում նաև 2009 թվականի հունվարին ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության զեկույցի քննարկումից հետո, իսկ կոմիտեի եզրակացություններն ու երաշխավորությունները կառավարության ուշադրությունից դուրս են մնում:

Հայաստանում գենդերի ինստիտուցիոնալացման գործընթաց տեղի չի ունենում նաև այնպիսի մակարդակներում, ինչպիսիք են քաղաքացիական հասարակության սուբյեկտները և հասարակական կազմակերպությունները: Գենդերի ինստիտուցիոնալացման համատեքստում որպես դրական քայլ կարելի է նշել ՀՀ Հանրային խորհրդին կից գենդերային և ժողովրդագրական հարցերի հանձնաժողովի

ստեղծումը: Բայց գենդերի ինստիտուցիոնալացումը և կանանց հասարակական վիճակի իրական փոփոխություններն անհնարին են, քանի դեռ հասարակության մեջ բացակայում է կանանց մասնակցության, համախմբված կանանց շարժման պահանջվածության գիտակցումը, բացակայում է իշխանությունների քաղաքական կամքը, քանի դեռ կանայք հանդուրժողական վերաբերմունք են դրսևորում ստեղծված իրավիճակի նկատմամբ և հակված են մասնակցության հասարակական գործունեության մակարդակով, քանի դեռ տարածված են քաղաքականության հայրիշխանական մեթոդներն ու գենդերային կարծրատիպերը:

Ստեղծված իրավիճակում քաղաքականության ոլորտում կանանց առաջնորդման և նրանց քաղաքական ներկայացվածության մեծացման հիմնախնդիրները պահանջում են տեսական հիմնավորում ոչ միայն գենդերային հետազոտությունների, այլև պետական գենդերային քաղաքականության ձևաչափով: Միայն հայեցակարգային մոտեցումը կարող է ապահովել հասարակության կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հիմնախնդիրների համակողմանի ընդգրկում՝ սկսած քաղաքական որոշումների կայացման մակարդակից մինչև գենդերային բռնության հաղթահարման և գենդերային մշակույթի ձևավորման պայմանները:

Միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական գործընկերության շնորհիվ Հայաստանի

իշխանությունները հայտարարել են պետական գենդերային քաղաքականության հայեցակարգի ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի ստեղծմանը նպաստելու պատրաստակամության մասին: Այդ մտադրություններն իրենց արտացոլում են գտել նաև «**Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկը հասպատելու մասին**» ՀՀ նախագահի 2009 թ. մայիսի 6-ի կարգադրության մեջ: Սակայն նախատեսված միջոցառումներն առայժմ սուկ բարի մտադրություններ են: Մեր կարծիքով, իրավիճակը հնարավոր է փոխել, եթե իշխանությունը, որը փորձում է ձևավորել գենդերային հավասարության հասնելու կամքը, նախևառաջ, կանանց շահագրգռությունը և ակտիվությունը իրենց շահերը՝ որպես ողջ հասարակության շահեր, առաջ մղելու հարցում: Եվ այդ գործընթացում տեսական առումով կապող օղակ կարող է լինել պետական գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ գործնական առումով՝ կանանց ինքնաբավ զանգվածային շարժման ձևավորումը, քաղաքական կուսակցություններում կանանց ակտիվության բարձրացումը և, ամենակարևորը՝ գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմի ստեղծումը:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ՞ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ



Սոֆյա Բաբայան

Ասոցիացիայի Վանաձորի մասնաճյուղի ղեկավար, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Վերջին տասնամյակները նշանավորվել են համայն աշխարհում բավական բարձր հետաքրքրությամբ զենդերային հիմնախնդիրների նկատմամբ: Այդ հետաքրքրության համար նոր ազդակ եղան հստակ պահանջները, որոնք ներկայացրին եվրոպական կառույցները ժողովրդավարական սկզբունքներին հակված երկրներին: Ժողովրդավարական վերափոխումների գործընթացները արդիական են դարձրել սոցիալական արդարության, ռեսուրսների և իշխանության անհավասար մատչելիության և, հետևաբար, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացներում քաղաքացիների տարբեր խմբերի անհավասար ներգրավման հարցերը: Տարիների ընթացքում անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ զենդերային հավասարության հիմնախնդիրների գիտակցումը Հայաստանում որոշակի տեղաշարժ է ունեցել և կազմել հասարակական գիտակցության մի մասը: Շնորհիվ հասարակական կազմակերպությունների, այդ թվում նաև՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի ջանքերի, զենդերային հիմնախնդիրների մասին սկսել են մտորել Հայաստանի շատ տարածաշրջաններում: Մեծապես նպաստել են նաև տարիներ շարունակ անցկացվող սեմինարները, թրեմինգները, լիդերության և զենդերային դպրոցները, որոնք նպատակ են ունեցել բարձրացնել բնակչության տարբեր շերտերի զենդերային իրազեկությունը:

Այդուհանդերձ, զենդերային իրավիճակը Հայաստանում լավատեսություն չի ներշնչում և դարձյալ բնութագրվում է կայուն անհավասարակշռությամբ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Չնայած որոշ դրական շարժընթացին՝ դեռևս ցածր է կանանց ներկայացվածությունը կառավարման համակարգում և որոշումների կայացման ոլորտում:

Այսպիսով, կարելի է արձանագրել Հայաստա-

նում կատարվող երկու զուգահեռ գործընթաց: Մի կողմից՝ զենդերային իրավիճակը բոլոր ոլորտներում և հատկապես քաղաքական ոլորտում դրա-

կան փոփոխություններ չի ունենում: Մյուս կողմից՝ ձևավորվել է բավական զարգացած հասարակական դիսկուրս, զենդերային հավասարության հիմնախնդիրները զանգվածային գիտակցության մասն են կազմել և իրենց մեկնաբանությունն են գտել հավասար իրավունքների, ռեսուրսների, իշխանության, սեռի հատկանիշով խտրականության և սոցիալական արդարության ճանաչված միջազգային կատեգորիաներով:

Ի՞նչը կարող է նպաստել այդ զուգահեռ գործընթացների ներդաշնակեցմանը: Ի՞նչ է անհրաժեշտ ձեռնարկել, որպեսզի արդեն ձևավորված հասարակական դիսկուրսը դրական փոփոխություններ խթանի: Ինչպե՞ս չեզոքացնել զենդերային անհավասարակշռությունը, հաղթահարել սեռի հատկանիշով խտրականությունը, հասնել զենդերային մշակույթի փոխակերպման և խթանել օրենսդրական ակտերի և պաշտոնական դիսկուրսի միջոցով օրինական աջակցություն ստացած էգալիտար սոցիալական գործելակերպը:

Հավասարության մշակույթը կարելի է սահմանել որպես պետության և հասարակության՝ տղամարդկանց և կանանց միջև տնտեսական, սոցիալական և քաղաքական ռեսուրսների հավասար բաշխմանն ուղղված միջոցներ մշակելու և իրականացնելու քաղաքական կամքի առկայություն: Դրա արդյունավետ կենսագործման համար առաջին հերթին անհրաժեշտ է պետական ռազմավարություն՝ ուղղված սեռի հատկանիշով խտրականության հաղթահարմանը: Երկրորդ՝ անհրաժեշտ է հավասարությանն աջակցող քաղաքական մշակույթի ձևավորում: Եվ, վերջապես, անհրաժեշտ է կանանց շարժման համախմբում իշխանական կառույցների հետ համագործակցությամբ պետական զենդերային քաղաքականության մշակմանը և իրականացմանն ակտիվ մասնակցելու համար:

Հարկ է Հայաստանում արդեն մշակված գործելակերպերից ընտրել զենդերային հավասարության առաջնդման առավել արդյունավետ մե-

խանդիզները, որոնք նպատակաուղղված են քաղաքական կյանքում կանանց մասնակցության ակտիվացմանը և նրանց ներգրավմանը որոշումների կայացման ոլորտում: Այդ մեխանիզմները և տեխնոլոգիաները պետք է ելնեն ազգային առանձնահատկություններից և Հայաստանում անցումային շրջանի յուրահատկությունից: Դրան պետք է նախորդի կանանց սոցիալական կարգավիճակի վրա ազդող տնտեսական և քաղաքական գործոնների գենդերային մշտադիտարկումը:

Փորձեր են արվել բարելավելու իրավիճակը



օրենսդրական մակարդակով. ընտրական օրենսգրքում մտցվել է, թեկուզ ոչ ցանկալի, բայց գենդերային քվտա: Իրավաբանորեն ամրագրված հավասարությունը հռչակվել է դարասկզբին և արձանագրվել ՀՀ Սահմանադրությունում: Վավերացվել են մի շարք միջազգային փաստաթղթեր, իրականացվում է ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը: Ակտիվացել են հասարակական կազմակերպությունները, որոնց կազմում ոչ ֆորմալ կրթության ցանցի միջոցով գիտելիքներ, փորձ և լիդերի որակներ ձեռք բերած մարդկային ռեսուրս գոյություն ունի: Հայաստանը միացել է Հազարամյակի հռչակագրին, որի երրորդ նպատակը գենդերային հավասարության հասնելն է:

Անցումային շրջանի Հայաստանում արդեն ուրվագծվել են դրական փոփոխությունների որոշ նախադրյալներ: Գոյություն ունի տարբեր երկրների փորձը, որը կիրառվել է գենդերային քաղաքականության տարբեր փուլերում գենդերային հավասարության կառուցվածքային և

մշակութային խոչընդոտները հաղթահարելու համար:

Հետագա ռազմավարության ընտրությունը նախանշված է ժամանակով, երկրում սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակով, իրավական և ինստիտուցիոնալ պայմաններով:

Հայաստանում գենդերային հավասարության հասնելու համար անհրաժեշտ է ընդունել և իրականացնել պետական գենդերային քաղաքականության հայեցակարգը, որի առանցքային չափանիշներն են՝ ընդունվող որոշումների և օրինաստեղծ գործընթացի գենդերային փորձաքննության ինստիտուցիոնալացումը դրանց գենդերային հետևանքների նախնական վերլուծության նպատակով, գենդերային քվտաների սահմանումը, որոնք կապահովեն որոշումների կայացման գործընթացի վրա ներգործելու ունակ կրիտիկական զանգված օրենսդիր և գործադիր իշխանության մեջ, քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների գնահատման գենդերային ցուցիչների մշակումը, բնակչության իրավական գիտակցության և քաղաքական ակտիվության բարձրացման նպատակով ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության լայն ցանցի ստեղծումը, պետական ծառայողների, օրենսդիրների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, դատավորների և իրավապահ մարմինների աշխատողների գենդերային իրազեկության բարձրացումը, գենդերային գիտելիքների ներառումը պետական ծառայողների յուրաքանչյուր խմբին ներկայացվող պարտադիր պահանջների ցանկում, ինչպես նաև իրականացնել կանանց կադրերի պատրաստում նրանց քաղաքական իրազեկության բարձրացման և լիդերի որակների ձևավորման միջոցով:

Գենդերային հավասարության նվաճման գործընթացի հաջողությունը մեծապես կախված է հատուկ կառույցների՝ գենդերային վահավասարության նվաճման ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունից, ինչպես նաև օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում գենդերային ներկայացվածությունն արտացոլող գենդերային վիճակագրության կատարելագործումից:

Գենդերային հավասարության նվաճման գործընթացի հաջողությունը մեծապես կախված է հատուկ կառույցների՝ գենդերային վահավասարության նվաճման ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունից, ինչպես նաև օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում գենդերային ներկայացվածությունն արտացոլող գենդերային վիճակագրության կատարելագործումից:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ



ՄԱԿ-Ի ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Լիլիթ Չաքարյան

Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալազգային փոխակապակցման պատրաստման գիտությունների թեկնածու, դոցենտ

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան վավերացնելուց հետո ՀՀ կառավարությունը 3 զեկույց է ներկայացրել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի: Յուրաքանչյուր զեկույցից հետո կոմիտեն դիտողություններ է ներկայացրել ՀՀ կառավարությանը՝ ձևակերպելով իր տեսակետը կոնվենցիայի կատարման վերաբերյալ: Փորձենք վերլուծել ՀՀ կառավարության զեկույցների վերաբերյալ կոմիտեի 3 զեկույցի դիտողությունները, վեր հանել՝ ի՞նչ է արվել ՀՀ-ում կոնվենցիայի առաջադրած խնդիրների կատարման ուղղությամբ, ի՞նչ է անհրաժեշտ անել և ինչո՞վ կարող են օգնել իշխանություններին քաղաքացիական հասարակության ինստիտուտները, մասնավորապես՝ կուսակցությունները, կանանց ՀԿ-ները և ՉԼՄ-ները:

Ժնևում 2009 թ. հունվարին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի նիստին մասնակցությունս հնարավորություն տվեց ինձ նորովի գնահատելու կոնվենցիայի՝ որպես կանանց նկատմամբ խտրականության վերացման գործուն մեխանիզմի արդյունավետությունը: Չուտ հետաքրքիր փաստաթուղթ լինելուց բացի, այն ներկայացավ նաև որպես կանանց իրավունքների

պաշտպանության իրական միջոց:

Կոմիտեի դիտողությունները լուրջ դրդապատճառ են մեկ անգամ ևս անդրադառնալու հայ հասարակության մեջ գեղեցիկին հավասարության հիմնահարցերին, ընդ որում՝ ոչ միայն տեղական, այլև միջազգային փորձի համատեքստում, և քննարկելու կանանց իրավունքների պաշտպանության և խտրականության վերացման խնդիրները:

Կոնվենցիայի գլխավոր դրույթներից է *պեյրության պարասիսանարվությունը*: Այսինքն՝ պետությունը, որ վավերացնում է կոնվենցիան, պարտավորություն է ստանձնում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ուղղությամբ: Պետությունը, փաստորեն, համաձայնում է կոնվենցիայի նորմերին և պահանջներին, ավելին՝ համաձայնվում է, որ իր նկատմամբ այդ ուղղությամբ հսկողություն սահմանվի: Նա պարտավորվում է այնպիսի օրենսդրական և քաղաքական քայլեր իրականացնել, որոնք կնպաստեն կոնվենցիայի պահանջների իրագործմանը: Պետության քաղաքականության միջոցներին և արդյունքներին են վերաբերում կոնվենցիայի 2-4-րդ հոդվածները: 2-րդ հոդվածի սկզբում նշված է, որ պետությունը պարտավոր է «բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու վարել կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն»: Նույն հոդվածի կետերում թվարկվում են այդ միջոցները:

ոչ միայն օրենսդրության մեջ ամրագրել գենդերային հավասարության սկզբունքը, այլև ապահովել այդ սկզբունքի գործնական իրականացումը, օրենսդրության մեջ անհրաժեշտության դեպքում ներառելով անգամ պատժամիջոցներ: Ընդ որում, պետությունը չպետք է սահմանափակվի միայն նշված միջոցների կիրառմամբ: Այս պարագայում կարևորը արդյունքն է, և եթե արդյունքը չի երևում, պետությունը պարտավոր է ճկուն գտնվել և կիրառել բոլոր հնարավոր միջոցները: Նպատակը մեկն է՝ հավասարություն հաստատել իրական կյանքում:



Նշանակում է՝ պետությունը կոնվենցիայով ստանձնած պարտավորություններով դառնում է կանանց իրավունքների հարգման, պաշտպանության և կատարման գլխավոր երաշխավորը:

Գործընթացը սկսվում է մի շատ դժվար խնդրից՝ նկատելու, տեսնելու, բացահայտելու, ընդունելու ցանկությունից, որ կանանց նկատմամբ խտրականություն հասարակության մեջ, այնուամենայնիվ, կա: Մինչդեռ ՀՀ-ում ամենաբարձր ատյաններում կարող է հնչեցվել հակառակ կարծիք, ավելին՝ ՀՀ կառավարության պաշտոնական զեկույցում, որը Ժնևում ներկայացրեց ՀՀ արտգործնախարարի տեղակալ Ա.Կիրակոսյանը, նշվում է, որ Հայաստանում չկան կանանց նկատմամբ խտրական օրենքներ և գործելակերպ: Այդ կապակցությամբ ծագում են մի շարք հարցեր. եթե խտրականություն չկա, ի՞նչն են վերացնում, եթե կա, ինչո՞ւ են մերժում: Այստեղ արդեն ծագում է մեկ

այլ հիմնախնդիր, որ անհրաժեշտ է խտրականությունը դիտել որպես ոչ միայն բացահայտ, այլև թաքնված երևույթների ամբողջություն:

Մեզանում հաճախ են սիրում կրկնել, որ ՀՀ-ում կանայք և տղամարդիկ իրավահավասար են, բայց իրավահավասար լինել դեռ չի նշանակում ունենալ իրական հավասարություն: Իրական հավասարությունը կնշանակի ապահովել հավասար հնարավորություններ, հնարավորությունների հավասար մատչելիություն և հավասար արդյունքներ: Ֆորմալ հավասարությունը, որն ամրագրվում է գենդերայնորեն չեզոք քաղաքականության և օրենքների մեջ, միշտ չէ, որ նպաստում է իրական հավասարության հաստատմանը: «Հավասարություն» վերացական հասկացությունը ձեռք է բերում կոնկրետ բովանդակություն միայն պետության կողմից ստեղծված մեխանիզմների և ինստիտուտների միջոցով: Կոնվենցիան հաստատում է, որ հաճախ կանանց և տղամարդկանց համար հավասար արդյունքներ ապահովելու համար անհրաժեշտ է ոչ հավասար մոտեցում ցուցաբերել նրանց նկատմամբ, ասել է թե՛ կիրառել «պոզիտիվ խտրականություն»:

Պատահական չէ, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետով պետությունը պարտավոր է վերացնել ոչ միայն խտրականություն բովանդակող օրենքները, այլև «սովորույթներն ու գործելակերպը»: Իհարկե, երկրորդը շատ ավելի դժվար է իրագործել և ավելի շատ ջանքեր է պահանջում, քանի որ առնչվում է մշակութային փոփոխություններին, որոնք, ինչ խոսք, դանդաղ են ընթանում:

Հիշեցնեմ, որ կոնվենցիայի պահանջներին համապատասխան՝ պետությունը նախնական զեկույցը պետք է ներկայացնի վավերացումից մեկ տարի անց, իսկ հետո՝ 4 տարին մեկ: Պետության զեկույցները ցույց են տալիս սեփական պարտավորությունների ըմբռնման աստիճանը և կատարման արդյունքները:

ՀՀ-ն Կանանց նկատմամբ խտրականության վերացման (ԿՆԽՎ) կոմիտեին իր 1-ին զեկույցը ներկայացրեց 1997-ին (նախնական տեսքով՝ 1995-ին): Հանգամանալից քննարկու-

մից հետո այդ գեկույցի վերաբերյալ ԿՆԽՎ կոմիտեն արել էր հետևյալ դիտողությունները՝

- ՀՀ-ում ստեղծված չէ հատուկ մարմին, որը զբաղվեր կանանց իրավունքների պաշտպանությամբ, չկա գենդերային հավասարությունն ապահովող ազգային մեխանիզմ:
- ՀՀ-ում կանայք որոշումների ընդունման մակարդակում ցածր տոկոս են կազմում: Առաջարկվում էր հատուկ միջոցների կիրառում, այդ թվում՝ քվոտաների սահմանում:
- Նշվում էին նաև մի շարք այլ հիմնախնդիրներ՝ կանանց նկատմամբ բռնության առկայության հերքումը (անգամ ընդգծվում էր, որ այդ թեմայի վրա հասարակությունում տարու է դրված), արքայների՝ որպես վերատադրողականության վերահսկման հիմնական միջոցի բարձր տոկոսը, փախստականների անապահով վիճակը, կանանց կուտակումը աշխատանքի ոչ ֆորմալ ոլորտներում և դրա հետևանքով սոցիալապես անապահով վիճակը, մարմնավաճառության աճը, ՁԻԱՀ-ի կանխարգելման ոչ բավարար միջոցները և այլն:
- Մեծ անհանգստություն էր հայտնվում գենդերային կարծրատիպերի դեմ պայքարի բացակայության առնչությամբ:

ՀՀ-ը 2-րդ գեկույցը կոմիտեին ներկայացրեց 2002 թ.: Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն թյուրիմացաբար կարծել էր, որ ՀՀ-ում ստեղծվել է ազգային մեխանիզմ, և նույնիսկ ողջունել այդ քայլը: *Այդ թյուրիմացությունը վերացվեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի ներկայացրած «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը ՀՀ-ում 2002-2007 թթ.» ալլընդրասնքային գեկույցի շնորհիվ:*

Մյուս հիմնախնդիրների վերաբերյալ կոմիտեն արել էր հետևյալ դիտողությունները.

- Կանանց ցածր ներկայացվածությունը կուսակցություններում, ԱԺ-ում և որոշումների ընդունման այլ մակարդակներում (դարձյալ առաջադրվում էր քվոտաների կիրառման անհրաժեշտությունը, հիշեցվում էր, որ կարելի է իրականացնել կանանց քաղաքական

մասնակցությունը խրախուսող կրթական ծրագրեր):

- Դարձյալ ընդգծվում էր, որ արդյունավետ պայքար չի մղվում կանանց նկատմամբ բռնության և, մասնավորապես, ներընտանեկան բռնության դեմ, աշխատանք չի տարվում կարծրատիպերի փոփոխման ուղղությամբ, որոնք անընդունելի կդարձնեն կանանց նկատմամբ բռնությունը:
- Նշվում էր, որ չկա կանանց վաճառքի դեմ ուղղված որևէ օրենք, չկա տեղեկատվություն մարմնավաճառության վերաբերյալ:
- Դարձյալ անհանգստություն էր հայտնվում արքայների՝ որպես անցանկալի հղիության ընդհատման միջոցի կիրառման բարձր տոկոսի վերաբերյալ (հատկապես գյուղական վայրերում), բարձրացվում էր մայրական մահացության բարձր տոկոսի հարցը:
- Նշվում էր սեռի սկզբունքով տարբերակված վիճակագրական տվյալների բացակայությունը:
- Անհանգստություն էր հայտնվում աշխատանքի վայրում սեռական ոտնձգությունների դեմ պայքարի բացակայության վերաբերյալ:
- Բարձրացվում էին գյուղի կանանց վիճակի, նրանց սահմանափակ տնտեսական և առողջապահական հնարավորությունների հետ կապված հարցեր:
- Նշվում էր օրենսդրության մեջ ամրագրված աղջիկների և տղաների ամուսնության տարբեր տարիքային շեմը:

3-րդ և 4-րդ միացյալ գեկույցը ՀՀ-ն ներկայացրեց 2009 թ.: Մինչ այդ կառավարությունը գրավոր պատասխան էր տվել կոմիտեի մի շարք հարցերին: Այս անգամ արված հիմնական դիտողություններն էին.

- Օրենսդրության մեջ խտրականության սպառնիչ բնութագիր չկա, կանանց և տղամարդկանց հավասարության հարցում գերիշխում է չեզոք մոտեցումը, որը գործնականում չի նպաստում խտրականության վերացմանը: Կոմիտեն հորդորում է արագացնել հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վերաբերյալ օրենքի ընդունումը:
- Դարձյալ ընդգծվում է, որ ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված ամուսնության տար-

բեր տարիքային շենը (կանանց համար՝ 17 տարեկանից, տղամարդկանց համար՝ 18) պահպանվում է՝, այս անգամ հստակ ընդգծելով, որ այն խտրական է կանանց նկատմամբ:

- Դարձյալ անհանգստություն է հայտնվում որոշումների ընդունման մակարդակում կանանց անբավարար ներկայացվածության կապակցությամբ (նշելով, որ համամասնական ցուցակների համար նախատեսված 15-տոկոսանոց քվոտան բավարար չէ, անհրաժեշտ է բարձրացնել այն):
- Նշվում է, որ չնայած 2002 թ. ստեղծվել է կանանց, ընտանիքի և երեխաների հարցերով հատուկ վարչություն, այն չի կարող փոխարինել ազգային մեխանիզմին, և, հետևապես, բարձրացվում է վերջապես այն ստեղծելու հարցը:
- Ընդգծվում է, որ օմբուդսմանի կառույցում կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հատուկ ստորաբաժանում չկա:
- Դարձյալ նշվում են կանանց ստորադասության վերաբերյալ գենդերային կարծրատիպերի առկայությունը, դրանց փոփոխման անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ տարվող անբավարար աշխատանքը:
- Արդեն երրորդ անգամ կոմիտեն անդրադարձ է կատարում կանանց նկատմամբ բռնության հարցին՝ նշելով, որ չկան բռնության գոհերի համար ապաստարաններ, բռնության վերաբերյալ շատ քիչ գործ է ուղարկվում դատարան, բացակայում է հիմնախնդրի վիճակագրությունը: Կոմիտեն անհրաժեշտ է համարում ընդդեմ կանանց բռնության օրենքի ընդունումը, որում պետք է ներառվի նաև կենցաղային բռնությունը:
- Դարձյալ նշվել է, որ չկա տեղեկատվություն մարմնավաճառության վերաբերյալ: Անհանգստություն է հայտնվում, որ մարմնավաճառության համար տուգանք է նախատեսված, որը գանձվում է մարմնավաճառից, ինչը նրան կրկնակի գոհ է դարձնում, մինչդեռ նրա հաճախորդների նկատմամբ պատժամիջոցներ չկան:
- Կոմիտեն բարձրացնում է նաև ազգային փոքրամասնությունների կանանց նկատմամբ խտրականության հարցը:
- Ուշադրության է արժանացել դոկտորան-

տուրայում կանանց փոքր տոկոսը: Կոմիտեն կարծում է, որ տարբեր պատճառներով ուսումը թողած աղջիկները պետք է հնարավորություն ունենան վերադառնալու կրթության ոլորտ:

- Նորություն էր կին լրագրողների նկատմամբ կիրառված բռնության վերաբերյալ դիտողությունը:
- Պահանջվում էր արված դիտողությունների վերաբերյալ տեղյակ պահել բոլոր նախարարություններին և խորհրդարանին:

Ինչպես տեսնում եք, նկատվում է կոմիտեի խիստ հետևողական վերաբերմունք, պահանջների աճ, դինամիկ խորացում և մանրամասնում: Այդ համատեքստում բնավ տպավորիչ չէ ՀՀ իշխանությունների գործունեությունը: Իհարկե, պետք է ընդունել, որ որոշ աշխատանք տարիների ընթացքում կատարվել է, այդ մասին պարզորոշ նշվել է նաև ասոցիացիայի ներկայացրած այլընտրանքային զեկույցում, բայց լուրջ անհանգստություն են պատճառում զեկույցում տարեցտարի կրկնվող հարցադրումները: Ես կառանձնացնեի դրանցից երեքը: Այսպես՝

1. Հրամայական է դարձել ազգային մեխանիզմի ստեղծումը, գենդերային հավասարության հայեցակարգի, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի քննարկումը և ընդունումը Ազգային ժողովի կողմից:

2. Թույլ աշխատանք է տարվում գենդերային կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ: Այս հարցը միայն իշխանական կառույցների հիմնախնդիրը չէ, այլ ուղղակիորեն վերաբերում է նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտներին՝ քաղաքական կուսակցություններին, ՀԿ-ներին և հատկապես ԶԼՄ-ներին:

3. Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության հետ կապված հիմնախնդիրները հանրային քննարկման պետք է արժանանան պարբերաբար:

Վերոհիշյալ խնդիրների առանձնացումը չի նշանակում, որ չեն կարևորում կոմիտեի բարձրացրած մյուս հիմնահարցերը, ուղղակի, ըստ իս, դրանց լուծումը կախված է վերը նշված երեք հիմնական խնդիրներից:

ԿԱ՞ ԱՐԳՅՈՔ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Սիրանուշ Խաչկալյան

Գլխավոր պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի դասախոս

«Կանանց նկատմամբ խտրականության հաղթահարումը որպես քաղաքական հիմնախնդիր և ժողովրդավարական հասարակության նախադրյալ» ֆորումը հերթական անգամ փաստեց գենդերային ակնհայտ ու թաքնված անհավասարության առկայությունը Հայաստանում: Անկասկած, ֆորումի աշխատանքն ավելի ծանրակշիռ ու գործնական երանգ ստացավ, քանի որ քննարկմանը մասնակցում էին իշխանության մարմինների ներկայացուցիչներ, ովքեր անմիջական առնչություն ունեն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման ընթացքի վերաբերյալ ՀՀ 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցի նախապատրաստման գործընթացների հետ: Միջոցառման հետաքրքրությունն այն էր, որ միաժամանակ, նույն հարթության վրա ներկայացվեցին հիմնախնդրի մասին ՀՀ պաշտոնական տեսակետները, միջազգային կառույցների կատարած դիտարկումների արդյունքում ստացված եզրակացություններն ու դիտողությունները և ֆորումի մասնակիցների կարծիքներն ու մոտեցումները:

Ֆորումում ներկայացված զեկուցումները, մասնակիցների հարցերն ու ելույթներն ուղղակի և անուղղակի փաստեցին գենդերային անհավասարության առկայությունը Հայաստանում: Բնականաբար, պաշտոնական զեկույցում շեշտադրված էին գործընթացի դրական միտումները, պետության գործադրած ջանքերն ու արդյունքները, մասնակիցների ելույթներում՝ առկա թերություններն ու հիմնախնդիրները: Չեկուցումներն ու ելույթները, իրար լրացնելով, ամբողջացրին գենդերային իրականության պատկերը Հայաստանում, որը հեռու է ցանկալիից:

Ֆորումի աշխատանքների դիտարկումը հանգեցնում է մի քանի օրինաչափ եզրակացությունների. Հայաստանում գենդերային հավասարության հաստատման հիմնահարցին իշխանությունները մոտենում են ավելի ձևական, քան՝ բովանդակային տեսանկյունից՝ ձգտելով «բարետես» զեկույցներ ներկայացնել եվրոպական կառույցներին, քան ապահովել փաստական հավասարություն: Այլա-

պես վաղուց արդեն պետք է սկսված լինեին պետություն-քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործնական ակտիվ երկխոսությունները: Պետությունը ոչ միայն եվրոպական կառույցների, այլև սեփական հասարակության առջև պետք է հաշվետու լիներ: Ակնհայտ է խնդրի լուծման անհրաժեշտ քաղաքական կամքի բացակայությունն իշխանության բոլոր մակարդակներում: Այլապես գոնե երկու խնդիր արդեն լուծված կլիներ: Խոսքը իշխանության մարմիններում սեռերի ներկայացվածության թույլատրելի չափաբաժին (քվոտա) հաստատելու և կրթական համակարգում գենդերային բաղադրիչը պաշտոնապես ներդնելու մասին է:


Անհիմն չէր նաև այն կարծիքը, որ հաճախ իշխանության մակարդակներում և իշխանության անունից հիմնախնդիրը ներկայացնում են իրականում դրանով ոչ շահագրգիռ և ոչ քաջատեղյակ մարդիկ: Ըստ էության, տղամարդիկ, ովքեր գենդերային հավասարության կողմնակիցներ չեն, դեմ չեն այդ ցուցանիշով ներկայացնել Հայաստանը եվրոպական առյուծներում:

Չեկուցողների ու մյուս մասնակիցների կողմից կրկին նշվեց գենդերային հիմնախնդիրների լուծման գործում կանանց կազմակերպությունների ավանդն ու դերը:

Յավոք, հերթական անգամ արձանագրվեց Հայաստանում կանանց շարժման մասնատվածությունը: Բազմաթիվ կազմակերպություններ՝ իրարից անկախ ու անտեղյակ, ինչ-որ ձևով, ինչ-որ չափով զբաղվում են գենդերային հիմնախնդիրներով, սակայն միասնական նպատակ, գործողությունների ծրագիր, միասնական ճնշում կամ համաձայնեցված լոբբինգ իշխանական մարմինների վրա չկա: Նաև գենդերային կրթությամբ ու գենդերային ներդաշնակ մշակույթի քարոզությամբ զբաղվող կադրերի խնդիր կա:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանն ուղղված ջանքերը պետք է միավորվեն ընդհանուր ծրագրերում և գործողություններում: Այս նպատակով հավանաբար պետք է հրավիրել կանանց կազմակերպությունների և շահագրգիռ այլ ինստիտուտների ֆորում, միավորել ջանքերը, համատեղ փնտրել, գտնել ու իրականացնել խնդրի լուծման հնարավորությունները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼ



Անահիտ Խաչատրյան

Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Արարարի մարզային կենտրոնի համադասող

Հայ հասարակության կարևոր հիմնահարցերից մեկը հասարակության մեջ կանանց դերի ու տեղի, ժողովրդավարության հաստատման և մարդու իրավունքների ապահովման գործընթացում նրանց մասնակցությունն է: Հասարակության բարեկեցությունը ենթադրում է անձի և քաղաքացու պահանջումների ու շահերի առավելագույն բավարարման հնարավորություններ: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ են հասարակական համապատասխան ինստիտուտներ և մեխանիզմներ: Մարդու շահերի պաշտպանության առավել կատարյալ մոդելը հասարակության ստեղծումն է: Ժողովրդավարության գաղափարը մերօրյա քաղաքացիական քննարկումների կարևոր թեմաներից մեկն է:

Նպատակը մեկն է՝ ժողովրդի առավելագույն մասնակցությունը կառավարման գործընթացներին: Ժողովրդավարական երկրներում քաղաքացիական հասարակությունը բավական ուժեղ և ազդեցիկ գործոն է, որի հետ պետությունը չի կարող հաշվի չնստել: Ժողովրդավարությունը մի սկզբունք ունի՝ հասարակական և քաղաքական գործընթացներին սոցիալական տարբեր խավերի ակտիվ մասնակցությունը:

Դրա համար անհրաժեշտ են սոցիալական համակարգի կայուն զարգացումն ապահովող և քաղաքացիական մասնակցությունը խթանող հասարակական ինստիտուտներ: Դրանց շարքում կարելի է առանձնացնել հասարակական կառույցները և հասարակական ակտիվության ձևերը:

Հայաստանում այդ ինստիտուտների մի մասը դեռևս ձևավորվում է: Սակայն նորաստեղծ ժողովրդավարական կառույցների զարգացման նա-

խապայմանը քաղաքացիների ակտիվ դիրքորոշումն է և ակտիվ մասնակցությունը:

Քաղաքացիական հասարակության արժեքն ու միավորն ազատ քաղաքացին է՝ իր շահերով ու իրավունքներով:

Ժողովրդավարական պետության հիմնախնդիրը պետք է լինի քաղաքացիների շահերի պաշտպանությունը: Սակայն այդ շահերն ու հետաքրքրություններն այնքան բազմազան են, որ պետությունը չի կարող իրագրել լինել բոլորի մասին, այդ իսկ պատճառով տվյալ խնդիրներով պետք է զբաղվեն հասարակական կազմակերպությունները:

Այդ առաքելությունն իրականացնելու համար հասարակական կազմակերպություններն ընտրական գործընթացներին ակտիվ մասնակցելու, հասարակական կարծիք ձևավորելու, այս կամ այն պետական ձեռնարկումներին աջակցելու կամ հակադրվելու որոշակի միջոցներ ունեն: Չափազանց կարևոր է քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը, հասարակական գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունը: Միայն այդ դեպքում քաղաքացին կարող է պատասխանատվություն ունենալ սեփական երկրի և պետության ճակատագրի համար: Հասարակական կազմակերպությունների՝ հասարակությունում գրաված տեղի և դերի վերանայումը լուրջ առաջընթաց կլինի այդ գործընթացի ճանապարհին:

Այսպիսով, հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության այն ակտիվ մասն են, որը ձևակերպում է պահանջներ: Ուստի անհրաժեշտ է, որ պետությունը վերանայի իր հարաբերությունները հասարակական կազմակերպությունների հետ, նրանց մեջ տեսնի ոչ թե ընդդիմադիր քաղաքական ուժ, այլ քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու լայն և արդյունավետ հնարավորություն:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ կայուն զարգացում ու բարձր կենսամակարդակ ունենալն պետությունները, որոնցում կանայք տղամարդկանց հետ հավասար ներկայացված են խորհրդարանում և բարձր պաշտոններում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են մոտ 60 կազմակերպություններ, որոնց առաքելությունն այս կամ այն չափով ուղղված է կանանց հիմնահարցերի լուծմանը: Այդ կազմակերպությունները, նպաստելով կանանց քաղաքացիական ակտիվությանը, իրենց ուշադրությունը կենտրոնացնում են Հայաստանում ժողովրդավարական գործընթացների խորացման, մարդու իրավունքների պաշտպանության և կնոջ սոցիալական կարգավիճակի բարձրացման, կառավարման և որոշումների ընդունման համակարգում կանանց առաջ մղելու խնդիրների վրա:

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ Հայաստանի կանայք իրենց համոզմունքներով և մտավախություններով իրական ուժ են՝ ունակ ազդելու ժողովրդավարական փոխակերպումների վրա: Կնոջ մասնակցությունը քաղաքական-հասարակական կյանքին կհանգեցնի քաղաքացիական հասարակության ժողովրդավարության կայացմանը:

Հայ հասարակության ընկալումները կնոջ քաղաքական և քաղաքացիական մասնակցության վերաբերյալ հարկավոր է գնահատել որոշակի վերլուծությունների և դիտարկումների հիման վրա: Ընկալում ասելով՝ հասկանում ենք հասարակության մեջ կնոջ մասնակցության աստիճանը:

Հասարակության մեջ ձևավորվում է այն ըմբռնումը, որ կանանց հիմնահարցերը սոսկ իրենցը չեն, այլ ամբողջ հասարակությանը: Եթե ուզում ենք ժողովրդավարական հասարակություն ձևավորել, առաջին նախապայմանը տղամարդու և կնոջ տնտեսական անկախությունն է: Կանանց ներկայությունն անհրաժեշտ է կարևոր պետական որոշումներ ընդունելիս: Հասարակության վերափոխման հիմնահարցերը չեն կարող լուծվել առանց կանանց մասնակցության, քանի որ կանայք կազմում են բնակչության 51,8%-ը, բարձրագույն կրթություն ունեցող անձանց 60%-ը, հանրապետության գիտական ներուժի կեսից ավելին: Նրանց ներկայությունն անհրաժեշտ է խորհրդարանում, քանզի նրանց փորձը, գիտելիքները, աշխարհընկալումն ու աշխարհագրագիտությունն ազդում են որոշումների ընդունման վրա:

Կանայք, անկասկած, քաղաքական ու հասարակական կառավարմանը մասնակցելու մեծ ներուժ ունեն, սակայն ավելի հարմարավետ են իրենց զգում այն գործընթացներում, որոնք ուղղված են կյանքի ներդաշնակությանն ու ստեղծագործական իմաստավորմանը:

Ահա ինչու կանայք ավանդաբար ավելի ակտիվ են կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ոլորտներում: Սակայն հարցվածները՝ և՛ կանայք, և՛ տղամարդիկ, կնոջը տեսնում են նաև այլ պաշտոններում, հատկապես՝ ներկայացուցչական մարմիններում:

Այնուհանդերձ հասարակական գործընթացներում կնոջ ծանրաբեռնվածությունը ընտանիքում մեծապես խոչընդոտում է նրա ակտիվությանը:

Ներկայումս կանանց համար բավական դժվար է առաջ գնալ քաղաքականության ոլորտում. ընտրություններն ասվածի վառ ապացույցն են: Սա շատ լուրջ հարց է: Անհրաժեշտ են համապատասխան միջոցներ, օրենքներ, որոնք ապահովեն և ընդլայնեն կանանց ներկայացուցչությունը մեր քաղաքական և պետական կառույցներում:

Տխուր խորհրդածությունների տեղիք է տալիս

կանանց շարժման դիմամիկան ղեկավար պաշտոններում: Որպեսզի հասարակությունը կայուն գործառնի, անհրաժեշտ է, որ կառավարման օղակներում կանայք կազմեն առնվազն 40%:

Այսօր հասարակությունը բավարար չափով չի օգտագործում կնոջ ներուժը, նրա կազմակերպչական և ինտելեկտուալ ունակությունները:

Քաղաքացիական հասարակության զարգացման և ժողովրդավարության կայացման համար հիմնարար է կնոջ դերն ու ազդեցությունը, առանց կնոջ միջամտության անհնար է պատկերացնել կայուն առաջընթաց կրթության, առողջապահության, աշխատանքի, սոցիալ-տնտեսական, քաղաքական ոլորտներում:

Կանանց հասարակական կազմակերպությունները պետք է նպատակաուղղված աշխատանք տանեն կանանց ակտիվացման և առաջադրման ուղղությամբ: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան մեծ աշխատանք է կատարում այդ ուղղությամբ, և ակնհայտ է այն առաջընթացը, որ տեղի է ունենում ասոցիացիայի անդամների և սեմինար-պարապմունքներին հաճախակի մասնակցողների շրջանում: Սակայն չի կարելի այսօր բավարարվել դրանով: Հակված են հավատալու, որ կանանց մյուս կազմակերպությունները նույնպես յուրահատուկ դպրոց են իրենց անդամների համար: Կադրերի պատրաստումը և նրանց առաջադրումն

«Հասարակությունը կազմված է ընտանիքներից, հետևաբար, որքան ազատ ու ներդաշնակ լինի ընտանիքը, այնքան իդեալական կլինի հասարակությունը»:
Սրբուհի Տյուսաբ

այն հիմնահարցերից է, որոնց շուրջ կարող են միավորվել կանանց կազմակերպությունների ջանքերը: Ուղղակի պետք է ավելի սերտ համագործակցենք, ճանաչենք միմյանց, հաղթահարենք մեր կազմակերպության բացառիկության մասին պատկերացումը: Եթե տղամարդ ղեկավարը ներկայացնում է միայն իրեն, ապա կին ղեկավարը ներկայացնում է նաև իր սեռը: Ուստի պետք է պաշտպանության տակ առնել և հովանավորել ոչ թե պատահական, այլ առաջնորդի որոշակի հատկություններով, բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված կանանց: Թեկնածուները պետք է լինեն գործունյա, կազմակերպված, բարեհամբույր, ոչ շատ հուզական, հավասարակշռված: Չափազանց մեծ նշանակություն



ունի ղեկավարման հմտությունը, քաղաքական գիտելիքների մակարդակը, մարդկանց հետ շփվելու կարողությունը, կազմակերպչական ջիղը, հռետորական արվեստը, հագնվելու և մույնիսկ շարվելու ճաշակը:

Լինելով Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արտաշատի մասնաճյուղի փոխնախագահ, քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնի ղեկավար, հաճախակի կազմակերպելով ակտիվ բանավեճեր, սեմինար-պարապմունքներ, ստանձնելով նախաձեռնություններ՝ եկել են այն եզրակացության, որ հետզհետե սառույցը ճեղքվում է, և գեներալային կրթությունը պետք է դիտել որպես քաղաքացիական հասարակության ձևավորման, մարդու իրավունքների պաշտպանության պարտադիր պայման:

Քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնն իր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար ստեղծել է կորդինացիոն խորհուրդ, որի գրեթե բոլոր անդամներն ավարտել են Կանանց լիդերության դպրոցի դասընթացները և պատրաստակամորեն իրենց փորձն ու գիտելիքները կիրառում են տեղերում: Աշ-

խատանքի նման կազմակերպման շնորհիվ մարզի առավել ակտիվ կանայք ներգրավվում են քաղաքական կյանքում, նրանց մեջ ձևավորվում է հասարակության լիիրավ անդամի գիտակցումը: Կենտրոնի հաղորդած գիտելիքները նպաստում են կանանց քաղաքացիական գիտակցության ձևավորմանը, ինչպես նաև օգնում են հաղթահարելու հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպերը:

Կենտրոնի ակտիվ աշխատանքները հանգեցրել են մարզի հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների համագործակցությանը իշխանությունների հետ:

Ամրապնդվել է իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվական միջոցների կապը:

Կենտրոնի աշխատանքների միջոցով ակտիվացել է մարզի կանանց քաղաքական մասնակցությունը, բարձրացել է մասնաճյուղերի աշխատանքների արդյունավետությունը, և, ամենակարևորը՝ կազմակերպվել է գեներալային գիտելիքների ուսուցում մարզի հանրակրթական դպրոցներում:

Մարզի մասնաճյուղերը համալրվում են նոր անդամներով: Ասոցիացիայի Արտաշատի մասնաճյուղի և կենտրոնի նախաձեռնությամբ Արտաշատում գործել է լիդերության դպրոցի երկու հոսք. պարապմունքները վարել են ճանաչված քաղաքագետներ, մասնաճյուղի անդամներ, պետական ապարատի աշխատողներ, ովքեր ժամանակին մասնակցել են ասոցիացիայի կազմակերպած լիդերության դպրոցի դասընթացներին:

Ունկնդիրները ձեռք են բերել գիտելիքներ ժամանակակից հասարակության գեներալային հիմնախնդիրների, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ազգային օրենսդրության, կանանց իրավունքների պաշտպանության միջազգային իրավապաշտպան համակարգի, հասարակության մեջ կանանց դերի, կանանց քաղաքացիական ակտիվության ձևավորման, կանանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված ճնշման խմբերի՝ լոբբինգի տեխնոլոգիաների ու մեթոդների վերաբերյալ:

Կանանց լիդերության դպրոցում սովորել և գիտելիքներ են ստացել տարբեր քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ակտիվ կանայք:

Դպրոցի բացման արարողությանը իշխանությունների ներկայությունը հավաստում է նրանց աջակցությունը մեր աշխատանքներին:

«Կանանց քաղաքացիական մասնակցությունը և համագործակցությունը՝ աջակցություն մարզի հասարակական կյանքի զարգացմանը» ասոցիացիայի կողմից տրված փոքր դրամաշնորհի

ծրագրի շրջանակներում լիդերության դպրոցի դասընթացներ են ընթանում նաև Արարատ քաղաքում:

Դասընթացները մատուցում են բազմաբովանդակ տեղեկատվություն, որի շնորհիվ կընդլայնվի մասնակից կանանց աշխարհայացքը, և համոզված են, որ նրանք հետագայում ազատորեն կարող են քաղաքական լոբբինգով զբաղվել:

Կենտրոնի կազմակերպած սեմինարների, կյոք սեղանների քննարկումների ժամանակ ի հայտ է գալիս կանանց ակտիվ հասարակական դիրքորոշումը: Նրանք ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը, առաջարկությունները և գնահատականները: Լիդերության դպրոց գործել է նաև Մասիս քաղաքում, որը տվել է ցանկալի արդյունք: Նախապատրաստում ենք լիդերության դպրոց անցկացնել նաև Վեդի քաղաքում:

Մարզում գործող բոլոր հասարակական կազմակերպությունները համագործակցում են մարզպետարանի, քաղաքապետարանների, քաղաքական կուսակցությունների և միմյանց հետ, շփվում են մարզի բնակչության հետ, իրագել են դառնում մարզի կյանքին:

Մարզի բնակչության 55%-ը կանայք են: Մարզպետարանի 108 աշխատակիցներից 31-ը կանայք են, ունենք 2 կին վարչության և 4 կին բաժնի պետ: Արտաշատի քաղաքապետարանի 8 բաժնի պետներից 5-ը կանայք են: Արարատի քաղաքապետարանի 2 բաժնի պետներից 1-ը կին է: Վեդու քաղաքապետարանում բաժնի պետ կին չունենք: Մասիսի քաղաքապետարանի 4 բաժնի պետներից 1-ը կին է: Առողջապահության բնագավառում 49 ամբուլատորիաների վարիչներից 34-ը կանայք են: Մարզի 112 դպրոցների տնօրեններից 58-ը կանայք են: Մարզի 97 համայնքապետներից ընդամենը 1-ն է կին: Կին ավագանիների թիվն ավելացել է: Հանդիպում ենք ունեցել կին ավագանիների հետ և համատեղ ծրագրեր մշակել:

Կարծում են՝ խտրական մոտեցումը, ընտանեկան պարտականությունները, երեխաների խնամքը խոչընդոտում են կանանց առաջխաղացումը: Մեծ է, իհարկե, հասարակական կազմակերպությունների դերը կանանց ինքնավստահության ամրապնդման, կազմակերպչական հմտությունների ձեռքբերման, ղեկավար պաշտոնների ձգտելու գործում:

Ղեկավար կանայք ցուցաբերում են կարգապահություն, կազմակերպվածություն, պատասխանատվության բարձր զգացում, համայնքի հիմնահարցերի լուծման գործում ակտիվ են և հետևողական:

Անհրաժեշտ է ուժեղացնել համագործակցությունը քաղաքական կուսակցությունների կին անդամների հետ, համակողմանի տեղեկատվություն տրամադրել նրանց կանանց հասարակական կազ-

մակերպությունների գործունեության վերաբերյալ, վերջիններիս հաճախակի հրավիրել միջոցառումների: Կուսակցության գաղափարախոսությունը նշանակություն չունի, իհարկե, եթե այն չի հակասում ազգի և ժողովրդավարության շահերին: Նույնը վերաբերում է այն կանանց, որոնք արդեն հասել են իշխանության:

Հասարակական կազմակերպությունները իշխանության գրավման խնդիր չունեն և դրանով իսկ տարբերվում են քաղաքական կուսակցություններից: Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն գործունեության իր գերադասելի ոլորտն ունի: Մեր գործունեության դաշտը պետք է մաքուր լինի: Ասում են՝ քաղաքականությունը «սպիտակ ձեռնոցներով» չեն իրագործում: Մեզ անհրաժեշտ է, որ կազմակերպությունների «ձեռնոցները» մաքուր լինեն:

Մեզ համար միևնույն չէ, թե ում ձեռքում է գտնվում իշխանությունը Հայաստանում, ինչ քաղաքականություն է վարվում: Եվ այդ տեսանկյունից հրատապ է կանանց մասնակցությունը քաղաքականությանը և երկրի կառավարմանը: Այսօր կնոջ մասնակցությունը հասարակական կազմակերպությունների աշխատանքներին առավել ակտիվ է, քան կուսակցական կազմակերպություններին, քանի որ գաղափարական կուսակցական պայքարը ոչ միշտ է, հոգեհարազատ կնոջը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ իրենց համոզմունքով և մտավոր ներուժով կանայք ռեալ ուժ են՝ ունակ ներազդելու ժողովրդավարական վերափոխումների գործընթացի վրա, և այդ ներուժի խելամիտ ու նպատակային օգտագործումը, անշուշտ, դրական արդյունք կտա քաղաքացիական հասարակության ձևավորման գործում: Մրանից հետևում է, որ իշխանությունն ունի կնոջ կարիքը, ոչ թե կինը՝ իշխանության:

Ի մի բերելով՝ կցանկանայի ևս մեկ անգամ շեշտել, որ կինը քաղաքականության մեջ և՛ կին-մայր է, և՛ կին-աշխատավոր, և՛ կին-խորհրդարանական, և՛ կին-նախարար: Կարևոր է, որ այն, ինչ անում է նա, անի քաղաքացիական պարտքի դիրքերից, ընտանիքի, հասարակության, երկրի, մարդկության ճակատագրի համար պատասխանատվության մեծ գիտակցությամբ: Հենց այդպես էլ վարվում է հայ կինը. նա չի պատկերացնում իր կյանքն առանց ընտանիքին, ժողովրդին ու երկրին ծառայելու: Հասարակությանը ծառայելը սկսվում է ընտանիքին ծառայելուց, ոչ ստրկական հնազանդությունից, այլ ծառայելուց. սա է կնոջ մեծագույն առաքելությունը, քանի որ «ծառայել» նշանակում է ինքնամոռացություն, իմաստություն ու ինքնագոհություն, այսինքն՝ այն ամենը, ինչ քաղաքացուց պահանջում է հասարակությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՈՒՄ Է, ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՉԳՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Նարինե Գավթյան

Աշխարհանքի և սոցիալական հեղափոխությունների ազգային ինստիտուտի մասնագիտական ուսուցման և կադրերի վերապատրաստման բաժնի պետ, «Հայրուր» սոցիալ-տնտեսական և մշակութային ՀԿ գործադիր տնօրեն

Նեղոսը աշխարհում ժողովրդավարությունը դառնում է կենսակերպ:

Հայաստանում նույնպես ժամանակակից քաղաքական և տնտեսական փոխակերպումները ժողովրդավարական բովանդակություն ունեն: Ժողովրդավարության արդիականությունն այն է, որ այդ գործընթացները տեղի են ունենում թե՛ ժողովրդավարական ուղին բռնած առանձին երկրներում, թե՛ միջազգային կառույցներում:

Այսօր շատ է խոսվում քաղաքացիական հասարակության մասին: Սակայն ոչ բոլորն են գիտակցում, որ քաղաքացիական հասարակության կարևոր բաղադրատարրը ինքնակազմակերպման իրավունքն է: Ծիշտ է, հայ հասարակությանը այսօր հատուկ է հասարակական տարբեր կառույցների և ասոցիատիվ ձևերի առկայությունը, սակայն դեռևս վաղ է խոսել քաղաքացիական հասարակության և հասարակական շարժման կայացման, ժողովրդավարական գործընթացների անշրջելիության մասին: Մինչդեռ գաղտնիք չէ, որ հասարակական շարժումը երրորդ սեկտորի կարևորագույն տարրն է: Միավորելով մեծ թվով մարդկանց՝ այն հնարավորություն է տալիս, նախ. ձևակերպելու առաջնահերթ հիմնախնդիրները և լուծելու դրանք, երկրորդ՝ քարոզարշավ ծավալելու և երրորդ՝ «ստիպելու» իշխանություններին, եթե ոչ լիովին, ապա գոնե դրանց ինչ-որ մասը ներգրավել իր գործունեության մեջ:

Հասարակական սեկտորի երևան գալը ինքնանպատակ չէ, այն հասարակական պահանջ է, հետևաբար՝ անհրաժեշտություն: Նա իր մեջ միահյուսում է 3 հատկանիշ՝ անկախություն, կամավորություն և անշահույթ գործունեություն: Ահա այս հատկանիշներով հասարակական սեկտորը տարբերվում է պետական և

առևտրային կառույցներից: Ցանկացած հասարակության մեջ հասարակական սեկտորը ժողովրդավարական գործընթացների զարգացման կարևորագույն տարրն է: Այն ձևավորում է նաև քաղաքական ժողովրդավարությունը, որի պարագայում առավել մեծ տեղ է հատկացվում որակական գնահատականներին: Դրանք առաջին հերթին վերաբերում են իրավական պետության ձևավորմանը, որը ժողովրդավարության կարևորագույն չափանիշներից մեկն է: Իսկ իրավական պետություն հասկացությունը ներառում է մի շարք տարրեր, մասնավորապես.

- ընտրությունների արդարությունը,
- մարդու իրավունքների պաշտպանությունը,
- արդարադատության համակարգի անկախությունը:

Հասարակական սեկտորը յուրահատուկ հասարակական ինստիտուտ է, որն իր գործունեությամբ ապահովում է սոցիալական վերարտադրության որոշակի հատվածը:

Սոցիալական վերարտադրությունը հասարակության կենսագործունեության այն ոլորտն է, որտեղ տեղի է ունենում մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էակի հնարավորությունների և ընդունակությունների դրսևորումը, վերականգնումն ու զարգացումը: Այլ կերպ ասած՝ սա այն ոլորտն է, որն ապահովում և պահպանում է այն հատկանիշները, որոնք մարդուն հնարավորություն են տալիս կատարելու հասարակության պահանջները:

Այսպիսով, կարելի է ասել, որ հասարակական կազմակերպությունները հասարակության անդամներին տալիս են սոցիալական մասնակցության հնարավորություն, ինչը նպաստում է ոչ միայն քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը, այլև խթանում է մասնակցային ժողովրդավարությունը: Սա-

կայն որպեսզի իսկապես իրականանա այս խնդիրը, ժողովրդավարական գործընթացները առաջին հերթին պետք է ներթափանցեն հենց հասարակական սեկտոր, ինչը կհանգեցնի սեկտորի ինքնամաքրմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Կարծում ենք, որ հասարակական կազմակերպությունները երկրի զարգացման գործընթացների վրա կարող են ներագրել պետության և քաղաքացիական հասարակության երկխոսության ձևավորման միջոցով, որը մասնակցային ժողովրդավարության կարևոր բաղադրատարրն է: Նման երկխոսության արդյունքում կարող են մշակվել և իրականացվել ծրագրեր, որոնք կնպաստեն հասարակության հիմնախնդիրների լուծմանը:



Ժողովրդավարական գործընթացների վրա ազդելու լավագույն միջոց է նաև հասարակական շահերի պաշտպանությունը, որը հասարակական կազմակերպությունների կարևոր գործառնություններից է: Իսկ դա հասարակական գործչից պահանջում է որոշակի գիտելիքներ և ունակություններ, որոնք նա ձեռք է բերում Ժամանակի ընթացքում: Շահերի պաշտպանությունը բարդ և պատասխանատու գործընթաց է, մարդուց պահանջում է համակարգված գիտելիքներ, փորձ, համարձակություն, մտքի ճկունություն, ուրիշի խնդիրները հասկանալու և ընկալելու կարողություն, քանի որ այս դեպքում նա հանդես է գալիս ոչ թե իր, այլ հասարակության տարբեր խավերի անունից:

Քաղաքակիրթ աշխարհում հասարակական գործիչները համարվում են պետության կառավարման գործընթացի արժեքավոր օժանդակություն: Որոշ երկրներում սոցիալական, բնապահպանական հիմնահարցերով հիմնականում զբաղվում է հասարակական սեկտորը: Այդ է պատճառը, որ հասարակական գործունեությամբ զբաղվող անձին ներկայացվում են որոշակի պահանջներ: Նա պետք է կարողանա պաշտպանել իր դիրքորոշումը և սկսած գործընթացը հասցնել ավարտին: Միաժամանակ նա պետք է լինի դիվանագետ, կարողանա հասնել արդյունավետ փոխզիջման: Համբերատարությունը, հումորի զգացումը, դիմացինի կարծիքը, տեսակետը ընդունելու կարողությունը նպաստում են նրա գործունեության արդյունավետությանը: Բացի այդ, կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ցանկացած հասարակական գործիչ առաջին հերթին ներկայացնում է իր կազմակերպությունը:

Որևէ գործունեություն իրականացնելիս հասարակական գործիչը հավաքում է տեղեկատվություն, անցկացնում է հետազոտություններ, օգտագործում բազմաթիվ մեթոդներ, ծավալում համագործակցություն:

Կարծում ենք, եկել է Ժամանակը, որ հասարակությունը գիտակցի՝ հասարակական գործունեությունը կոչում է և մասնագիտություն, որն անձից պահանջում է մտավոր, հոգևոր և ֆիզիկական ուժերի լարում ու մեծ նվիրվածություն: Բացի այդ, հասարակական գործունեությամբ զբաղվող անհատը պետք է օժտված լինի անձնային այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են կազմակերպչական ունակությունները, օպերատիվությունը, ճկուն միտքը, չափի զգացումը, ապրումակցումը, դիմացինին լսելու կարողությունը: Այն ոչ միայն ինքնատախաղաման և ինքնադրսևորման հնարավորություն է, ոչ միայն մեծ պատասխանատվություն, այլև կոչում:

ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ



Արմենուհի Կյուրեղյան

*Քաղաքացիական նախաձեռնությունների
Լոռու մարզային կենտրոնի համադասող*

Հայաստանում կանանց հասարակական շարժման համար բեկումնային կարելի է համարել 1995 թ. Պեկինում կայացած կանանց դրության մասին IV համաշխարհային խորհրդաժողովը: Դրանից հետո կանանց բազմաթիվ կազմակերպություններ փոխեցին իրենց գործունեության ուղղությունը մարդասիրական-բարեգործականից դեպի սոցիալ-հասարակական:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև մեր տարածաշրջանում, գործում են մի շարք կազմակերպություններ, որոնց առաքելությունն այս կամ չափով ուղղված է կանանց հիմնախնդիրներին, ակտիվ գործունեության մեջ կանանց ներգրավելու նոր ձևերի ու կազմակերպական համագործակցության նոր եղանակների որոնմանը:

Խոսելով մեր տարածաշրջանի մասին կարելի է ասել, որ շարունակվում է կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցության մեխանիզմների որոնումը, կուտակվում է ժողովրդավարական գործընթացի խորացմանը, կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված համատեղ գործողությունների փորձ: Համատեղ անցկացվում են տեղեկատվական-կրթական ծրագրեր, օրենսդրական ակտերի, օրենքների նախագծերի քննարկումներ: Ասոցիացիային կից քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնի կողմից կազմակերպվել է Կանանց լիդերության դպրոցի 7 հոսք, որոնց մասնակցել է տարբեր ՀԿ-ների, քաղաքական կուսակցությունների, ՏԻՄ կառույցների ավելի քան 200 ներկայացուցիչ: Միավլված չեն լինի, եթե ասեն, որ Լոռու մարզում կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների համագործակցության փորձը նախադրյալներ է ստեղծում ժողովրդավարական գործընթացներում կանանց մտավոր ներուժի, կրթական ռե-

սուրսների ներգրավման համար և նոր հնարավորություններ է ստեղծում քաղաքացիական հասարակության կայացման գործընթացներում կանանց մասնակցության համար:

ՀԿ-ների, քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների համագործակցության փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց հասարակական շարժումը մի տեսակ միջնորդի դեր է խաղում հասարակության և որոշում կայացնողների, մասնավորապես՝ քաղաքական կուսակցությունների միջև: Հասարակական կազմակերպությունները, մոտ լինելով հանրությանը, նրա տարբեր սոցիալական խմբերին, ավելի ծանոթ են նրանց հիմնախնդիրներին, նրանց կողմից առաջ քաշված հարցերի լուծման անհրաժեշտության առաջնահերթությանը, հասարակության համար տվյալ հարցի հնարավոր լուծումներից ամենաընդունելիին: Միմյանց հետ, քաղաքական կուսակցությունների, նրանցում գործող կանանց խորհուրդների հետ համագործակցելով՝ ՀԿ-ները տեղ են հասցնում բոլոր մոտեցումները, իսկ շրջահայաց կուսակցությունները կամ ընդունում են դրանք և հասարակության մեջ ավելի ընդունվելու դրական փորձ ձեռք բերում, կամ մերժում են՝ բացասական գնահատականի արժանանալով:

ՀԿ-ները, հեռու լինելով անմիջապես որոշում կայացնելու գործընթացից, հեռու չեն դրանց վրա ազդեցություն ունենալու հնարավորությունից:

Հասարակական կազմակերպությունների համագործակցության օրեցօր կուտակվող փորձը հասարակության մեջ ձևավորում է այն գիտակցությունը, որ կանանց հիմնահարցերը միայն իրենցը չեն, որ հասարակության վերափոխման հիմնահարցերը չեն կարող լուծվել առանց կանանց: Ավելի ու ավելի են կանանց ՀԿ-ների քննարկման առարկա դառնում Հայաստանի քաղաքական ինքնորոշման ու հասարակության տնտեսական զարգացման հարցերը: Կանայք ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում Հայաստանի ապագայի խնդիրներին: Այսօր արդեն

ակնհայտ է, որ այդ ապագան մեծապես կախված է նաև կանանցից: Նրանք գիտակցում են Հայաստանի հետագա զարգացման հարցում իրենց պատասխանատվությունը:

Այս ամենով հանդերձ, չի կարելի չնկատել, որ տարածաշրջանում կանանց ՀԿ-ների համագործակցությունը բավարար չէ: Շատ հարցերում մեր ՀԿ-ները գործում են անջատ-անջատ՝ չիմանալով նույնիսկ, թե տվյալ հիմնախնդրով որ ՀԿ-ներն են արդեն գործում և ինչպես:

Կլիմի՞ արդյոք Հայաստանում բաց, սոցիալական կողմնորոշումով մարդասիրական հասարակություն. դա մեծապես պայմանավորված է կանանց հասարակական շարժման հետագա զարգացմամբ, հասարակության վերափոխումների հետագա գործընթացում կանանց ընդգրկվածության աստիճանով, ձևավորվող քաղաքացիական հասարակության ժողովրդավարական գործընթացներում կանանց քաղաքացիական դիր-

քորոշմամբ, մասնակցությամբ ու ակտիվությամբ: Իսկ այդ զարգացումը, ընդգրկվածությունն ու ակտիվությունը կրազմապատկվեն, եթե հանրությանը հուզող կարևոր հիմնահարցերի առաջադրան, դրանց լուծումների որոնման ռազմավարությունների մշակման համար կանանց հասարակական կազմակերպությունները, նաև քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդները, գործարար ոլորտի կանայք միավորեն իրենց գաղափարները, ջանքերն ու միջոցները, գործեն միասին ու համերաշխ: Այդ գիտակցումով էլ Լոռու մարզի մի շարք հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների և գործարար ոլորտի կին ներկայացուցիչներ ստեղծեցին «Կանանց համերաշխություն» միավորումը: Մնում է հուսալ, որ այդ համերաշխությունը կարտահայտվի շատ հարցերում և շատ արագ կտա իր դրական պտուղները:

ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՆ, ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՊԱՐԶ: ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ



Սվետլանա Քառյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Ալավերդու մասնաճյուղի նախագահ

Այս տարվա դեկտեմբերին լրանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի ընդունման երեսուն տարին: Դրա որոշ դրույթներ և, մասնավորապես, սեռի հատկանիշով խտրականության բացառման սկզբունքը ներառվել են աշխարհի շատ երկրների սահմանադրություններում, իսկ կամընտիր արձանագրությունը կանանց համար նոր հնարավորություններ է ստեղծում ազգային բոլոր միջոցները սպառելուց հետո անձնապես կամ կազմակերպությունների միջոցով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի բողոքներ ներկայացնելու կոնվենցիայով պաշտպանված իրավունքների խախտման մա-

սին: Ինչպես հայտնի է, Հայաստանը վավերացրել է կոնվենցիան 1993 թ. հունիսին, իսկ կամընտիր արձանագրությունը՝ բոլորովին վերջերս՝ 2006 թ. մայիսին:

2009 թ. հունվարի 19-23-ը Ժնևում Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանի առաջին նիստում քննարկվել են Հայաստանի Հանրապետության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցները 2002-2007 թթ. ընթացքում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի նստաշրջանի ընթացքում քննարկվել է նաև Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցը և Կանանց

համահայկական միության սովերային գեկույցը:

Կարծես ամեն ինչ պարզ է, հստակ, ծրագրերը՝ որոշակի: Սակայն՝ առաջին հայացքից:

Թվում է, թե ժողովրդավարության մասին ամեն ինչ ասված է, ամեն ինչ պարզ է: Սակայն կյանքն ամեն օր նորանոր խնդիրներ ու պահանջներ է առաջադրում ժողովրդավարական համակարգին: Ուստի ժողովրդավարական կառույցները և գաղափարները չի կարելի պատկերացնել մեկընդմիջ տրված, քարացած կաղապարների տեսքով:

Հայաստանի զարգացման ներկա փուլում ժողովրդավարության հաստատման և կայուն զարգացման խնդիրը պահանջում է սոցիալական հավասարակշռված ռազմավարություն օրենսդրության և պետական քաղաքականության իրականացման գործընթացներում: Փորձեմ հակիրճ ներկայացնել քաղաքական կուսակցությունների հետ ՀԿ-ների համագործակցության մեր փորձը՝ բնավ նպատակ չունենալով գունագարդել արձանագրվող ընդհանուր առաջընթացը և ակտիվությունը:

Հայ կինը բնավորությամբ եղել է տղամարդուն զիջող: Բայց հասարակության կեսից ավելին կանայք են, և կնոջ ձայնը պետք է լսելի լինի: Կանայք կարծես միայն սև գործն անելու համար են ծնված: Բայց հիմնականում կանանց ուժերով կայացավ ՀԿ սեկտորը: Այսօր կանայք հավասարապես կան բոլոր կազմակերպություններում, բայց ընտրացուցակներում և այլուր մի տեսակ հետին պլանում են:

Գուցե մեր քաղաքում հասարակական կազմակերպությունները պատշաճ ակտիվություն չունեն, բայց և ակնհայտ է մեր համագործակցությունը Կարմիր խաչի տեղական կազմակերպության, «ԵՐԻՍԱԿ» երիտասարդական կազմակերպության, «Վահագնի 21» և «Գթություն» ՀԿ-ների հետ: Մենք մեզ համարում ենք ՀԿ-ների տարածքային կոորդինացիոն խորհրդի ակտիվ թևերից մեկը:

Համատեղ միջոցառումները բնապահպանական, սոցիալական օժանդակության կազմակերպման, բնակչության շրջանում օրենսդրության մասսայականացման ուղղությամբ մեր առօրյա ուղենիշներն են: Մեր համատեղ աշխատանքում առանձնակի տեղ են գրավում բնակչության

սանիտարահիգիենիկ, համաճարակալին գիտելիքների տարածումը, առանձին բժշկական օգնության կազմակերպումը և դրա զանգվածային ուսուցումը: Մեր ուշադրության կենտրոնում են տոները, հոբելյանները, հատկապես տարեցների ու վետերանների հետ տարվող աշխատանքը՝ առանց քաղաքականացնելու կատարվող աշխատանքները: Մենք համագործակցում ենք նաև քաղաքական կուսակցությունների, տարածքային կազմակերպությունների հետ: Հատկապես օգտակար է մեր գործունեությունը Հանրապետական կուսակցության հետ: Ի դեպ, նրա կանանց թևը ներկայացնում է թիվ 1 դպրոցի տնօրեն, փորձված մանկավարժ Մելիքյան Մարանջյանը, ում հետ համագործակցելը հեշտ է և պարտավորեցնող:

Մենք գործում ենք համագործակցության մեջ ենք նաև արհմիությունների հետ: Կրթության աշխատողների, կառավարման և սպասարկող կազմակերպությունների, մշակույթի աշխատողների արհմիութենական կազմակերպությունները մեր ամենօրյա գործընկերներն են: Փոխադարձ խորհրդատվությունները, համատեղ միջոցառումները, կարծիքների ընդհանրացումները նպաստում են հասարակության մեջ մեր դերի ամրապնդմանը:

Այս տարվա հուլիսի վերջին ասոցիացիայի Ալավերդու մասնաճյուղի անդամները քաղաքում գործող ՀԿ-ների («Վահագնի 21» հասարակական նախաձեռնությունների կենտրոն, Կարմիր խաչի մասնաճյուղ և այլն), սոցիալական աջակցության Ալավերդու «Օրհուս» կենտրոնի աշխատակիցների ներկայացուցիչների, տարբեր կազմակերպություններում իրավաբանական ծառայություններ իրականացնող Հրաչյա Թանդիլյանի, Սասուն Խեչումյանի մասնակցությամբ անհատական և խմբակային քննարկումներ են ծավալել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի շուրջ, որը ամփոփվել է կլոր սեղանում:

Հիմնականում հավանություն է տրվել ներկայացվող նախագծին, ընդունվել են նաև «Գեներալային հավասարության հարցերի օրենսդրությունը Եվրոպայում և ԱՊՀ երկրներում» վերլուծական տեղեկանքում ներկայացվող դրույթներ:

որը: Կարևորվել է մեկ միասնական օրենքի ընդունումը, որն ընդգրկում է հիմնախնդրի բոլոր հնարավոր դրսևորումները: Օրենքի հիմնավորված և ընդգրկուն լինելու մասին է խոսում օգտագործված հիմնական հասկացությունները:

Քննարկման մասնակիցները, կարևորելով գենդերային քվոտավորման համակարգի ներդրումը, միաժամանակ մտահոգություն են հայտնում հնարավոր ծայրահեղության և տղամարդկանց իրավունքների ոտնահարման հավանականության մասին: Առաջարկվում է քվոտաներ սահմանելիս ամրագրել նաև այլ նորմեր՝ կրթական ցենզ, կենսափորձ և այլն:

Կարծիքներ եղան նաև քննարկվող օրենքում ՀՀ նախագահին կից Հանրային խորհրդի համապատասխան հանձնաժողովի դերակատարության ամրագրման մասին՝ հանձնաժողովին վերապահելով որոշակի իրավասություններ: Խիստ կարևորվեց նաև ՀՀ ղեկավարության, օրենսդիր մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող գենդերային քաղաքականության ամրագրումը օրենքի 6-րդ գլխում: Հույս հայտնվեց, որ օրենքի դրույթները չեն մնա որպես դեկլարատիվ արտահայտություններ, այլ կդառնան ամենօրյա գործունեության ծրագրեր:

Օրենքի 38-րդ հոդվածում՝ «Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ֆինանսավորումը» առաջարկվում է ավելացնել ոլորտի ՀԿ-ների աջակցության պետական մոտեցումներ ամրագրող դրույթ:

Մեր առօրյայում շարունակվում են առաջին պլանում մնալ սեմինարները և քննարկումները: Վերջերս ասոցիացիայի մարզային կառույցի ներկայացուցիչ Արմինե Կյուրեղյանը Ալավերդու թիվ 2 դպրոցում ասոցիացիայի անդամներին և քաղաքի կրթության ոլորտի աշխատողներին ներկայացրեց «Ընդդեմ գենդերային բռնության» թեման՝ այն դարձնելով իրազեկման և ուսանելի բանավեճի առարկա:

Ի՞նչ է ստացվում համագործակցության արդյունքում: Առաջին հերթին ակտիվանում է կանանց քաղաքական մասնակցությունը: Մեզ մոտ կանայք քիչ չեն կառավարման ղեկի մոտ. 10 դպրոցների տնօրենները, զբաղվածության կենտրոնի տնօրենը, գանձապետը կանայք են:

Կանանց թիվը մեծ է նաև քաղաքապետարանի կառույցում, ներկայացուցիչներ ունենք համայնքի ավագանու կազմում, ոստիկանության տարածքային ծառայությունում:

Կարծում են՝ արդարացված են նաև աղքատության հաղթահարմանն ուղղված մեր ձեռնարկումները: Աճում է նաև կանանց թիվը փոքր և միջին բիզնեսում: Շարունակվում է բնակչությանը իրավական, առողջապահական, մանկավարժական գիտելիքներով զինելը: Ո՞ւմ դիմել, ե՞րբ, ի՞նչ հարցերով. այս հարցերի պատասխանները դառնում են պարզ և մեղմացնում լարվածությունը, ստեղծում փոխըմբռնման մթնոլորտ:

Շատ կարևոր է, որ ասոցիացիայի կողմից իրականացվող ծրագրերը ներառեն նաև մարզերը, հատկապես հեռավոր և սահմանային բնակավայրերը: Բավական ժամանակ է անցել, բայց դեռ հնչում են մեր կողմից իրականացված «Օրորոց» ծրագրի (օգնություն կազմակերպվեց հղի և նորածին ունեցող մայրերին) արձագանքները: Արդյունավետ է մեր համագործակցությունը հատկապես Ալավերդու քաղաքապետարանի հետ: Նաև մեր առաջարկներն են հաշվի առնվել քաղաքապետարանի կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերի շրջանակում հղի կանանց և պալարախտով հիվանդներին, մանկապարտեզների սաներին լրացուցիչ սննդի տրամադրման խնդրում: Մենք գնահատում ենք նաև այս ծրագրերի շրջանակներում համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին առողջարանների ուղեգրերի տրամադրումը և դպրոցականների հանգստի կազմակերպումը Վանաձորի ճամբարում: Ափսոսանք ենք հայտնում, որ տրամադրվող գումարները նվազել են, և որոշ ծրագրերի հետ օրակարգից դուրս են մնում վերջին երկու ծրագրերը:

Ուզում են հավաստել, որ մոտ է այն օրը, երբ այլևս չենք խոսի գենդերային փորձաքննության հիմնախնդիրների, կանանց կամավոր կամ հարկադրական պասիվության, ՀԿ-ներում տիրող ձևականությունների, քաղաքական կուսակցություններում անհիմաստ տրոհումների և զգվոտոցների մասին: Ուրեմն ազգովի ականջալուր մնանք մեծատաղանդ Չարենցին՝ «Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԻԱՐԺԵՔ ԱՆԳԱՄՆԵՐ, ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՎ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՄՔ, ՉԵՌՆԱՄՈՒԽ ԼԻՆԵՆՔ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾԵՐԻ



Գրեհա Գրիգորյան

Համալսարանական կրթությամբ կանանց
ասոցիացիայի Վեդու մասնաճյուղի նախագահ

Հասարակության փոխակերպման ժամանակաշրջանը ենթադրում է անհատի դիրքերի ամրապնդում, պետական հարկադրանքի մեխանիզմի սահմանա-

փակում, արդարացի կառուցվածքի հաստատում:

Այս ամենը հնարավոր է որոշակի սոցիալական և մշակութային մթնոլորտի ստեղծման դեպքում, որը հիմնված լինի քաղաքացիական շահերի լայն սպեկտոր և քաղաքացիական հասարակության առկայություն նախատեսող ժողովրդավական արժեքների վրա:

Քաղաքացիական հասարակությունը ենթադրում է բոլոր քաղաքացիների ունակությունների իրացման հավասար հնարավորություններ, քաղաքացիական մասնակցության բարձր աստիճան, որոնք ժողովրդավարական վերափոխումների անշրջելիության և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման երաշխիքն են:

Այս խնդիրների հաջող իրականացման համար անհրաժեշտ է նպատակաուղղված գործունեություն ժողովրդավարական վերափոխումների գործընթացներում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց ընդգրկման ուղղությամբ:

Հայաստանում անցումային շրջանում այս գոր-

ծընթացները խիստ դանդաղ են, իրական փաստերի վերլուծությունը ցույց է տալիս հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում գեղեցիկ անհամաչափության խորացում, ակտիվ քաղաքական կյանքից կանանց օտարում:

Անցումային շրջանը՝ իր դժվար լուծելի սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրներով, առանձնապես բացասաբար անդրադարձավ կանանց վրա: Հասարակական կարգի կտրուկ փոփոխության սոցիալական հետևանքները, ձեռնարկությունների զանգվածային լուծարումը և գործազրկությունն ու աղքատությունը, որոնք «կանացի դեմք» ստացան, ինչպես նաև տնտեսական առավել ակտիվ տղամարդկանց արտագաղթը կնոջը դրեցին սոցիալ-տնտեսական նոր պայմանների մեջ:

Դրանից զերծ չմնացին նաև Վեդի քաղաքում ապրող և աշխատող ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք:

Կատարվեց գործարանների և հողի սեփականաշնորհում: Վեդի քաղաքի մտավորականությունը չօգտվեց այդ սեփականաշնորհումից, գումարվեց գործազրկությունը, հետևանքն այն էր, որ շատերը լքեցին հայրենի քաղաքը՝ աշխատանք փնտրելով այլ հանրապետություններում, և ընտանիքի պահպանման ու կերակրման ամբողջ ծանրությունը ընկավ կանանց ուսերին:

ՂԵԿԱՎԱՐ ԿԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՆԱԵՎ ԻՐ ՄԵՌԸ



Նելլի Բեգարյան

«Արարատ» թերթի խմբագիր

«Մասնակցության ժողովրդավարություն. կանանց քաղաքացիական ակտիվությունը մարզի զարգացման գործընթացներում՝ որպես քաղաքացիական հասարակության նախադրյալ» թեմայի շրջանակներում նոյեմբերի 5-ին Արարատի մարզպետարանի դահլիճում կազմակերպվեց համաժողով, որին մասնակցում էին մարզպետարանի և քաղաքապետարանների պաշտոնատար անձինք, հա-

սարակական և քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ, դպրոցների տնօրեններ, մանկավարժներ, գյուղապետներ, հասարակական ակտիվություն ցուցաբերող կանայք: Ողջունելով մասնակիցներին՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արտաշատի մասնաճյուղի նախագահ Վարդիթեր Գազարյանն ասաց, որ նմանատիպ համաժողով առաջին անգամ է գումարվում, որը հաջորդել է մինչ այդ տարածաշրջաններում կազմակերպված կտր սեղաններին:

Մարզպետի անունից ողջունելով մասնակիցներին՝ մարզպետի տեղակալ Աշոտ Մուրադյանը

կարևորեց կանանց դերը մարզի հասարակական-քաղաքական կյանքում, որն առավել տեսանելի է դարձել և կնպաստի ժողովրդավարության զարգացմանը: Աշոտ Մուրադյանը բարի երթ մարտեց մասնակիցներին՝ հուսալով, որ օրն արդյունավետ և նպատակասլաց կանցնի:

Օրակարգը հազեցած էր բազմաթիվ հարցերով և զեկուցումներով, որոնք մտնեցին առողջ և ակտիվ քննարկման, արդյունավետ բանավեճի:

Համաժողովին ներկա էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ջենմա Հասարայանը, ով մեկ անգամ չէ, որ հանդիպում է մարզի ակտիվ կանանց հետ: Նրա ողջույնի խոսքն էլ դրա հավաստումն էր: Ջենմա Հասարայանը ընդգծեց, որ պետական կառավարման մարմիններն արդեն գիտակցում են, որ հասարակական կազմակերպությունները կարող են ակտիվ և դինամիկ զարգացմամբ աշխատանք տանել տարբեր ոլորտներում: Դա տեսանելի է ոչ միայն կրթության բնագավառում, այլև լիդերության դպրոցների պարապմունքներում, որոնք իսկապես շարժիչ խթան են կանանց քաղաքացիական ակտիվության զարգացման գործում: Այս ծրագրի խնդիրն է ավելի շատ խթանել և զարգացնել ակտիվությունը հատկապես տարածաշրջաններում՝ միաժամանակ ամփոփելով նախորդ տարիների կատարված աշխատանքը:

Քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնի ղեկավար Անահիտ Խաչատրյանի ելույթը՝ «Կանանց քաղաքացիական ակտիվությունը մարզի զարգացման գործում» որպես քաղաքացիական հասարակության նախադրյալ», հազեցած էր օրինակներով և փաստերով, հետաքրքիր դրույթներով՝ կանանց տեղի ու դերի, նրանց մասնակցության խնդրի վերաբերյալ: Այն համոզմունքը կար, որ հայ կանայք ունակ ուժ են, նրանց պետք է գնահատել և առաջ քաշել, նպաստել գործունեության ակտիվացմանը: «Եթե տղամարդ ղեկավարը ներկայացնում է իրեն, ապա կին ղեկավարը՝ նաև իր սեռը» միտքը լավ ընդունվեց ներկաների կողմից:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Վեդու մասնաճյուղի նախագահ, թիվ 2 դպրոցի տնօրեն Գրետա Գրիգորյանը հանգամանորեն անդրադարձավ «Կանանց քաղաքացիական ակտիվությունը տարածաշրջանի զարգացման գործընթացներում» որպես քաղաքացիական հասարակության նախադրյալ» թեմային՝ հատկապես կանգ առնելով անցումային ծանր տարիներին կանանց դժվարին և մաքառումներով լի աշխատանքին, երբ շատ տղամարդիկ, չդիմանալով այդ պայմաններին, լքեցին երկիրը՝ օտար ափերում աշխատանք որոնելով: Ներկայումս այն ոլորտներում, որոնցում ղեկավարները կանայք են, ուշադրություն է դարձվում կա-

մանց հիմնախնդիրներին:

«Թույլ սեռի» շրջանում աշխուժություն է նկատվում փոքր բիզնեսի զարգացման ուղղությամբ և հատկապես ՏԻՄ ընտրությունների ժամանակ: Այս վերջին թեման ծավալվող բանավեճի նյութ դարձավ ինչո՞ւ կանայք չեն ցանկանում մասնակցել ավագանու կամ գյուղապետի ընտրություններին կամ, որ առավել կարևոր է, խորհրդարանի ձևավորման ժամանակ: Այս հարցին իր զեկուցման մեջ մանրամասն անդրադարձավ ՀՀԿ Արարատի մարզի կանանց խորհրդի նախագահ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արարատի մասնաճյուղի անդամ Սոնա Պողոսյանը, որի ելույթի թեման վերաբերում էր մարզում կանանց լիդերության կառուցվածքային՝ հոգեբանական և վարքային խոչընդոտներին: Նրա կարծիքով, երբ կինը մտնում է քաղաքականության մեջ, հանդիպում է կարծրատիպերի և լուրջ խոչընդոտների, որոնցից ամենակարևորը հոգեբանականն է: Մինչդեռ հարկավոր է առաջին հերթին վերացնել հենց դա, խուսափել «ի՞նչ կասեն» մտայնությունից, և եթե կինը վստահ է իր ուժերին, պետք է վեր կանգնի ամեն կարգի բամբասանքներից, կանացի նախանձից ու զազրախոսություններից, աշխատի հանուն հասարակության՝ քաղաքացիական մեծ ակտիվություն դրսևորելով:

Կնոջ սոցիալ-տնտեսական դերի բարձրացման, նրա ներուժի և էլի շատ արժանիքների, գյուղի կանանց հիմնախնդիրների մասին խոսեցին մարզպետարանի առաջատար լրագրող Քրիստինե Խաչատրյանը, Վեդիի ՀՕՄ-ի ղեկավար Հռիփսիմե Հարությունյանը, Արարատի թիվ 2 դպրոցի տնօրեն Ջինա Հովհաննիսյանը, մարզպետարանի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ Գագիկ Պողոսյանը, Արարատի կանանց խորհրդի փոխնախագահ Լենա Հակոբյանը և ուրիշներ:

Ջենմա Հասարայանը, ուշի-ուշով լսելով բոլոր կարծիքներն ու տեսակետները, խրախուսեց նման բանավեճերի ակտիվ ծավալումը, հույս հայտնեց, որ նման քննարկումները կօգնեն հետագա աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելուն:

Կանանց ակտիվությունը դրսևորվեց նաև սեկցիոն աշխատանքների ժամանակ, ուր երեք խմբի բաժանված՝ նրանք քննարկեցին «Կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը մարզի զարգացման գործում», «ՀԿ-ների և ՁԼՄ-ների համագործակցությունը ժողովրդավարության գործում» և «ՏԻՄ-երի ու ՀԿ-ների համագործակցությունը քաղաքացիական մասնակցության գործում» թեմաները: Համաժողովի մասնակիցներն ընդունեցին համաձայնագիր համագործակցության և սոցիալական գործընկերության վերաբերյալ:

ԿԱՆԱՆՅՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՈՐՊԵՍ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՉՐԱՅՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Անահիտ Խաչատրյան

Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնի համադասուող

Ուրախալի է, որ Հայաստանում հասարակական կազմակերպություններն աստիճանաբար ավելի են կայանում, և կարծում են, արդեն մոտենում է այն ժամանակը, երբ հասարակական կազմակերպությունները մեր երկրում դառնան կարևոր գործոն: Այսինքն՝ հասունացել է պահը, երբ հասարակությունը պետք է ինքնակազմակերպվի և ազդի քաղաքական զարգացումների վրա: Հայաստանում թույլ են քաղաքացիական նախաձեռնությունները, ինչը բացատրվում է փորձի պակասով և հասարակական տարբեր խավերին բնորոշ իներտությամբ:

Այդ առումով շատ կարևոր է տվյալ ուղին բռնած հասարակական կազմակերպությունների փորձը:

Հասարակական-քաղաքական պասիվության հաղթահարման, քաղաքացիական ակտիվության խթանման հիմնական տարբերակներից մեկը ժողովրդավարական կառույցների ցանցի զարգացումն է:

Նման արդյունավետ աշխատանքի օրինակ են Հայաստանի Հանրապետության 4 մարզերում 2005 թվականից գործող քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնները:

Կարևորելով մարզում կանանց քաղաքացիական գիտակցության և աշխատանքային ներուժի զարգացումը՝ ստանձնել են քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնի աշխատանքների կազմակերպումը:

մակերպումը:

Աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար ստեղծվել է կոորդինացիոն խորհուրդ, որի անդամները տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ են, և գրեթե բոլորն էլ ավարտել են ասոցիացիայի կազմակերպած լիդերության դպրոցի դասընթացները և պատրաստակամ իրենց փորձն ու գիտելիքները կիրառում են տեղերում:

Կենտրոնի կազմակերպած միջոցառումների միջոցով հաղորդած գիտելիքները նպաստում են կանանց քաղաքացիական գիտակցության ձևավորմանը, ինչպես նաև օգնում հաղթահարելու հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպերը:

Մարզային կենտրոնի ակտիվ աշխատանքները հանգեցրել են հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների համագործակցությանը իշխանությունների հետ:

Կենտրոնի աշխատանքների միջոցով ակտիվացել է մարզի կանանց քաղաքացիական մասնակցությունը, բարձրացել է մասնաճյուղերի աշխատանքների արդյունավետությունը:

Քաղաքացիական նախաձեռնությունների մարզային կենտրոնի ծրագրի շրջանակներում անցկացրել ենք գեներալային գիտելիքների ուսուցում մարզի հանրակրթական դպրոցներում:

Սեմինարների, կլոր սեղանների քննարկումների ժամանակ ի հայտ է գալիս կանանց ակտիվ հասարակական դիրքորոշումը: Նրանք ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը, առաջարկությունները և գնահատականները:

Կենտրոնի ծրագրի շրջանակներում Արտաշատ քաղաքում գործել է Կանանց լիդերության դպրոց, որտեղ սովորել և գիտելիքներ են ստացել տարբեր քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ակտիվ կանայք:

Այդ դասընթացները հնարավորություն տվեցին կանանց ամրապնդելու իրենց վստահությունը և դրսևորելու անձը:

Չափազանց կարևորում է դպրոցի դասընթացներին իշխանությունների ներկայությունը, որը հավաստում է նրանց աջակցությունը մեր աշխատանքներին:

Կենտրոնն իր աշխատանքներում շատ է կարևորում գենդերային հիմնախնդիրները գյուղում և կազմակերպում է կլոր սեղաններ, որտեղ քննարկվում է, թե ինչպես են գյուղական համայնքներում արմատավորված գենդերային կարծրատիպերը կանանց առաջընթացի խոչընդոտներ ստեղծում:

Մարգալին կենտրոնն ակտիվորեն համագործակցում է տեղի ՋԼՄ-ների հետ, պարբերաբար մարգալին, քաղաքային թերթերում և հեռուստակենտրոնով լուսաբանվում են մեր աշխատանքները:

Կենտրոնի նախաձեռնությամբ կանանց համերաշխության, գենդերային տեղեկատվության բարձրացման նպատակով կազմակերպվել է հանդիպում Արտաշատի լիդերության դպրոցի շրջանավարտների հետ:

Մի նախաձեռնություն ևս՝ «Գենդերային հավասարակշռությունը ավագանիների կազմում», որի նպատակն էր հանդիպում կազմակերպել կին ավագանիների հետ և համայնքների բյուջեների քննարկման ժամանակ գուժար հատկացնել համայնքներում կանանց հիմնախնդիրների լուծման համար:

Կենտրոնն ակտիվորեն մասնակցեց մարգալին համաժողովի աշխատանքներին, որտեղ ներկայացրեց մարզի կանանց քաղաքացիական մասնակցության վերլուծությունը:

Կենտրոնի աշխատանքների միջոցով մեր փորձն ու գիտելիքները փոխանցել ենք երիտասարդությանը՝ նրանց նախապատրաստելով նախագահի, ԱԺ, ՏԻՄ ընտրություններին:

Գնահատելով կենտրոնի աշխատանքները՝ կարելի է նշել, որ յուրաքանչյուր հանդիպում մարզի կյանքի տարբեր ոլորտների համար պատասխանատու անձանց հետ հանգեցնում է հասարակական կազմակերպությունների աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման, պետական աշխատողների շրջանում նրանց գաղափարների տարածման, հասարակական-քաղաքական նախաձեռնությունների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման:

Հասարակական կազմակերպության և քաղաքական կուսակցությունների լիդերների, ակտիվիստների հետ յուրաքանչյուր հանդիպում նպաստում է գործնական և ոչ ֆորմալ հասարակական-քաղաքական նախաձեռնությունների իրականացման պայմանների ստեղծմանը:

Տեղեկատվական ընդարձակ դաշտում քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը կանանց հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու, ձևավորելու սեփական պատկերացումները քաղաքացիական հասարակության վերաբերյալ և այդ ամենն ի սպաս դնելու հասարակության լիիրավ անդամների ձևավորման գործին:

Մարգալին կենտրոնի ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինարների, կլոր սեղանների շնորհիվ կանայք դառնում են համարձակ, պատասխանատու իրենց շրջապատի նկատմամբ, գիտակցում են հասարակական կյանքում տեղի ունեցող տնտեսական, քաղաքական և այլ փոփոխությունները, ձեռք բերում հստակ ու ճշգրիտ որոշումներ կայացնելու հմտություն, սեփական տեսակետը հստակ ձևակերպելու ճկունություն:

Հետևաբար նաև մարգալին կենտրոնի ընդլայնմամբ և աջակցությամբ է պայմանավորված կանանց քաղաքական, քաղաքացիական ակտիվ մասնակցությունը, ժողովրդի և իշխանության միջև գոյություն ունեցող անջրպետի հաղթահարումը և ժողովրդավարական երկրի կայացումը:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲԱՐԳ ՈՒ ԴԺՎԱՐԻՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԷԱԿԱՆ ԴԵՐ Է ՎԵՐԱՊԱՀՎԱԾ



Կարինե Բազեյան

Ասոցիացիայի քաղաքացիական

նախաձեռնությունների Շիրակի մարզային կենտրոնի համադասող

Ժ ողովրդա-վարական պետության կառուցման բարդ ու դժվարին գործում հասարակական կազմակերպություններին՝ որպես քաղաքացիական հասարակության կարևոր ինստիտուտներից մեկի, էական դեր է վերապահված: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղը, գիտակցելով կանանց հասարակական շարժման դերը քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում, արդեն երկար տարիներ զբաղվում է մարզում գենդերային գիտելիքների տարածմամբ, որն իրականացվում է հանրակրթական դպրոցներում և մանկավարժական ինստիտուտում կրթական ծրագրերի ներդրմամբ: Մակայն դա բավարար չէր բնակչության մեջ գենդերային կարծրատիպերը վերացնելու և կանանց ու տղամարդկանց իրավահավասարության գաղափարը արմատավորելու համար: Նկատի ունենալով այդ հանգամանքը, ինչպես նաև առկա փորձագետների ներուժը՝ չորս տարի առաջ ստեղծվեց «Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի մարզային կենտրոնը»:

Կենտրոնի գործունեության գլխավոր նպատակն է քաղաքացիական հասարակության կայացման գործում Շիրակի մարզի կանանց դերի բարձրացումը, կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, կանանց քաղաքացիական նախաձեռնությունների խթանումը՝ հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների արմատավորման, ժողովրդավարական փոփոխությունների անհրաժեշտության գիտակցություն ձևավորելու, անտարբերության հաղթահարման, հասարակական երկխոսության և հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու համար:

Կենտրոնն իր առջև խնդիր էր դրել դուրս գալ

Գյումրու շրջանակից և լայն գործունեություն ծավալել մարզի մյուս տարածաշրջաններում: Դա հնարավոր էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի մարզային նոր մասնաճյուղերի ստեղծման, ասոցիացիայի ցանցի ինստիտուցիոնալ զարգացման ու ամրապնդման միջոցով: Այդ էր պատճառը, որ ստեղծման հենց առաջին տարում՝ 2006-ին, հիմնադրվեցին Արթիկի ու Մարալիկի մասնաճյուղերը, իսկ 2008 թ.՝ Ախուրյանի մասնաճյուղը: Կենտրոնը չսահմանափակվեց մասնաճյուղերի ստեղծումով, այլ գործունեություն ծավալեց դրանք ամրապնդելու, առավել ակտիվ կանանց մասնաճյուղերի աշխատանքների մեջ ներգրավելու ուղղությամբ:

Սկզբնական շրջանում կազմակերպվող սեմինարների, կլոր սեղան-բանավեճերի ընթացքում շատերը չէին ընկալում գենդերի էությունը, թերահավատ էին երկրում որևէ դրական տեղաշարժի նկատմամբ ու չէին կարևորում կանանց ներուժը հասարակության մեջ առկա բազմաթիվ հիմնախնդիրները լուծելու գործում: Դա պայմանավորված էր նրանով, որ ծայրամասերում առավել խիստ է դրսևորվում մարդկանց սոցիալտնտեսական ծանր իրավիճակը, որտեղ քաղաքացին առավել սուր է զգում իր օտարումը երկրում ընթացող բարեփոխումներից: Կենտրոնի հետևողական աշխատանքի, հմուտ փորձագետների համոզիչ ելույթների շնորհիվ կանանց մեջ սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը կամաց-կամաց տեղի տվեց, քննարկումները դարձան ավելի կառուցողական՝ մարզում առկա հիմնախնդիրների վերհանմամբ ու դրանց լուծումների առաջադրմամբ: Դրանով էր պայմանավորված այն, որ Արթիկում և Մարալիկում տեղական ինքնակառավարման մարմինների 2008 թ. ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրեցին ասոցիացիայի անդամներ Աննաման Խաչատրյանը (քաղաքապետի) և Ռուզաննա Հարությունյանը (ավագանու անդամի):

Թեև երկուսն էլ չընտրվեցին, դա կանանց քաղաքական ակտիվության բարձրացման ու սեփական ուժերին հավատալու համոզիչ փաստ էր:

Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի կենտրոնը, բացի ասոցիացիայի մարզային մասնաճյուղերի աշխատանքների արդյունավետության բարձրացումից, աշխատել է մարզում քաղաքացիական նախաձեռնությունների զարգացման, կրթական-իրազեկման և տեղեկատվական ուղղություններով: Կենտրոնը խիստ կարևորում է նաև համագործակցությունը մարզում գործող այլ ՀԿ-ների հետ, որոնցից մի քանիսի հետ («Կանայք հանուն զարգացման», «Հայաստանի Հանրապետության կանանց խորհուրդ», «Սախարովի անվան մարդու իրավունքների կենտրոն», «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն», «Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն» և այլն) իրականացվել են համատեղ միջոցառումներ: Կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ, սեմինար-կլոր սեղաններ, որտեղ վեր են հանվել ընդհանուր հետաքրքրություններ կայացնող հիմնախնդիրներ՝ առավելապես քաղաքացիական հասարակության կայացմանն օժանդակող գործընթացների ու միջոցառումների ուղղությամբ միասնական ծրագրերի իրականացման համար: Այս առումով հատկապես արդյունավետ էր մասնակցությունը 2008 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մարդու իրավունքների Սախարովի կենտրոնի կողմից իրականացվող «Գեները և ՏԻՄ ընտրությունները» ծրագրին, որն անցկացվեց «Շիրակ» հեռուստաընկերության ուղիղ եթերով: Հասարակության տարբեր խավեր ու շերտեր ներկայացնող անձանց և մեր փորձագետներ Ելենա Վարդանյանի, Կարինե Բազեյանի, Մելինե Հարությունյանի, Ռուզաննա Հարությունյանի, Արթուր Նիկողոսյանի բանավեճերը լայն արձագանք գտան բնակչության մեջ: Քննարկումները կապված էին ընտրությունների հետ, սակայն դա բացառիկ հնարավորություն էր բարձրացնելու հասարակության իրազեկության մակարդակը, պարզաբանելու գեների հայեցակարգը և ներկայացնելու գեներային հավասարությունը՝ որպես ժողովրդավարական քաղաքական մշակույթի կարևորագույն արժեք ու քաղաքացիական հասարակության կայացման գործոն:

Բավականին արդյունավետ է նաև ՉԼՄ-ների հետ համագործակցությունը: Կենտրոնի նախա-

ձեռնությունների ու աշխատանքների մասին տեղեկություններ են տվել «Կումայրի», «Շիրակ», «Տուֆաշենի առօրյան» թերթերը, «ԳԱԼԱ», «Շիրակ», «Յայգ» հեռուստաընկերությունները, «Շանթ» ռադիոն: Կենտրոնը լրագրողների համար կազմակերպել է մի շարք սեմինարներ, կլոր սեղան-բանավեճեր, որոնց նպատակն էր Գյումրու ՉԼՄ-ների ներկայացուցիչների գեներային իրազեկության բարձրացումը, գեներային հիմնախնդիրների հետագա մասսայականացումը և փոխհամագործակցության ոլորտների ճշգրտումը: Հանդիպումների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել գեներային զգայուն ու գրագետ մոտեցումներով նյութեր ներկայացնել, միասնական ծրագրեր մշակել գեներային հավասարության գաղափարի հետագա տարածման ուղղությամբ և նպաստել գեներային կարծրատիպերի վերացմանը:

Հասարակություն-իշխանություն հարաբերությունների մեջ իր՝ որպես կապող օղակի դերը գիտակցելով՝ Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի կենտրոնը հետևողականորեն փորձել է համագործակցության եզրեր գտնել տեղական ինքնակառավարման մարմինների ու կուսակցությունների տարածքային կառույցների հետ: Ցավոք, քաղաքական կուսակցությունների հետ համագործակցությունը դեռ ցանկալի մակարդակի չի հասել, այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Ինչ վերաբերում է տեղական իշխանություններին, ապա հատկապես դրական տեղաշարժեր կան մարզպետարանի ու դրա առանձին կառույցների հետ հարաբերություններում: Մասնավորապես կրթության բաժինը մեծապես նպաստում է կենտրոնի միջոցառումներին՝ հնարավորություն տալով օգտագործելու դպրոցների դահլիճները, ներկայացնելով մեծ թվով սեմինարների, լիդերության դպրոցի ունկնդիրների: Կենտրոնի միջոցառումներին ակտիվ մասնակցում են մարզպետարանում կանանց հարցերը համակարգող բաժնի անդամները, հասարակության հետ կապերի բաժնի ներկայացուցիչները, որոնց հետ փորձել ենք բարձրացնել մարզում առկա հիմնախնդիրները, առաջարկել դրանք լուծել միասնական ուժերով: Մասնավորապես, քննարկվել են «ՀՀ-ում կանանց դրության բարելավման ու հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» կատարման ընթացքը, Շիրակի կանանց քաղաքական ու քա-

ղաքացիական մասնակցության բարձրացման հետ կապված հարցերը և այլ խնդիրներ:

Մարզի կանանց ակտիվացնելու, նրանց հասարակական-քաղաքական գործընթացներում ներգրավելու, ասոցիացիայի երիտասարդ անդամներին մասնաճյուղերի աշխատանքների մեջ ընդգրկելու համար անցյալ տարվանից կենտրոնը կազմակերպում է Կանանց լիդերության դպրոց: Դպրոցի պարապմունքներին մասնակցել են մոտ քառասուն աշխատող կանայք, որոնք ներկայացնում են մարզի տարբեր հասարակական կազմակերպություններ, ՁԼՄ-ներ, հանրակրթական դպրոցներ: Դասընթացները, որոնք անցկացնում էին քաղաքի փորձված մասնագետները, վերաբերում էին ոչ միայն գեղերին, այլև քաղաքականությանը, իրավունքին, տնտեսությանը, հասարակական շարժումների պատմությանն ու արդի խնդիրներին, լիդերությանն ու այլ թեմաների, որոնք մեծ հետաքրքրությամբ էին լսվում ունկնդիրների կողմից: Բացի ավարտական ռեֆերատներից, մասնակիցները նաև գրավոր կարծիքներ են թողել դպրոցից իրենց ստացած տպավորության մասին, և արտահայտված դրական կարծիքներն ու երախտագիտության խոսքերը մեր աշխատանքների ընդհանուր գնահատական կարելի է համարել:

Ամփոփելով կարելի է ասել, որ Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի կենտրոնն իր կարճատև գործունեության ընթացքում կարողացել է մարզում ճանաչում բերեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիային՝ որպես հանրապետության ակտիվ հասարակական կազմակերպություններից մեկի, գեղերային գիտելիքները հասանելի է դարձրել մարզի լայն հասարակության համար, արդյունքում՝ ավելի հանդուրժողական վերաբերմունք է ձևավորվել գեղերային հավասարության նկատմամբ, բարձրացրել է կանանց ակտիվությունը, նրանց մեջ հավատ է առաջացրել սեփական ուժերի նկատմամբ ու գիտակցություն, որ առանց իրենց քաղաքական ու քաղաքացիական ակտիվության՝ ժողովրդավարական պետության կայացումն անհնար է:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ ԵՎ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արմենուհի Կյուրեղյան

Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնի համադաստղ

Ժողովրդավարության զարգացումն ու քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում առաջ են քաշում իշխանական կառույցների ու հասարակական սեկտորի սոցիալական համագործակցության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը: Սոցիալական համագործակցությունը ենթադրում է պետությունից հասարակական սեկտորին որոշ գործառույթների, իրավասությունների ու պատասխանատվության փոխանցում: Աստիճանաբար ձևավորվում է մասնակցային ժողովրդավարությունը, որը նպաստում է ազգային և մարզային մակարդակներում ընթացող զարգացման գործընթացներում երրորդ սեկտորի դերի բարձրացմանը:

ու նախագծերի մշակման ու քննարկման մեջ քաղաքացիների ներգրավմանը, իշխանական կառույցների որոշումների ընդունման վրա քաղաքացիների ու հասարակության ազդեցության ուժեղացմանը, ազգային, մարզային և հասարակական մակարդակներում դրանց կատարման հսկողության իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես և մեր մարզում մասնավորապես նման համագործակցության որոշակի փորձ է կուտակվել: Իրականացվում են համատեղ ինֆորմացիոն-կրթական ծրագրեր, որոնք ուղղված են բնակչության քաղաքական-իրավական գրագիտության բարձրացմանը, աճող սերնդի քաղաքացիական դաստիարակությանը: Հասարակական կազմակերպությունները մասնակցում են օրենսդրական ակտերի, մարզային զարգացման ծրագրերի, համայնքների բյուջեների քննար-

կումներին: Կիրառվում են սոցիալական համագործակցության ֆորմալ և ոչ ֆորմալ տեխնոլոգիաներ:

Լոռու մարզպետարանի և մարզի քաղաքապետարանների հետ քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնի (ՔՆԼԿ) համագործակցության փորձը ցույց է տալիս, որ մարզում ստեղծված են նախապայմաններ ժողովրդավարացման գործընթացներում քաղաքացիական հասարակության ինստիտուտների մտավոր ներուժի և կրթական ռեսուրսների առավել արդյունավետ ներառման համար: Բայց և անհերքելի է, որ իշխանական կառույցները կզման համագործակցության, ավելին՝ հաճույքով կհամագործակցեն այն հասարակական կազմակերպությունների հետ, որոնք իրենց գործունեությամբ արդեն կայացած ու հանրության կողմից ընդունված են, որոնք միշտ բարձրացնում են հանրությանը հուզող հիմնախնդիրներ թե՛ ազգային և թե՛ տեղական մակարդակներով, որոնց իրականացրած քաղաքացիական նախաձեռնությունները հասարակության ավելի ու ավելի լայն շրջաններ են ներառում:

Ահա այդ ամենին հասնելու ձգտումով է Քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնը մշակում իր գործունեության ռազմավարությունը: Կենտրոնի գործունեությունը նախ և առաջ նպատակ ունի Ասոցիացիայի աշխատանքի ընդհանուր գործընթացում ակտիվացնել Լոռու մարզի մասնաճյուղերի, ասոցիացիայի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը: Կենտրոնի գործունեությունն ուղղված է մասնաճյուղերի և այլ ՀԿ-ների ու իշխանական կառույցների հետ համագործակցության խորացմանը: Կազմակերպվել են համատեղ ինֆորմացիոն-կրթական սեմինար-պարապմունքներ, կլոր սեղան-քննարկումներ: Քաղաքապետարանների ու քաղաքապետների անմիջական աջակցությամբ Ստեփանավան և Վանաձոր քաղաքներում կազմակերպվել են մարզի Կանանց լիդերության դպրոցի հերթական VI և VII հոսքերի պարապմունքները, որոնց մասնակցել է 50 մարդ՝ ՀԿԿԱ անդամներ և այլ ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնի գործունեության նշանակալի արդյունք է մարզի մասնաճյուղերի միջև համագործակցությունը, փորձի փոխա-

նակման, համատեղ նախաձեռնությունների մշակման փորձը: Համատեղ իրականացված նախաձեռնության փորձ էր մարզի բոլոր կենտրոններում և Դիլիջանում մասնաճյուղերի կողմից «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման կազմակերպումը: Քննարկումներին մասնակցել է ավելի քան 200 մարդ, այդ թվում՝ տարբեր ՀԿ-ների, քաղաքական կուսակցությունների և ՏԻՄ ներկայացուցիչներ: Բուռն քննարկումներն ամեն տեղ ակնհայտորեն վկայում էին, որ ներկայումս որոշումների կայացման բոլոր մակարդակներում իշխող չզուգակշռված ներկայացվածությունը խորացնում է հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտը, անտեսվում են հասարակության մտավոր ներուժի ավելի քան 50%-ի մտեցումներն ու կարծիքները, և այդ իրավիճակի փոփոխությունը հնարավոր է միայն պետական քաղաքականության անմիջական միջամտությամբ, ուստի մյուս օրենքի ընդունումը չպետք է ուշացնել:

Ասոցիացիայի մարզի մասնաճյուղերի նախագահների խորհրդի հոկտեմբեր ամսին կայացած նիստում, վերլուծելով տեղերում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման արդյունքները, որոշվեց միաժամանակ հանդես գալ մեկ ընդհանուր նախաձեռնությամբ. *տեղի ՀԿ-ների, քաղաքական կուսակցությունների ու ՏԻՄ կառույցների հետ համատեղ կազմակերպել հանդիպումներ մեծամասնական ընտրակարգով ընտրաարարածքներից ընտրված ԱԺ պարզամավորների հետ լայն հասարակայնության հանդիպումներ, նրանց ներկայացնել նշված օրենքի նախագիծը և ընտրողի իրենց իրավունքով պարզամավորից պահանջել կողմ քվեարկել օրենքի ընդունման ժամանակ*, որը, ի դեպ, ըստ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2009 թ. մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրության, ՀՀ Կառավարությունը պետք է ներկայացնի ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը 2010 թվականին:

Արդեն սկսվել են տեղերում մյուս հանդիպումների կազմակերպման գործընթացները, և, իհարկե, համոզվածություն կա, որ պատգամավորների մեջ կհասունանա մյուս օրենքի ընդունման անհրաժեշտության գիտակցումը, և օրենքի ընդունումը չի ուշանա:

ԿԱՆԱՅՔ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԼԻԳԵՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԿԱՆԱՆՑ ԼԻԳԵՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ



Սոնա Պողոսյան

Հայաստանի հանրապետական կուսակցության Արարարի մարզային կանանց խորհրդի նախագահ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արարարի մասնաճյուղի անդամ

Մարդկային պատմության ընթացքում հասարակարգերի փոփոխության հետ փոխվում են նաև գաղափարախոսությունը, աշխարհընկալումը, այս կամ այն երևույթի վերաբերյալ պատկերացումները և մոտեցումները:

Հայաստանյան իրականությունն այնպիսին է, որ լիդեր կնոջ կայացման և ինքնահաստատման վրա կարող են լուրջ ազդեցություն ունենալ ընտանիքը և շրջապատը: Կին հասարակական կամ քաղաքական գործիչը անցնում է շատ լուրջ վերապատրաստման գործընթաց: Այն, ինչ կարող է անել տղամարդ լիդերը (ինչպես իրեն դրսևորել, ինչ պահվածք ունենալ, ինչպես խոսել), շատ հաճախ չի անում կամ իրեն թույլ չի տալիս կինը: Նա, մարմնավորելով ընտանիքի պահապանի, երեխաների խնամողի ու կրթողի խորհրդանիշը, մտնելով քաղաքականության մեջ կամ ակտիվ հասարակական գործունեություն ծավալելով, շատ հաճախ բախվում է շատ լուրջ խոչընդոտների:

Դա առավել ցայտուն է մարզերի կամ գյուղական վայրերի կանանց պարագայում: Միջավայրը նեղ է, բոլորն իրար ճանաչում են, կարծրատիպերն ավելի խորացած են, արմատավորված:

Բերելով իմ անձնական օրինակը՝ ասեմ, որ երբ 5 տարի առաջ մտա ակտիվ քաղաքականության մեջ, ինձ համար շատ դժվար էր: Եվ առաջին դժվարությունը զուտ հոգեբանական էր: Լինելով Ռուսաստանում ապրած և սովորած մարդ՝ բավական հեշտությամբ որոշում կայացրեցի: Բայց ինձ շրջապատող մարդկանցից շատերն ինձ քննադատեցին՝ ասելով, թե ինչիս է պետք, շատ դժվար է լինելու և այլն:

Ահա այս պահին էր, որ իմ կողքին կանգնեց և

մինչև օրս ինձ սատարում է ընտանիքս: Անվերապահորեն կարող եմ ասել, որ այս գործոնն ամենաառաջնայինն է կնոջ համար: Ամուսինս, ամուսնու մայրը և տղաս միշտ եղել են իմ կողքին, տեղյակ են իմ կատարած աշխատանքներին, ուրախանում և ոգևորվում են իմ ամեն մի առաջընթաց քայլից: Երբեք չեմ մոռանա, որ երբ իմ մերձավորների ու հարազատների շրջապատում քարոզում էի կուսակցության գաղափարախոսությունը, 80-ամյա սկեսուրս, անձնագիրը ձեռքին, մոտեցավ և ասաց.

- Ինձ էլ մտցրու կուսակցության շարքերը:

Կին լիդերին խանգարող մի շարք գործոններ կան, որոնք մեր հասարակության մեջ արմատավորված են:

Նախ՝ ազգային բնավորության և մտածելակերպի գործոնը, թե ինչ կասեն, ինչ կբամբասեն, ինչպես կմեկնաբանեն, ինչ հետևանքների կարող են հանգեցնել իմ գործողությունները: Ահա այն հարցերի շարքը, որը հուզում է նոր-նոր սկսող լիդեր կնոջը: Անշուշտ, սկզբում կխոսեն, կբամբասեն: Բայց դրանք քամու նման կանցնեն-կզնան, եթե տվյալ կինն իր վարքագծով չհաստատի այդ ասելուները:

Այս հարցում շատ կարևոր է տղամարդ դեկավարների դերը: Ինչպե՞ս նրանք կվերաբերվեն լիդեր կնոջը, ինչպե՞ս կներկայացնեն ուրիշ տղամարդկանց մոտ: Մեր մարզի կանանց բախտը բերել է, որովհետև և՛ նախկին, և՛ ներկայիս մարզպետները, լինելով բարեկիրք և կնամեծար, միշտ կարևորել են կանանց աշխատանքները: Երբեք չեմ մոռանա, թե ինչպես մի միջոցառման ժամանակ պրն Հովակիմյանը, նշելով իմ ու ընկերուհուս աշխատանքը, ասաց, որ մեզ չի փոխի 10 տղամարդու հետ:

Այսպիսի գնահատականը ոգևորում է, սկսում ես ավելի ակտիվանալ:

Կանանց կազմակերպությունները շատ մեծ ներուժ ունեն: Բայց երբ նրանք միանում կամ համագործակցում են, այդ ներուժը կրկնապատկվում է:

Կարծիք կա, թե կանայք իրար նախանձում կամ խանգարում են: Համոզված եմ, որ տղամարդիկ լուրջ պատճառներ ունեն նախանձելու համախմբված կանանց, որովհետև միասնական բանակով մենք և՛ շատ ենք նրանցից, և՛ ավելի պատրաստակամ՝ նպատակին հասնելու համար: Այս առումով շատ կարևոր է հասարակական կազմակերպություն-քաղաքական կուսակցություն կապը: Այն, ինչ կարող է անել կին քաղաքական գործիչը, շատ հաճախ հնարավորություն չունի անելու հասարակական սեկտորում աշխատողը, և հակառակը: Իսկ երբ նրանք միասին են, շատ հարցերում կարելի է հասնել շատ լուրջ արդյունքների:

Մենք՝ տարբեր կուսակցություններ ներկայացնող 18 կանայք, ովքեր բրիտանական «Կինը քաղաքականության մեջ» ծրագրի մասնակիցներ են, նման նախագիծ արդեն մշակել ենք և փորձում ենք կյանքի կոչել:

Մեր նախաձեռնությանը միացել են կին պատգամավորներ, ՀԿ-ների կին լիդերներ, որոնցից մեկն էլ Ջեմմա Հասրաթյանն է: Մենք փորձելու ենք, անկախ կուսակցական պատկանելությունից, բարձրացնել մեզ հուզող հարցերը մինչև պե-

տական վերին ատյանները: Ես հույս ունեմ, որ դրական լուծումներ հաստատ կստանանք: Մարզում ապրող կանանց համար կարևոր հարցերից մեկը կրթվելու խնդիրն է:

Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի առաքելություններից մեկն էլ կանանց կրթական հարցերով զբաղվելն է: Կանանց լիդերության դպրոցները կին լիդերների համար շատ կարևոր դեր են խաղում: Այս դպրոցները տալիս են հիմնավոր գիտելիքներ, և ես երախտապարտ եմ ասոցիացիային և Ջեմմա Հասրաթյանին, շնորհակալ եմ Արարատ քաղաքի 30 կանանց անունից, ովքեր սովորում են Արարատում գործող լիդերության դպրոցում: Դուք պետք է տեսնեք, թե ինչ ոգևորությամբ և պատրաստակամությամբ են նրանք գալիս դպրոցի պարապմունքներին: Մի քանիսի ամուսինները, որոնց հետ ես ծանոթ եմ, ինձ հանդիպելիս ժպտալով պատմում են, որ ամեն շաբաթ ինչ-որ նոր բան են լսում իրենց համար արդեն ծանոթ «զենդերի» վերաբերյալ: Ուզում եմ շնորհակալություն հայտնել Արարատի քաղաքապետ Աբրահամ Բաբայանին դպրոցին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

Ուզում եմ կոչ անել բոլոր կանանց. լինենք միասնական մեր երկրի կայացման գործում, օգնենք իրար, հուսով եմ, որ մեր երեխաները անպայման ապրելու են մեր երազած Հայաստանում:

ԿԱՆԱՅՔ ՓՈՐՉԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ



Անգելինա Արշակյան

Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի Էջմիածնի մասնաճյուղի ղեկավար

Ասոցիացիայի Էջմիածնի մասնաճյուղը հիմնադրվել է 1999 թ.: Այն միավորում է բարձրագույն կրթությամբ կանանց՝ նրանց ջանքերը

նպատակաուղղելով ժողովրդավարական քաղաքացիական հասարակության ստեղծմանը, կանանց քաղաքացիական ակտիվության բարձրացմանը, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Էջմիածնի մասնաճյուղը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սոցիալական համագործակցության շրջանակներում իրականացրել է կրթական ծրագրեր՝ ուղղված կանանց քաղաքական, իրավական գիտելիքների բարձրացմանը, հասարակական գործունեության կազմակերպման նորագույն տեխնոլոգիաների տիրապետման ուղղությամբ, նպաստել է հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը: Ասոցիացիայի Էջ-

միաձնի մասնաճյուղը կարևոր դեր ունի Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում: Բազմիցս անցկացրել է սեմինար պարապմունքներ, կյոբ սեղաններ:



2009 թ. մայիս-հուլիս ամիսներին ասոցիալի Էջմիածնի մասնաճյուղը կազմակերպել է Կանանց լիդերության դպրոց, որտեղ իրենց գիտելիքներն են հարստացրել բարձրագույն կրթությամբ 51 կանայք: Դպրոցի ունկնդիրները հիմնականում երիտասարդ կանայք են, որոնք շփումների, փորձի փոխանակման, նոր գիտելիքներ ստանալու կարիք ունեն: Դպրոցում գիտելիքներ են հաղորդվում պետության քաղաքական կառույցների, ժողովրդավարական գործընթացների, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերի, ժողովրդավարության և տնտեսության զարգացման մասին: Ունկնդիրներին մատուցվել է արդիական տեղեկատվություն Հայաստանի գենդերային իրավիճակի, ընտրական գործընթացներում կանանց քաղաքական մասնակցության, ինչպես նաև ՀՀ օրենքների մասին:

Դպրոցի ունկնդիրները հնարավորություն ունեցան ստանալու լիդերությանն առնչվող բոլոր հարցերի պատասխանները: Կանանց լիդերության դպրոցը մի միջավայր է, որը ոչ միայն

նպաստում է գիտելիքների հարստացմանը, այլև խթանում է հետագա ակտիվությունը: Այդ իսկ պատճառով կանանց լիդերությունը պետք է զարգացող երևույթ դառնա հասարակության մեջ, և լիդերության դպրոցները պետք է նպաստեն նոր տեխնոլոգիաների կիրառմանը, հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը:

Ասոցիալի կազմակերպել է հանդիպումներ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի, Էջմիածնի քաղաքպետ Կարեն Գրիգորյանի հետ: Վերջինիս հետ էլ կազմակերպել ենք լիդերության դպրոցի շրջանավարտների վկայականների հանձնման արարողությունը: Վկայականների հանձնմանը մասնակցել են նաև այլ պաշտոնյաներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ասոցիալի Էջմիածին քաղաքի թիվ 2 դպրոցում և քոլեջում կազմակերպել է «Ընդդեմ գենդերային բռնության» իրազեկման հանդիպումներն աշակերտների և քոլեջի ուսանողների համար: Կրթության և դաստիարակության համակարգում է ձևավորվում ապագա սերունդը, փոխանցվում են՝ բարոյական արժեքները:

Կրթությունը հայերի համար միշտ էլ ինքնուրույն պահպանման հիմնական գործոն է եղել: Իրազեկման հանդիպումները տվեցին իրենց արդյունքները, և մեզ համար պարզ դարձավ, որ Էջմիածին քաղաքում անհրաժեշտ է հաճախա-



Կրթությունը հայերի համար միշտ էլ ինքնուրույն պահպանման հիմնական գործոն է եղել: Իրազեկման հանդիպումները տվեցին իրենց արդյունքները, և մեզ համար պարզ դարձավ, որ Էջմիածին քաղաքում անհրաժեշտ է հաճախա-

կի անցկացնել նման ծրագրեր, որովհետև անչափ մեծ է հետաքրքրությունը:



Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միջնակարգ կրթահամակարգում ձևավորվել են որոշակի գենդերային հիմնախնդիրներ: Հանրապետությունում նկատվում է դպրոցից երե-

խաների դուրս մնալու միտում, որն աստիճանաբար բնակչության շրջանում կարող է անգրագիտության ձևավորման պայման դառնալ: Ստեղծված իրավիճակը թելադրում է մշակել և իրագործել այնպիսի միջոցառումներ, որով կկանխարգելեն այդ գործընթացները:

Առաջարկում են՝

Աճող սերնդի մեջ ժողովրդավարական մշակույթի ձևավորման և գենդերային կարծրատիպերի պատկերացումների հաղթահարման նպատակով ավելի լայնորեն

ներդնել գենդերային կրթությունը թե՛ միջնակարգ դպրոցի համակարգում, թե՛ միջին մասնագիտական հաստատություններում և թե՛ համալսարանում:

ԱՐԱՐԱՏԻ ԼԻԳԵՐՈՒԹՅԱՆ ԳՊՐՈՑԻ ՄԱՍԻՄ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ



Հայարիի Սարգսյանը,
Արարարի Կանանց լիդերության դպրոցի համահասող



Անահիտ Վահանյանը,
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արարարի մասնաճյուղի ղեկավար



Գոհար Թամրազյանը,
Արարարի Կանանց լիդերության դպրոցի շրջանավարտ, Արարարի պետական քոլեջի դասախոս, ՀՀԿ անդամ

Արարատ քաղաքի թիվ 2 Պ. Սևակի անվան միջնակարգ դպրոցում 2009 թ. սեպտեմբերի 19-ին «Կանանց քաղաքացիական մասնակցությունը և համագործակցությունը՝ աջակցություն մարզի հասարակական կյանքի զարգացմանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իր աշխատանքները սկսեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Կանանց լիդերության դպրոցը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի լիդերության դպրոցը հիմնադրվել է Երևանում, 2000 թ. մայիսի 27-ին: Մեծ է լիդերության դպրոցի ավանդը հայ կանանց կրթության, քաղաքական հասունացման, սոցիալ-քաղաքական, տնտեսական պատկերացումների ձևավորման, կնոջ քաղաքական դերի բարձրացման, հասարակական-քաղաքական կյանքում կնոջ և տղամարդու կարգավիճակի առանձնահատկությունների սահմանման, գործառույթների իրավական վերլուծության հարցերում:

Քանի որ առօրյա կյանքում հայ կինը իրավական առումով շարունակում է մնալ յուրահատուկ կարգավիճակում, ողջունելի էր նման դպրոցի ստեղծումը այսպիսի կարևոր ժամանակահատվածում և այնպիսի տարածաշրջանում, ինչպի-

սին Արարատի մարզը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արարատի մասնաճյուղի նախագահ Անահիտ Վահանյանի և Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արարատի մասնաճյուղի անդամ Հայարփի Սարգսյանի ջանքերի շնորհիվ «Հազարամյակի մարտահրավերների» փոքր դրամաշնորհներով իրականացվեց մի ծրագիր, որը լիդերության դպրոցի հիմքը դրեց Արարատ քաղաքում: Արարատի լիդերության դպրոցը՝ 8 պարապմունքներով, դեռ երկար կմնա թե՛ մասնակիցների, թե՛ վարողների հիշողության մեջ: Պարապմունքների մեջ ներգրավվեց քաղաքի մտավորական խավը՝ 30 կին և աղջիկ, որոնք ներկայացնում են հասարակական կյանքի տարբեր բնագավառներ, բժիշկներ են, դասախոսներ, ուսուցիչներ: Դպրոցի հիմնադրման գործում մեծ էր նաև ՀՀԿ աջակցությունը (թե մարզային, թե քաղաքային թևերի)՝ հանձնի ՀՀԿ մարզի կանանց խորհրդի նախագահ Սոնա Պողոսյանի, ինչպես նաև Արարատի քաղաքապետ Աբրահամ Բաբայանի և թիվ 2 դպրոցի տնօրեն Ջինա Հովհաննիսյանի օժանդակությունը:

«ՀԿ-ների դերը քաղաքացիական հասարակության մեջ», «Գեները որպես սոցիալ-մշակութային իրողություն», «Գեներային կարծրատիպերի տարբերակումը». այս թեմաներն են քննարկվում դասընթացների ժամանակ, որոնք վարում են տարբեր մասնագետներ:

Առաջին հանդիպումը վարում էր փորձագետ, աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման բաժնի պետ Նարինե Դավթյանը, երկրորդ հանդիպումը՝ այդ ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Արմինե Մխիթարյանը:

Հաջորդ պարապմունքների ժամանակ հանդես եկան Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արարատի մասնաճյուղի նախագահ Սոնա Պողոսյանը, Մոնա Պողոսյանը, Երևանի տնտեսագիտության համալսարանի բնօգտագործման և բնապահպանության դասախոս, տնտեսագիտության թեկնածու Ալիսա Գևորգյանը, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Զաքարյանը, Երևանի ճարտարագիտական-շինարարական պետական համալսարանի միջին մասնագիտական կրթության և նախաբակալավրիատի գծով պրոռեկտոր Անահիտ Հովհաննիսյանը, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի տեղեկատվական ծրագրի համահասող Իրինա Շահինյանը, ԵՊՀ փիլիսոփայության դասախոս Մովսես Դեմիրճյանը:

Լիդերության դպրոցից ստացած գիտելիքները արարատցի կին լիդերները կկիրառեն նաև առօրյա կյանքում:


Լիդերության դպրոցի տրամաբանական շարունակությունը Արարատ քաղաքում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի ընդլայնումն է, որի կազմում ընդգրկվեցին առաջին լիդերության դպրոցի շրջանավարտները:

Բաժանման պահին ես թախծոտ աչքեր եմ նկատում... երկուստեք, որոնք թողնում են դպրոցը ամենայն ջերմությամբ և սիրով, իրենց հետ տանելով Արարատ քաղաքի բացվող արշալույսները և այն մեծ սերը, որ փոխանցեցին պարապմունքավար-փորձագետները, որը դեռ երկար կմնա արարատցի առաջին կին-լիդերների սրտերում:

Կին-լիդերականներին սպասում է ևս մեկ ջերմ հանդիպում Արարատի քաղաքապետարանում, վերջին ակորդը այս ամենի, որտեղ վկայականները դպրոցի մասնակիցներին հանդիսավոր պայմաններում կհանձնի Արարատի քաղաքապետ պրն. Աբրահամ Բաբայանը և Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջենմա Հասրաթյանը:



ԿԱՆԱՆՑ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼ



ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԵՄՔՈՎ ՇՐՋՎԵԼ ԴԵՊԻ ՄԱՐԶԵՐ



Ռուզաննա Փանոյան

Վանաչորի պեդագոգիկ մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս, «Կանանց շարժումը և քաղաքացիական նախաձեռնությունները հազարամյակի մարտահրավերների համապեդագոգիկ փոքր դրամաշնորհի համադասող

րող է լինել, կանանց՝ ոչ: Մա կարծրատիպ է: Կանայք ոչ միայն իրավունք ունեն, ոչ միայն կարող են, այլև պարտավոր են համախմբվել հասարակության համար այս դժվարին օրերին: Սոցիալական խնդիրները ոչ թե պիտի խոչընդոտեն կանանց քաղաքացիական ակտիվությունը, այլ պիտի ստիպեն նրանց համախմբվել՝ հանուն մեր երկրի բարօրության:

Մեր հանրապետությունում հետզհետե թափ առնող կանանց շարժումը, որի կարևոր փուլերից մեկը պետք է համարել այդ շարժման գործող ցանցի ստեղծումն ու գործունեության կազմակերպումը, ձգտում է ոչ միայն լուծելու կանանց շահերի և իրավունքների պաշտպանության խնդիրները, այլև նպաստելու հասարակության մեջ դրական տեղաշարժերին: Դրան հասնելու լավագույն միջոցը շահագրգիռ խմբերի ջանքերի համատեղումն է, սոցիալական համագործակցության իրականացումը: Այդ համագործակցությունը որոշակի նպատակների շուրջ միավորված խմբերին և կազմակերպություններին հնարավորություն կտա համախմբվելու այն մեծամասնությանը, որը ոչ միայն հավատում է հասարակական վերափոխումներին, այլև պատրաստ է ակտիվորեն մասնակցելու գործընթացներին:

Մեր երկրում անհրաժեշտ է զարգացնել համագործակցությունը կառավարական կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև: Իսկ ինչպե՞ս անել, որ այդ համագործակցությունը լինի ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է պարզել, թե հասարակական կազմակեր-

պությունն ի՞նչ կարող է առաջարկել պետությանը և ի՞նչ է սպասում պետությունից, որո՞նք են նրանց ընդհանուր նպատակները: Հասարակական կազմակերպությունները կարող են պետությանը առաջարկել իրենց մտավոր ներուժը, ունեցած տեղեկատվական բազան, կրթական ծրագրերը, սոցիալական հետազոտությունները, կամավորների եռանդը, թանկագին ժամանակը, ուժը և այլն: Պետությունից հասարակական կազմակերպություններն ակնկալում են համագործակցություն, ներգրավում օրինաատեղ զործընթացներում, իրավական պաշտպանվածություն, տեխնիկական օգնություն, կազմակերպական աջակցություն և այլն: Կառավարական կառույցների և հասարակական կազմակերպությունների համագործակցության ընդհանուր նպատակը պետք է լինի սոցիալական լարվածության նվազումը, արդյունավետ սոցիալական քաղաքականության ձևավորումը, աջակցությունը քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական փոխակերպումների կայացմանը:

Հարկ է նաև, որ հասարակական կազմակերպությունները դիտվեն ոչ թե որպես ընդդիմադիր ուժ, այլ որպես միջնորդ ժողովրդի և իշխանության միջև:

Եվ, վերջապես, շատ հասարակական կազմակերպություններ ուժեղ են մայրաքաղաքում: Անհրաժեշտ է դեմքով շրջվել դեպի մարզերը, համայնքները, որպեսզի հասարակական շարժումը ավելի զանգվածային բնույթ կրի: Իհարկե, մարզերի հասարակական կազմակերպություններն իրենց հերթին պիտի հանդես գան քաղաքացիական նախաձեռնություններով, դիմեն տեղական ինքնակառավարման մարմիններին: Եվ չեն կարծում, որ ճիշտ ներկայացված խնդիրը անուշադրության մատնվի:

Եթե ուզում ենք քաղաքացիական հասարա-

կուրսյուն, ժողովրդավարություն, ապա հարկ է մտածել, որ մեզինքն յուրաքանչյուրը պետք է մասնակցի այդ գործընթացին, իր լուսնան ներդրման հասարակության փոխակերպման գործընթացների մեջ:

Քաղաքացիական հասարակության, քաղաքացու ձևավորման համար կարևոր են անհրաժեշտ գիտելիքները: Ես այդպիսի գիտելիքներ ստացել եմ՝ բազմիցս մասնակցելով գեներալային հիմնախնդիրներին նվիրված համաժողովների, սեմինարների և Կանանց լիդերության դպրոցի աշխատանքներին: Դպրոցում ձեռք եմ բերել այնպիսի գիտելիքներ, որոնք կարող են կողմնացույց դառնալ ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության համար: Դպրոցը հնարավորություն տվեց զարգացնելու սեփական տեսակետը ներկայացնելու և պաշտպանելու կարողությունը: Բացի նշվածից, շատ կարևոր է այն փաստը, որ ես ավելի խորն ընկալեցի քաղաքացիական հասարակության և զուգակշռված ժողովրդավարության կայացման անհրաժեշտությունը: Կարևոր նշանակություն ունեն մաս փորձի փոխանակումը, քանի որ դպրոցի աշխատանքներին մասնակցում էին տարբեր հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների ներկայացուցիչներ:

Եվ առաջին անգամ ինձ հնարավորություն ընձեռվեց ստացված գիտելիքները, հմտությունները, կարողություններն ի սպաս դնել մեր երկրում ժողովրդավարության կայացմանը և օգտագործել հասարակական պրակտիկայում: Կանանց լիդերության դպրոցի աշխատանքների ավարտին հայտարարվեց փոքր դրամաշնորհների մրցույթ: Ես և դպրոցի երկու շրջանավարտ՝ «Վանաձորի երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերակցություն» հասարակական կազմակերպության անդամ Յուլիանա Մովսիսյանը և Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Դիլիջանի մասնաճյուղի անդամ Ժաննա Մեջլումյանը Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Վանաձորի մասնաճյուղի նախագահ Սոֆյա Բաբայանի և փոխնախագահ ու Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի ղեկավար Արմենուհի Կյուրեղյանի օգնությամբ ներկայացրինք «Կանանց շարժումը և քաղաքացիական նախաձեռնությունները հազարամյակի մարտահրավերների համատեքստում» ծրագիրը: Այն հավանության արժանացավ: Սկսեցինք ծրագիրն իրականացնել Լոռու մարզում և Դիլիջան քաղաքում: Ծրագրի շրջանակներում անց է կացվել համաժողով Վանաձորում, կլոր սեղան-ֆորում Դիլիջանում, կլոր սեղան-քննարկումներ Սպիտակում, Տաշիրում, Ալավերդիում, Ստեփանավանում, աջակցություն է ցույց տրվել Կանանց լիդերության դպրոցի աշխատանքներին: Դիլիջանի կլոր

սեղան-ֆորումի աշխատանքներին մասնակցում էին տարբեր հասարակական կազմակերպությունների լիդերներ և ակտիվիստներ, որոնք կարևորում էին այդպիսի հանդիպումները, քանի որ հենց այդտեղ հանդիպեցին և բարձրացրին ոչ միայն կանանց վերաբերող, այլև համայնքային նշանակություն ունեցող խնդիրներ:

Ամեն հանդիպման ժամանակ գիտակցում էի, որ կանանց դրության բարելավմանն ուղղված միջոցառումները նպատակաուղղված չեն զուտ կանանց խնդիրների լուծմանը, դրանք նպաստում են հասարակության բազում հիմնախնդիրների հաղթահարմանը, ինչը կարող է հանգեցնել հասարակության բոլոր անդամների բարեկեցությանը և ողջ հասարակության զարգացմանը: Նաև գիտակցում էի, որ անհրաժեշտ է միավորել կանանց ուժերը, քանի որ այսօր աշխարհում մրցունակ են այն երկրները, որտեղ հասարակության առաջընթացին նպաստող առանցքային հարցերի շուրջ գոյություն ունի հասարակական համաձայնություն, եթե նույնիսկ մարդկանց շահերը որոշ դեպքերում բախվում են:

Լինելով Լոռու մարզի տարբեր քաղաքներում՝ հասկանում էի, որ շատ խնդիրներ ուղղակի չեն բարձրացվում, իսկ քաղաքացիական նախաձեռնությունները կարող են բերել շոշափելի արդյունքներ:

Վանաձորի «Կանանց շարժումը և քաղաքացիական նախաձեռնությունները հազարամյակի մարտահրավերների համատեքստում» համաժողովին հրավիրվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, և նրանց հետ կնքվեց համաձայնագիր սոցիալական համագործակցության մասին: Հուսով եմ, որ այս համաձայնագիրը կդառնա մեր մարզում հասարակական սեկտորի և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ համագործակցության սկիզբը, քանի որ այդպես կարելի է հասնել սոցիալական կայունության և պայմաններ ստեղծել սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման համար: Ստեղծվել է նաև Լոռու մարզի և Դիլիջան քաղաքի տարբեր հասարակական կազմակերպությունների լիդեր կանանց կուլիցիա:

Մեր օրերում ամենակայուն և հիմնարար ճանապարհը աստիճանական վերափոխումներն են, որոնց պետք է մասնակցեն հասարակության բոլոր առողջ ուժերը՝ դրանով իսկ նպաստելով ժողովրդավարական մշակույթի ձևավորմանը: Եվ ես՝ որպես հասարակական կազմակերպության անդամ, որպես մանկավարժ, կանեմ հնարավորինը, որպեսզի մեր մարզում այդ համագործակցությունը հանգեցնի էական դրական փոփոխությունների:

ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ



Մարիամ Մարտիրոսյան

«Հայրուր» սոցիալ-լրևորեսակական և մշակութային ՀԿ Արարաշարի մասնաճյուղի ղեկավար

Մշակույթն արագորեն վերափոխում է շրջակա միջավայրը, հասարակությունը, մարդկանց կենցաղը, ուստի այն գնահատվում է որպես կենսագործունեության ստեղծագործական գործոն, որպես հասարակության նորարարության անսպառ աղբյուր: Մշակույթը դիտելով որպես մարդկային ինքնարտահայտման միջոց՝ կարելի է բացահայտել նոր, ուժգին մղումներ, որոնք կարող են բարերար ազդեցություն ունենալ պատմական պրոցեսի և հենց մարդու զարգացման վրա: Նման առաքելություն են ստանձնել Հայաստանում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտեն, Վրաստանում՝ «Համաձայնություն» միությունը, Ադրբեջանում՝ «Կանանց ինստիտուտը» և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ադրբեջանական կոմիտեն, որոնց նպատակն է համախմբել կովկասյան տարածաշրջանի երիտասարդներին: Աշխարհի խաղաղարար ոլորտում ընդգրկված գործիչները համամիտ են, որ հասարակությունների մակարդակում խաղաղության նպատակային խումբը պետք է դառնա երիտասարդությունը, որը կերտելու է մեր վաղվա օրը: Այս սկզբունքով էր կովկասյան տարածաշրջանում ընտրվել երիտասարդների խումբը, որոնք ներկայացնում էին Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը իրենց ուրույն մշակույթով, սովորույթներով և ավանդույթներով:

Ծրագրի շրջանակներում «Գենդերը և խաղաղությունը» թեմայով սեմինարներ անցկացվեցին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի տարածաշրջաններում: Որպես ուղեցույց օգտագործվեց «Խաղաղության և գենդերի ուսուցում» մեթոդական ձեռնարկը: Դասավանդման ինտերակտիվ մեթոդն ապահովում է երիտասարդների առավելագույն մասնակցությունը ուսուցման գործընթացին: Թիրախային խումբ ընտրվեցին 14-18 տարեկան երիտասարդները: Այս ձեռնարկում ընդգրկված թեմաները հնարավորություն են տալիս գործելու բարդ իրավիճակներում, բանավիճելու, աշխատելու թիմում և համատեղ որոշումներ կայացնելու, ճիշտ ձևակերպելու նպատակները և իրականացնելու դրանք: Այդ առումով համալիր պարասպորտի թեմատիկական արդիական է, իսկ նրա կիրառումը

հարավկովկասյան տարածաշրջանում՝ ճիշտ ժամանակին: Զննարկվող խնդիրները շատ առումով ընդհանուր էին հետխորհրդային երկրների համար, որոնք դեռևս չեն ձեռքբերում խորհրդային մտածելակերպից, իրականության ու հասարակության մասին այդ մտածելակերպի բնորոշ կարծրատիպերից: Ծրագրի նպատակներից մեկը կովկասյան տարածաշրջանի ստեղծագործ մտածողությամբ երիտասարդներին համախմբելն է, որոնք կներկայացնեն իրենց փորձը, կծանոթացնեն իրենց մշակույթին, սովորույթներին: Այս նպատակով ճամբար կազմակերպվեց Վրաստանում, որին մասնակցեցին 60 ակտիվ երիտասարդներ: Նպատակը մեկն էր՝ համախմբել հանդուրժողականության սկզբունքով: Եվ պատահական չընտրվեց ճամբարի կարգախոսը՝ «Մենք աշխարհին կսովորեցնենք բարեկամանալ», որը թելադրում էր ձեռքբերելու կարծրացած մտածողությունից, լցվել խաղաղությամբ, հանդուրժողականությամբ ու հարգանքով միմյանց նկատմամբ:

Խաղաղության մշակույթը՝ հակադրվելով բռնությանը և պատերազմին՝ արտահայտում է մարդկության խաղաղ գոյակցության ձգտումները: Այդ ձգտումները իրականացնելուն նպաստող ուղիներից մեկը կրթությունն է, քանի որ այն մարդկանց հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այն ապագայի մասին, որի համար ճանապարհ է հարթում խաղաղության մշակույթը: Հանուն խաղաղության իրականացվող կրթությունը ձգտում է կանխատեսել գոյություն ունեցող հիմնախնդիրների հնարավոր զարգացումը: Խաղաղություն դասավանդողները գիտակցում են, որ մարդկանց մեջ անհրաժեշտ է արմատավորել և զարգացնել միասնության գգացումը, որը կնպաստի ազգային ու միջազգային ցանցերի ստեղծմանը և բազմապիսի կապերի զարգացմանը: Կարծում են, որ յուրաքանչյուր մարդ պետք է բավարար կրթություն ունենա՝ հակամարտությունների կանխարգելման և միջազգային անվտանգության այլընտրանքային համակարգի ձևավորման հնարավորությունները ըմբռնելու և գնահատելու համար: Խաղաղության կառուցումը երկարատև գործընթաց է, և այն խթանում է, որ մարդիկ փորձեն բարելավել իրենց հարաբերությունները բազմաթիվ կապերի հաստատման և համագործակցության միջոցով:

ՆԵՐՈՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՄՏԱՑԱԾԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՊԱՀԱՆՁՈՒՄ Է ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄ



Կարինե Սիրադեղյան
Վանաչորի պեյրական մանկավարժական ինստիտուտի դասախոս

Գենդերային բռնության տարածված տեսակներից մեկը ներընտանեկան բռնությունն է, որի բացահայտումը մեզ մոտ՝

ՀՀ-ում, պահանջում է բավական հետևողական և զգույշ մոտեցումներ: Անցկացված իրազեկման հանդիպումների արդյունքում հաստատվեց, որ այս բռնության հիմքում ընկած են հասարակական կարծիքը, ավանդույթները և մարդկանց իրավական գիտելիքների պակասը: Այն, որ այսօր հանրության զգալի մասը չի պատկերացնում, թե ինչից և երբ է սկսվում բռնությունը, անբավարար իրազեկության հետևանք է: Հետևաբար, հաճախ կանայք կամ տղամարդիկ, չգիտակցելով այս կամ այն երևույթի արմատական դրդապատճառները, ակամա դառնում են հանրության կարծիքի զոհը, իբր պահպանելով իրենց արժանապատվությունը՝ թույլ են տալիս ոտնահարել իրենց իրավունքները:

Հատկապես կարևոր է գիտակցել, որ ներընտանեկան բռնությունների հետևանքով տուժում են ոչ միայն անմիջականորեն բռնության ենթարկվողները, այլև գոյություն ունի անուղղակի բռնություն, ինչն արդեն վերաբերում է ընտանիքի այն անդամներին կամ հարազատներին, որոնք ականատես են դառնում բռնության երևույթին, բայց չունեն անմիջական մասնակցություն: Այս հանգամանքը շատ դեպքերում ուշադրության չի արժանանում, սակայն երբեք չի կարող մնալ անհետևանք: Դա կարող է ազդել պասիվ մասնակցի թե՛ առողջության, թե՛ հասարակության մեջ նրա հետագա վարքագծի դրսևորման վրա: Ուրեմն պետք է տարանջատել ընտանեկան բռնության երկու տեսակ՝ ուղղակի և անուղղակի:

Ընդ որում, միշտ չէ, որ ուղղակի բռնության ենթարկվողն է ավելի շատ տուժում, քան անուղղակի բռնության ենթարկվողը:

Տաշիր, Դիլիջան, Վանաձոր քաղաքներում անցկացված իրազեկման հանդիպումների մասնակիցների վերաբերմունքը վկայում է, որ մեր հասարակությունը գրագետ, լուրջ, տեղեկատու դասընթացների կարիք ունի: Դա հատկապես ակնառու էր լրագրողների խմբի պարապմունքների ընթացքում, երբ հենց նրանք էին զգում այդ տեղեկույթի պակասը: Իրազեկման դասընթացների միջոցով հնարավոր կլինի հասարակական կարծիքից դուրս մղել սեռի հատկանիշով խտրականությունը: Երբ հանրությունը սկսի մերժել ներընտանեկան գենդերային բռնության ավանդական արմատները, կառողջանան ընտանիքները, և կշահի պետությունը, քանզի ամեն մարդ կգիտակցի իր



տեղը և դերը որպես իր երկրի քաղաքացի: Միաժամանակ *անչք չի մնա այն սրվերում, որը քարցնում է անհայրների արժանիքները և վերացնում դրանք*: Հետևաբար, գենդերային բռնության իրազեկման դասընթացներն այսօր՝ XXI դարում՝ տեղեկատվական հոսքի դարում, պետք է լինեն հասանելի հանրությանը:

ԿԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ



ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ



Անահիտ Հարությունյան
*«Հոգևոր Հայաստան» ՀԿ նախագահ,
քանասիրական գիտությունների թեկնածու*



Լիլիթ Չարայան
*Համալսարանական կրթությամբ կանանց
սոցիալաօգիտական փոխնախագահ,
պարմական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Կանանց հարցը հայ իրականության մեջ հրապարակ հանվեց տղամարդ մտավորականների կողմից՝ որպես ազգային շարժման, ազգային ընդհանուր նպատակների թելադրանք, որպես ազգի ապագայի կերտման պատասխանատվության ըմբռնում, հետևաբար և կանանց կրթության, աշխատանքի, հասարակական կյանքին մասնակցելու իրավունքների ճանաչման հիմնախնդիր:

XIX դարի կեսին եվրոպական մի շարք երկրներում անցած բուրժուական հեղափոխությունների ալիքն ազատականացրեց մարդկանց կյանքն ու պատկերացումները ոչ միայն Եվրոպայում, այլև մյուս մայրցամաքներում: Այդ շրջանում հայ ժողովուրդը Օսմանյան Թուրքիայի և Ռուսական կայսրության տիրապետության տակ էր: Թուրքիայում դեռ դարասկզբին մեծ տերությունների ճնշման տակ սկսված թանգիմաթի (բարեփոխումների) շրջանը ժողովրդավարական շարժում էր առաջացրել հպատակ ժողովուրդների, մասնավորապես՝ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումը, սկսված լիբերալ բարեփոխումները մեծ տեղաշարժեր էին առաջացրել մասնավորապես գիտակցության մեջ:

Այս ամենը լայն արձագանք էր գտնում հայ իրականության մեջ, առաջադրում ազգային, տնտեսական և սոցիալ-քաղաքական նոր հիմնախնդիրներ: Քննադատության էր ենթարկվում այն ամենը, ինչ մինչ այդ նվիրական ու անձեռնմխելի էր. հայկական ավանդույթները, նիստուկացը, կենցաղը, դասային հարաբերությունները, եկեղեցին, ընտանիքը: Մյուս կողմից՝ հայությունը ինքնության պահպանման և ազատագրման գերխնդիր ուներ, ուստի յուրաքանչ-

յուր նոր գաղափար պետք է խարսխվեր ազգի հարատևությունը պայմանավորող հոգևոր ու բարոյական արժեքների վրա և արդարացվեր ապագա անկախ պետության հաստատումով:

Կանանց հարցը հայ իրականության մեջ ներառում էր հետևյալ հիմնախնդիրները.

1. աղջիկների կրթության անհրաժեշտությունը,
2. քաղաքացին և գյուղաբնակ կանանց սոցիալական դրության վերհանումը,
3. կանանց աշխատելու իրավունքի պաշտպանությունը (որոշ մասնագիտությունների գծով), աշխատանքի հավասար վարձատրությունը՝ անկախ սեռից,
4. կանանց հասարակական գործունեության խթանումը,
5. կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը,
6. Արևմուտքի կանանց շարժման ձեռքբերումների և կանանց հարցի ուսումնասիրությունների լուսաբանումը:

Իգական կրթության անհրաժեշտությունն ընդունում էին բոլոր հասարակական հոսանքների գրեթե բոլոր գործիչները, քանի որ առանց դրա այլևս հնարավոր չէր ապահովել ոչ միայն ազգի առաջընթացն ու զարգացումը, այլև առհասարակ գոյատևումը: Դա քարոզչական մեծ ջանքեր էր պահանջում, հարկ էր կտրել արմատացած նախապաշարումներն ու կարծրատիպերը, հասարակական գիտակցության մեջ արմատավորել իգական սեռի կրթության իրավունքի ճանաչումը, դրա իրականացման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Իգական կրթության կողմնակից էին Մ. Թա-

ղիադյանը, Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Պ. Պոռշյանը, Բաֆֆին և շատ ուրիշներ:

Մանկավարժ Կ. Բելախանյանը իգական կրթությամբ էր պայմանավորում ազգային լեզվի պահպանումը, հեղինակության բարձրացումն ու զարգացումը:

Հ. Հիսարյանը, որ «Բանասերի» (1851-1852 թթ.) խմբագիրն էր, համարում էր, որ «մայրերն են միայն, որ մարդիկ կշինեն», որ երեխայի համար կրթված մորից լավ դաստիարակ չկա, իսկ տղամարդու համար՝ ընկեր: Իր ամսագրի հենց առաջին համարում նա անդրադարձավ կանանց հարցին՝ զարմանք հայտնելով, որ կան մարդիկ, ովքեր կարող են արհամարհել կնոջ ունակությունները: Նա ամոթ էր համարում, որ հասարակությունն անփույթ է կանանց կրթության հարցում, քանի որ կանանց ձեռքին են մարդկության ապագան և դեկը (*«Բանասեր»*, 1851, թիվ 1):

Հ. Աբելյանը նշում էր, որ կրթության միջոցով կինը կազատվի նաև անբարոյականությունից, որին դրդում է կարիքը: Նա համոզված էր, որ դա կնպաստի նաև ընտանիքի բարոյական ներդաշնակությանը, քանզի չի կարող երջանիկ լինել այն ընտանիքը, որում մեկը տեր է, իսկ մյուսը՝ ծառա (*«Մշակ»*, 1872, թիվ 29):

Այսպիսով, իգական կրթության անհրաժեշտությունը հիմնավորվում էր սերնդի դաստիարակման գործում կնոջ ունեցած անփոխարինելի դերով և հայ ընտանիքի ամրապնդմամբ, որոնք սրբագործված հասկացություններ էին: Այդ էր պատճառը, որ ամենատարբեր ուղղությունների գործիչների կարծիքը իգական կրթության հարցում համընկնում էր:

Ինչ վերաբերում է կնոջ մյուս իրավունքներին, ապա այս հարցում կարծիքները խիստ տարբերվում էին: Եթե լիբերալ և դեմոկրատական ուղղությունների ներկայացուցիչները, որոնք անվերապահորեն պաշտպանում էին նոր բուրժուական հարաբերությունների հաստատումը, խոսում և դնում էին նաև իրավահավասարության, աշխատելու հնարավորության հարցը, ապա մյուսները դեմ էին դրան: Այսպես, ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչը տագնապում էր, որ կնոջը շատ իրավունքներ տալը կարող է խաթարել հայ ընտանիքը՝ ազգության հիմքը: Իրավական անհավասարությունն արդարացվում էր բնական անհավասարությամբ (*«Մշակ»*, 1872, թիվ 29): Շատերը մտածում էին, որ կնոջը չպետք է թույլ տալ կյանքի բոլոր բնագավառներում հավասարվի տղամարդուն: Կոչ էին անում պայքարել դրա դեմ, քանի որ *«կանանց խմբովին չզարկելը դեպի հասարակական կյանք միշտ նշան է դարի հիվանդության»* (*«Մշակ»*, 1872, թիվ 29): Կինը չպետք է մոռանա *«իր բնությունից սպա-*

ցած դրությունը և ներքին պաշտոնը և ցանկանա հասարակական կյանքի բոլոր երևույթների մեջ իրեն արդամարդուն հավասարեցնել» (*«Մշակ»*, 1877, թիվ 9):

Մինչդեռ Մ. Նալբանդյանն ու նրա կողմնակիցներն իրենց քննության առարկան չէին սահմանափակում կնոջ դաստիարակչական ու ընտանեկան գործառնությունով և ծանրանում էին կանանց իրավահավասարության, հասարակության լիիրավ անդամ ու ազատագրական պայքարի գործուն մասնակից լինելու հարցերի վրա:

Հայ մտավորականության հայացքը սևեռվեց հասարակության տարբեր խավեր, տարբեր բնակավայրեր ներկայացնող կանանց կյանքի ու ներաշխարհի վրա, կինը դարձավ ազգագրագետների, պատմաբանների, տնտեսագետների, հոգեբանների և գավառական թղթակիցների ուսումնասիրության առարկա: Ժամանակի մամուլի քրոնիկոններում պարտադիր դարձան կանանց կյանքին առնչվող տարբեր բնույթի լրատվություններն ու ռեպորտաժները, հրապարակախոսության բաժիններում՝ կանանց առնչվող հիմնախնդիրների խոր և ծավալուն քննարկումները:

«Մշակում» պարբերաբար լույս էին տեսնում կանանց հարցին նվիրված առաջնորդողներ, հրապարակախոսական հոդվածներ, կանանց վիճակը նկարագրող թղթակցություններ տարբեր գավառներից, տեղեկություններ, արևմտյան երկրների կանանց շարժմանը վերաբերող ճանաչողական բնույթի նյութեր, արտատպություններ ռուսական և եվրոպական մամուլից, գրքերի տեսություններ, օտարազգի գիտնականների և ճանապարհորդների՝ հայ կնոջը նվիրված ուսումնասիրությունների թարգմանություններ և այլն: Գրիգոր Արծրունու շնորհիվ «Մշակի» շուրջը համախմբվեցին կանանց հարցերով հետաքրքրվող մտավորականներ, նրա հորդորներով արվեցին լուրջ ու ծավալուն ուսումնասիրություններ, և, որ առավել ուշագրավ է, «Մշակի» էջերում սկսեցին հայտնվել հայ կանանց գրչին պատկանող թղթակցություններ:

Կանանց կրթության խնդիրները, կինը և քաղաքականությունը, կնոջ ազատագրումը, կանանց իրավունքները, կնոջ հասարակական գործունեության ոլորտները, կնոջ ազդեցությունը լուսավորության վրա, կանանց աշխատանքի հարցը. ահա այն հարցերը, որոնք մշտապես քննարկվում էին մտավորականների կողմից: Կանանց ազատագրության առաջին նախապայմանը լուսավորությունն էր համարվում: Կանանց առաջադիմության և հասարակության մեջ արժանապատիվ տեղ գրավելու մյուս գրավականը համարվում էր ինքնուրույն աշխատանքով ապրելը, նյութական անկախությունը և կազմակերպություններ, միություններ ստեղծելը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարների տարածման տեսանկյունից իր բավական ճշգրիտ շեշտադրումներով և գործող կռիվներով չափազանց ուշագրավ են «Մուրճ» ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանի հայացքները: Նա առաջիններից մեկն էր, որ կանանց հարցը տեղափոխեց մարդու իրավունքների հարթություն: Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ շատերը, կամա թե ակամա, հարցը պարզաբանելու համար ավելի են բարդացնում ու խճճում այն, և կանանց հարցի կողմնակիցները թերևս նույնքան սխալ են գործում, որքան հակառակորդները: Ըստ նրա՝ սա իրավունքի խնդիր է և չպետք է շփոթել կանանց և տղամարդկանց հավասար կամ անհավասար մտավոր ունակությունների հետ. «...*Իրավունքը պահանջվում է ոչ թե տղամարդուն անպարճառ հավասարվելու համար, այլ իրավունքը պահանջվում է միայն որպես մի պայման, առանց որի կինը, նման տղամարդուն, չի կարող յուր ուժերը կանոնավոր և ազատ կերպով զարգացնել, ուրեմն և ընդհանրապես, հասարակությանը, պետությանը այն ծառայությունը մատուցանել, ինչին նա միայն ընդունակ է: Այն իրավունքները, որ դարերի ընթացքում չենք են բերված տղամարդկանց համար, նոքա, այդ իրավունքները, իսկ միայն տղամարդու պահանջների համեմատ չեն սրբեղծված, այլ առհասարակ մարդկային անհատի» («Մշակ», 1877, թիվ 9, էջ 679-680):*

Երկրորդ կարևոր հարցադրումն այն է, որ նա կանանց զարգացման խնդիրը համարեց կենսական պայման առհասարակ ազգի, պետության, հասարակության և մարդկության զարգացման համար: Պատահական չէ, ասում էր նա, որ կանանց հարցը սուր է դրված ոչ թե այն երկրներում, որտեղ կանայք ուժեղ են, այլ այն երկրներում, որտեղ «*պերական և ազգային զարգացման գաղափարը ամենից վառ է, ամենից արթուն և ընդհանրության գիրակցության մեջ խորը արմատներ գցած*» («Մշակ», 1877, թիվ 9, էջ 678):

Ըստ Ավ. Արասխանյանի՝ հարցը ճիշտ հունից շեղվել է այն պահից, երբ շրջանառության մեջ է մտել *կանանց կոչում* հասկացությունը, որը, ըստ նրա, հրապարակ են հանել կանանց խնդրի հակառակորդները: Կանանց կոչումը բացատրելով մայր լինելու նախասահմանվածությամբ, չափազանց հեշտ էր նրանց իրավունքները սահմանափակել ամուսնության, տան տնտեսության և մայրական խնամքի շրջանակներով:

Հայ կանանցից կանանց հարցին անդրադարձել է Ս.Տյուսաբը: Նա կանանց բաժանում էր երեք դասի. աղքատ դասը՝ գրկանքների ու տվաշտանքների մեջ, որ աշխատում է բնագրով, սոսկ գոյությունը պահպանելու համար, ոչ թե աշխատանքի «սկզբուն-

քին ծառայելու մտք», միջին դասը՝ գոռոզ ու աշխատանքի թշնամի, և «մեծափարթամ» կանանց դասը, որը հարստության ու գեխության մեջ արհամարհում է աշխատանքը: Տյուսաբը առաջ է քաշում այն գաղափարը, որ աշխատանքը պետք է ընկալվի որպես սկզբունք, որպես հասարակության մեջ արժանի տեղ գրավելու միջոց: Այստեղ նա ավելի մարտական ու լայնախոհ է՝ համարելով, որ կինը հասարակության գոհն է, որ նրա ստրկական վիճակը պայմանավորված է օրենքներով, կրոնով, նախապաշարմունքներով ու սովորույթներով: Կնոջ դատի պաշտպանությունը դարձավ Տյուսաբի գրական ստեղծագործության առանցքը, իր գաղափարները նա հետագայում մարմնավորեց «Մայտա», «Սիրանուշ», «Արաքսյա կամ վարժուհին» վեպերում, որոնցով նա՝ իբրև առաջին վիպասանուհի, առանձնահատուկ տեղ գրավեց հայ գրականության պատմության մեջ:

Տյուսաբը գրական անդաստան բերեց սեռերի իրավահավասարության հարցը: Հավասարություն ասելով՝ նա հասկանում էր իրավունքի և պատասխանատվության, աշխատանքի և վարձատրության, հնարավորությունների հավասարություն: Նա գտնում էր, որ հասարակությունը կազմված է ընտանիքներից, և որքան ներդաշնակ լինի ընտանիքը, այնքան իդեալական կլինի հասարակությունը: Բավարար չէ կնոջ կրթությունը, անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որ նա պիտանի լինի հասարակությանը, գործունեության ասպարեզ և կարողությունները դրսևորելու հնարավորություն ստանա: «Մայտայի» հրապարակումից հետո մեծ աղմուկ բարձրացավ, նրան մեղադրեցին հայ ընտանիքի բարոյական հիմքերը խարխելու մեջ: Մակայն պաշտպանեցին առաջադեմ գործիչները՝ Մ. Մամուրյանը, Ա. Արփիարյանը, Հր. Ասատուրը և ուրիշներ: Տյուսաբը համոզված էր, որ կնոջ առաջին թշնամին հենց ինքը՝ կինն է: Եթե կանայք միավորվեն, գորավոր ուժ կկազմեն և կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները: Տունը չպետք է դառնա կնոջ բանտը, կնոջ տգիտությունն ու ստրկությունը վտանգում են «բոլոր ընկերական շենքին հաստատությունը» («Մուրճ», 1901, դ 6): Նա սուր կերպով դրեց նաև չամուսնացած և այրի կանանց հարցը և ցավով էր նշում, որ կնոջ առջև փակվում են բոլոր ճամփաները, որ դա արդարացնելու համար պատճառ են բռնում կնոջ կարողությունների սահմանափակությունը:

XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի հայ մամուլի միջոցով հասարակական գիտակցության մեջ աստիճանաբար արմատավորվում էր սեռերի իրավահավասարության հիմնահարցը, դանդաղորեն փոփոխվում էին ընտանիքում ու հասարակության մեջ կնոջ դերի մասին կարծրատիպերը:

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ XX ԴԱՐՈՒՄ



Մելինե Հարությունյան

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս

XX դարը համաշխարհային պատմության մեջ բուռն էր իր քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացներով, որոնք որոշիչ են եղել նաև հայ ժողովրդի քաղաքական պատմության զարգացման համար: Ամբողջ դարաշրջանի ընթացքում հայ ժողովուրդը մասնակցել է մի գործընթացի, որը կարելի է բնորոշել պետականության կերտման գաղափարով: Հայ ժողովրդի պատմությունը պատմական այս շրջանում ավելի շատ պտտվում է հայ հասարակության՝ որպես պետության հենարանի շուրջ, ուստի հետաքրքրություն է առաջացնում այդ հասարակության մաս կազմող կանանց ներդրումը Հայաստանի պետականության կերտման գործում: Հայ կանանց սոցիալ-քաղաքական ակտիվության առումով XX դարն աննախադեպ էր, քանի որ նրանք պատմության պասիվ օբյեկտից վերածվում էին այդ պատմությունը կերտող ակտիվ սուբյեկտների, իսկ պետությունն էլ սկսում էր օգտագործել կանանց ներուժը մի շարք սոցիալ-տնտեսական և քաղաքական հարցեր լուծելու համար: Կանանց նմանօրինակ ակտիվությունը դառնում է պետության և հասարակության կողմից պահանջված իրողություն:

Այսպես, XIX դարի վերջին-XX դարի սկզբին Հայաստանի երկու հատվածներում (Արևելյան և Արևմտյան) գործում էին կանանց հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին ազգապահպանման հարցերով, մեծ ազդեցություն ունեին հայրենասիրական, հայեցի դաստիարակության և կրթության, պետականության բացակայության պայմաններում հայ հասարակության կենսակերպի զարգացման գործում: Ժամանակի հայ մտավորականները, բարձր գնահատելով նրանց գործունեությունը, այն համարել են ազգանվեր, ազգանպաստ: Կանանց հասարակական մասնակցության նմանօրինակ փորձը հիմք ծառայեց հետագայում՝ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), նրանց հասարակական-

քաղաքական ոլորտ ներգրավելու համար: Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավորներից 3-ը կանայք էին:

Խորհրդային կարգերի հաստատման և խորհրդային սոցիալ-տնտեսական քաղաքականության (կոլեկտիվացում, ինդուստրացում) իրագործման ժամանակաշրջանում (1920-1939 թթ.) աշխատուժի պակասի առկայությունը ստիպեց պետությանը հատուկ քաղաքականություն մշակել կանանց նկատմամբ, որով էլ պայմանավորվեց նրանց սոցիալ-քաղաքական ակտիվության նոր փուլը: Այն իր հերթին էապես փոխեց պետության սոցիալական քաղաքականության բնույթը՝ պայմաններ ստեղծելով կանանց քաղաքացիական մասնակցության համար: Սակայն կանանց ներգրավումը հասարակական ձեռնարկությունների և երկրի ղեկավարման գործում տեսական-գաղափարական առումով դիտվում էր որպես տղամարդկանց հետ նրանց հավասարության հասնելու հիմնական ուղի, իսկ գործնական մակարդակում՝ որպես կուսակցական քաղաքականության մեջ նրանց ընդգրկելու միջոց: Խորհրդային պետական քարոզչությունը շեշտում էր, որ սոցիալիզմի պայմաններում աշխատավորների ակտիվ մասնակցությունը պետության և հասարակական կյանքի կառավարմանը խորհրդային հասարակության զարգացման առանցքային ուղղություն է:

Կանանց սոցիալ-քաղաքական ակտիվության առումով բացառիկ էր նաև Հայրենական մեծ պատերազմը, որին մասնակցել է 800 հազար կին: Բարձր է գնահատվել ոչ միայն նրանց զինված պայքարը ռազմի դաշտում, այլև հերոսական պայքարը թիկունքում՝ հաստոցների մոտ, կոլտնտեսություններում, կրթամշակութային հիմնարկներում: Պատերազմի տարիներին աշխատանքային փորձ ձեռք բերած կանայք խորհրդային կառավարության կողմից շարունակվում էին դիտվել որպես «սոցիալիստական հասարակություն կառուցող» կարևոր ուժ նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում: Պետությունը հովանավորում էր կանանց քաղաքական ակտիվությունը հատուկ՝ քաղաքականու-

թյան միջոցով: Հետպատերազմյան աշխարհում խաղաղության պահպանման և նոր սկզբունքներով առաջնորդվող հասարակություններ կառուցելու ճանապարհին կանանց սոցիալ-քաղաքական կարգավիճակի փոփոխությունն անհրաժեշտություն էր, քանի որ նրանք նույնպես իրենց արյամբ էին նվաճել այդ խաղաղությունը: Այդ մասին սկսեցին բարձրաձայն խոսել, առանձին ամրագրել կանանց իրավունքները միջազգային և ներպետական մակարդակներում, ՄԱԿ-ի շրջանակներում նույնիսկ կանանց իրավունքները պաշտպանող համակարգ ձևավորվեց:

Խորհրդային պատմագրությունը որպես խորհրդային կանանց բարձր ակտիվության ցուցանիշ շեշտում է նրանց անդամակցությունը ԽՍՀՄ կոմունիստական կուսակցությանը: Պաշտոնական թվերը, անշուշտ, խոսում են կանանց ակտիվության աճի մասին, սակայն որքանով էր այդ ակտիվությունը նրանց համար հնարավորություն ստեղծում երկրի ղեկավարմանը իրոք մասնակցելու համար: Տվյալները ցույց են տալիս, որ կանայք որոշիչ դեր էին խաղում կուսակցական շարքային օղակներում, որոնք խորհրդային ուսումնասիրողները համարում էին հիմնական օղակներ, քանի որ դրանք ավելի մոտ էին կանգնած ժողովրդին: Եթե հաշվի առնենք, որ կուսակցությունը բաղկացած էր 4 աստիճաններից, ապա կանանց թվաքանակը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. կանայք շատ էին շարքային կուսակցականների կազմում, կուսակցական ցածր օղակներում՝ կուսկոմներում, կուսակցական բյուրոներում, իսկ կուսակցական խմբային կազմակերպություններում նրանք արդեն փոքրամասնություն էին: Կանանց հասարակական-քաղաքական մասնակցությունն ավելի իրական էր հասարակական կազմակերպությունների կազմում, մասնավորապես՝ արհմիություններում և կոմերիտմիությունում: Սոցիալիստական պետության կայացման բոլոր փուլերում կուսակցությունը որոշիչ ուժ էր համարում արհեստակցական միություններն ու նրանցում կանանց գործունեությունը: Նրանց գործունեության մեջ էր մտնում պայքարը աշխատանքի արդյունավետության բարձրացման և որակի համար, սոցիալիստական մրցակցության զարգացումը, աշխատանքային կարգուկանոնի ամրապնդումը, աշխատաժամի խնայողությունը, աշխատանքային պայմանների բարելավումը, հանգստի կազմակերպումը, անհատի բազմակողմանի, ներդաշնակ զարգացումը: Կանայք լայնորեն

ներկայացված էին արհմիութենական ղեկավար մարմիններում:

Չնայած կանանց նշված հասարակական-քաղաքական ակտիվությանը՝ նույնիսկ սոցիալիզմի ջատագովներն էին ստիպված ընդունելու, որ պահպանվում էր խտրականությունը կանանց նկատմամբ, հատկապես իշխանության լծակներ ունեցող պաշտոններ զբաղեցնելու հարցում: Սակայն անվիճելի է այն իրողությունը, որ մասնակցելով կուսակցական կյանքին և ծավալելով լայն հասարակական գործունեություն՝ խորհրդային կանայք ուղղորդում էին պետության սոցիալական քաղաքականությունը: Ու թեև ավտորիտար վարչակարգի պայմաններում ցանկացած լեզու գործող հասարակական շարժում ենթակա էր տիրող գաղափարախոսությանն ու առաջնորդվում էր «վերևից» թելադրվող նպատակներով ու խնդիրներով, կանանց գործունեությունը, այսուհանդերձ, նպաստեց նրանց ինքնաարժեքմանը, հասարակական-քաղաքացիական մասնակցության փորձի կուտակմանը, ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների լուծմանը:

1985 թ. ԽՍՀՄ «ժողովրդավարացման» քաղաքականության իրագործման և ավելի ուշ՝ Հայաստանի երրորդ հանրապետության հռչակման հետ կապված՝ կանանց սոցիալ-քաղաքական վիճակը լուրջ փոփոխություններ կրեց: Նորանկախ Հայաստանի առջև ծառայած խնդիրներն այլ բնույթ ունեին, մասնավորապես՝ ստեղծել ժողովրդավարական պետություն՝ քաղաքացիական հասարակությամբ: Անշուշտ, հայ կանայք, իրենց նախկին փորձից ելնելով, չէին կարող անհաղորդ մնալ նոր պետականության կերտման գործընթացին և բազմակուսակցական համակարգի ընձեռած հնարավորություններից օգտվելով՝ ընդգրկվեցին նոր զարգացող գործընթացներին: Նրանց մասնակցությունը երկրի բոլոր ոլորտների զարգացմանը այսօր համարվում է քաղաքացիական հասարակության ձևավորման գրավական և անբաժանելի մաս: Նաև կանանց ակտիվության աստիճանով է որոշվում ժողովրդավարական գործընթացների արդյունավետությունն ու սոցիալական արդարության առկայությունը տվյալ երկրում: Կանանց հասարակական գործունեությունը Հայաստանում այսօր տարբեր ուղղվածություն ունի, սակայն մեկ նպատակ՝ օժանդակել իրավական պետության ստեղծմանը, ժողովրդի խաղաղ ու բարեկեցիկ կենսակերպի ապահովմանը:



Լրատուի այս համարի հրատարակումը հնարավոր դարձավ

**ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԳԱԿՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԳԻՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ**

աջակցության շնորհիվ

**«Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում
նոր մարտահրավերներ և ռազմավարություն»**

ծրագրի շրջանակներում

**Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան
իր երախտագիտությունն է հայտնում հեղինակներին
հոդվածները փրամադրելու համար:**

«Համալսարանական կրթությամբ կանայք»

լրատուի խմբագրական կազմ՝ *Ջենմա Հասրաթյան, Իրինա Շահինյան,
Անահիտ Հարությունյան*

Խմբագիր՝ *Անահիտ Հարությունյան*

Համակարգչային օպերատոր՝ *Իրինա Շահինյան*

Ձեռավորող՝ *Արթուր Բոյախչյան*

✉ Երեւան 0002

Սարյան 22

Հեռ. /37410/53-68-02

Ֆաքս /37410/53-67-92

E-mail: jemma.hasratyan@gmail.com

Տարածվում է անվճար

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի տպարանում:
Երեւան, Ավան, Դավիթ Սալյան 45,
Հեռ. 54-49-82 (գրասենյակ), Հեռ. 62-38-63 (տպարան)